



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4890

284

L-88

1904

2010

2001

5995
~~282~~

Դ-ր Մ. ԼՈՒԹԵՐԻ

ՓՈՔՐԻԿ


362

ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆԸ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ԵՒ

ԲԱՅԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ФИЛОСОФИЧЕСКИХ
НАУК
Академии Наук
СССР

ԲԱԳՈՒ

Տպարան Յ. Գ Դիլլաուարեանի
1904.

2-84
-88

75

հոտ
7005

5995
284
L-88

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ФИЛОСОФСКИХ
НАУК
АКАДЕМИИ НАУК
СССР

ԴՐ Մ. ԼՈՒԹԵՐԻ

Փոքրիկ Քրիստոնեականը

Սուրբ Գրքի վկայութիւններով
և
բացատրութիւններով:

Ծ-րա Մ. Լյութերա

МАЛЫЙ КАТЕХИЗИСЪ

Съ текстами изъ Св. Писанія
и
объясненіями.

Երևույթ

ԵՍՊՈՒՆ

Տպարան Յ. Գ. Գիւրաշարեանի:
1904.

Типографіе Грозненскаго
1904.

Дозволено цензурою, 30-го Января 1904 г.
г. Тифлисъ.

49834-ահ



36397-66

Մի քարոցիչ, տեսնելով, որ իր ունկն-
դիրներից մէկը բոլորովին անտարբերու-
թեամբ է վերաբերվում և շատ քարոզներ
լսելուց լետոյ, հոգևոր կեանքի նշույլ անգամ
չէ ցոյց տալիս, — հարցրեց նրան. Մարդ, դու
քրիստոնեայ ես: — Քրիստոնեայ եմ, պատա-
սխանեց նա: — Ի՞նչ ապացոյց ունիս սորա
համար, — հարցրեց քարոզիչը: — Ես քրիստո-
նէական եկեղեցոյ մէջ եմ ծնուած, ուրեմն
և վաղուց քրիստոնեայ եմ: — Իսկ եթէ պա-
տահմամբ մի գոմի մէջ ծնուած լինէիր, մի-
թէ այն ժամանակ ճի կ'լինէիր: — Խեղճը
չկարողացաւ մի բան պատասխանել:

Սիրելիս, տուէլ գուցէ կեանքումդ մի
քանի անգամ այդպիսի խօսքեր ասած լինիս,
տեսնում ես հիմա, որ սխալ ես, — ուրեմն
մտածիր մի քիչ, թէ ինչ է քրիստոնէու-
թիւնն և լետոյ քննիր ինքդ քեզ՝ թէ դու
ինչ ես:

Ի հարկէ ամենից պարզ կերպով Աստուա-
ծաշունչը կարող է քեզ սովորեցնել՝ թէ ինչ

է հարկաւոր ճշմարիտ քրիստոնեայ լինելու համար,—ուրեմն ամենից առաւել կարգա նրան,—բայց այս փոքրիկ գրքի նպատակն ևս սա է, որ քեզ համառօտ կերպով ցոյց տայ՝ թէ ինչ է քրիստոնէութիւնը: Գորա համար էլ այս գրքի վերնագիրն է «Քրիստոնէական»:

—Թող այս գիրքը աւետարականներին իբրև ուղղեցոյց ծառայէ, մանաւանդ մեր սիրելի երեսաներին, որոնք դեռ չեն կարող սուրբ գրքի իմաստը հասկանալ: —Աստուած օրհնէ այս աշխատանքը, որպէս զի շատ հոգիների փրկուելու համար ծառայէ: —

Թէև այս քրիստոնէականը կոչվում է «Մարտինոս Լուծերի» քրիստոնէականը, բայց մի և նոյն իրաւունքով կարող ենք ասել «Քրիստոսի», «Պողոսի», «Պետրոսի» և այլն կամ առ հասարակ «Աստուծոյ խօսքի քրիստոնէականը»: —

Տէր, քո օրհնութիւնն ենք խնդրում.

Ամէն:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն:

Գ ու ի՞նչ է ս.

Ես քրիստոնեայ եմ.

Ինչո՞վ էս քրիստոնեայ.

Մկրտութեամբ:

Բաւակա՞ն է այդ.

Ո՛չ. մկրտութեան ուխտը կեանքիս մէջ ևս պիտի կատարեմ:

Երբոր մակեդոնացոց կայսեր Աղէքսանդրը, որի անունը թարգմանուած «մարդկանց յաղթող» է նըշանակում, պատերազմի ժամանակ փոսաւ մի շատ երկչոտ զինուոր, բարկացած հարցրեց նրան. ա՛նունդ ի՞նչ է.—Աղէքսանդր. պատասխանեց դողալով զինուորը: Կայսրը վրդողուած ասած. կամ այդ անունիցդ զրկուիր, կամ էլ խկապէս Աղէքսանդր դարձիր, այս ինքն մարդկանց յաղթող, քաջ եղիր:

Բացի մկրտութիւնից, էլ ի՞նչ է հարկա-
ւոր ճշմարիտ քրիստոնեայ լինելու հա-
մար.

Կենդանի հաւատ:

Ի՞նչ է կենդանի հաւատը.

Փրկութիւնը սրտանց ընդունել և փրկչի
հետ կապուած լինել.

Յովհան. 15 զլ. 6 հ.—Նթէ մէկն ինձանում չէ
մնում, նա դուրս կ'ըցուի ինչպէս ճիւղը,
և կ'չորանայ և ժողովում են նորանց և
կրակի մէջ զցում, և այրվում է:

Ի՞նչ բանի մէջ է կայանում փրկութիւնը.

Միմիայն Յիսուս Քրիստոսում:

Գործք առաք. 4 զլ. 12 հ.—Նե էլ մի ուրիշ ոչ մէ-
կով փրկութիւն չ'կայ. որովհետեւ
ուրիշ անուն էլ չ'կայ երկնքի ներքեւ
մարդկանց տրուած, որով կարելի
լինի մեզ փրկուիլ:

Ո՞ւր կարող ես գտնել ամենաուղիղ ճա-
նապարհացոյցը փրկութեան համար.

Սուրբ գրքի մէջ, որը կոչվում է Աստուա-
ծաշունչ:

2. Տիմութ. 3. զլ. 15 հ.—Նե որ մանկութիւնիցդ
սուրբ գրքերը ղիտես, որ կարող են
քեզ իմաստուն անել փրկութեան հա-
մար այն հաւատքի ձեւովն որ Քրիս-
տոս Յիսուսումն է:—

Բայց շատերը ասում են 'թէ Աստուա-
ծաշնչի մէջ սուրբ խօսքեր չ'կան. Աստ-
ուածաշունչն էլ մի հասարակ հին գիրք
է: Դա ի՞նչպէս է.

Աստուածաշունչը մի առանձին գիրք է, որի
նմանը չ'կայ:

Յովհան. 7 զլ. 16 և 17 հ.—Իմ վարդապետութիւնն
իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: Նթէ մէ-
կը կամէնում է նորա կամքն անել, նա
կ'իմանայ այս վարդապետութեան հա-
մար, թէ արդեօք Աստուածանից է, կամ
թէ ես իմ անձիցն եմ խօսում:

Ի՞նչ է Աստուածաշունչը.

Աստուծոյ խօսքն է, որը Աստուծոյ մարդի-
կը նորա հոգուցը ներշնչուած գրել են:

2. Պետր. 1 զլ. 21 հ.—Սուրբ Հոգուցը շարժուած
խօսեցան Աստուծոյ մարդիկը:—

Աստուածաշնչին ուրեմն ի՞նչպէս պիտի
նայենք.

Իբրև մի փառաւոր գանձի, որը ամբողջ աշխարհքից թանգագին է:

Սաղմոս. 19 գլ. 10 հ.—Տիրոջ պատուիրանքները աւելի ցանկալի են քան թէ ոսկի և քան թէ շատ մաքրուած ոսկի. էլ աւելի քաղցր են քան թէ մեղր և մեղրահաց:—

Ի՞նչ է սորա համար ամեն մի քրիստոնեայի սուրբ պարտաւորութիւնը.

Ամեն օր աղօթելով և խորհելով Աստուծոյ խօսքը կարգալ:

Յեսու. 1 գլ. 8 հ.—Այս օրէնքի գիրքը քո բերանիցը չ'հեռանայ, այլ գիշեր և ցերեկ նորա վերայ մտածես, որ պահես և կատարես բոլոր նորա միջի գրուածի պէս:

Յովհան. 5 գլ. 39 հ.—Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, և նորանք են որ ինձ համար վկայում են:—

Ս. յգպէս են վարվում բոլոր մկրտուած քրիստոնեաները.

Մեծ մասամբ ոչ. շատերը միայն կիւրակիօրերն են կարգում և շատերին մինչև ան-

գամ արգելում է այդ իրանց դաւանութիւնը:

Հասկան՞ում է մարդ բոլորը, ինչ որ Աստուածաշնչում գրուած է.

Ամենազլխաւորը, փրկութեան մասին, հասկանում է, իսկ մանրամասն ոչ:

Ուրեմն ինչ պիտի անէ կարգացողը.

Քացի սուրբ գրքից մի լաւ բարոգագիրք, տարուան արած կամ Աստուածաշնչի բացազրութիւն ևս կարգայ:

Գործք առաք. 8 գլ. 31 և հ.—Եւ Փիլիպպոսն աւսաց. հասկան՞ում ես արդեօք կարգացածդ: Նա էլ ասեց՝ ինչպէս կ'կարողանամ, եթէ մէկը չ'առաջնորդէ ինձ:—

Ըրբ գըրք ինչպէս է բաժանվում.

Յին և նոր կտակարանների:

Ապա կտակարանը ինչ է.

Կտակարան նշանակում է ուխտ. այսինքն հին կտակարան այն ուխտն է, որը Աստուած Մովսէսի միջոցով կապեց Իսրայէլ

ժողովրդի հետ, իսկ նոր կտակարան այն ուխտն է, որը Աստուած Յիսուս Քրիստոսով կապեց մարդկանց հետ:

Կտակարանները ուրիշ կերպով էլ ի՞նչ պէս են կոչվում.

Օրէնք և Աւետարան:

Ի՞նչ է օրէնք.

Այն, որ Աստուած իբրև իւր կամբը հաստատել է, նախ և յառաջ 10 սուրբ պատվիրանները:

Ի՞նչ է աւետարան.

Քարի լուր Յիսուսի մասին, որը մեզ փրկուում է:

Աստ՛ հին կտակարանի գրքերը:

Ծննդոց, Ելից, Ղևտացոց, Թուոց, Երկրորդ Օրինաց, Յեսուի, Դատաւորաց, Հռութի, Ա. Թագաւորաց, Բ. Թագաւորաց, Գ. Թագաւորաց, Դ. Թագաւորաց, Ա. Մնացորդաց, Բ. Մնացորդաց, Եզրասի, Նէեմեայի, Եսթերի, Յոբի, Սաղմոս, Աւակաց, ժողովող, Երգ Երգոց:—Մարգարէութիւն—Եսայիայի, Երե-

միայի, Երեմիայի ողբեր, Եղեկիէլի, Դանիէլի, Ովսէէի, Յովէլի, Ամովսի, Աբդիայի, Յովնանի, Միքիայի, Նաումի, Ամբակումի, Սոփոնիայի, Անգէի, Զաքարիայի, Մաղաքիայի:

Աստ՛ նոր կտակարանի գրքերը:

Աւետարան—Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու, Գործք Առաքելոց: Թուղթ Պողոսի—առ Հռովմայեցիս, Ա. Կորնթացիս, Բ. Կորնթացիս, Դաղատացիս, Եփեսացիս, Փիլիպպեցիս, Կողոսացիս, Ա. Թեսսաղոնիկեցիս, Բ. Թեսսաղոնիկեցիս, Ա. Տիմոթէոս, Բ. Տիմոթէոս, Տիտոս, Փիլիմոն, Եբրայեցիս: Թուղթ—Յակոբոսի, Ա. Պետրոսի, Բ. Պետրոսի, Ա. Յովհաննէսի, Բ. Յովհաննէսի, Գ. Յովհաննէսի, Յուդայի, Յայտնութիւն:—

Ե՛լ ինչ գրքեր են ընդունվում սխալմամբ իբրև սուրբ գրքեր.

Մի քանի գաւանդութիւններ ընդունում են անկանոն գրքեր, ապօքրիֆներ, այս ինքն ծածուկ գրքեր, որոնք ընդհանուր պաշտօնում Հրէաները չէին կարգում: Սրանք էլ օղտաւէտ և լաւ են կարգալու համար, միայն Աստուծոյ խօսք չեն. նրանցում կան

մի քանի ծուռ մտքեր, օրինակի համար, իբրև թէ ողորմութիւն տալով մեղքերը ջնջվում են:

Ի՞նչ է պատմում հին կտակարանը.

Նա պատմում մեզ՝ թէ Աստուած սկզբում, այս ինքն մօտաւորապէս 6000 տարի սրանից յառաջ 6 օրուայ ընթացքում ստեղծեց երկինքը և երկիրը ու մարդկանց—Ադամին և Եւային: Սորա յօժար կամքով իրանց սրտերը Աստուծոյն պիտի նուիրէին և իմանալով թէ պարտէզում մի ծառ կայ, որի միջոցով կարող էին Աստուծոյ շնորհքից ընկնել, պիտի հնազանդութիւնով ապացուցանէին թէ հաստատապէս կամենում են իրանց սրբութիւնը պահել: Իսկ օձը, որով սատանան խօսում էր, խաբեց մարդկանց, նորանք էլ կերան արգելուած ծառի պտուղը:—Սա եղաւ առաջին մեղքը երկրի վրայ և սորանից կորուստի ալիքները թափուեցան բոլոր մարդկանց վերայ: Նոյն օրը մարդիկ մեռան հոգևոր մահով և Աստուած յայտնեց նորանց, որ մարմնաւոր մահն էլ գալու է:

Հռովմայ. 5 գլ. 12 հ.—Սորա համար՝ ինչպէս մէկ

մարդի ձեռովը մեղքը մտաւ աշխարհքը, և այն մեղքովն էլ մահը. և այսպէս մահն ամեն մարդկանց վերայ տարածուեցաւ, ըստ որում ամենքը մեղանշեցին:—

Թո՞ղեց Աստուած մարդկանց իրանց կորուստի մէջ.

Ոչ. որպէս զի նորանց յաւիտենական մահից ազատէ, նա խոստացաւ նորանց մի փրկիչ, որը օձի, սատանայի, նրանց թըշնամու գլուխը պիտի ջախջախէր:

Ծննդոց. 3 գլ. 15 հ.—Եւ ևս թշնամութիւն եմ դնում քո և կնոջ մէջտեղը, և քո սերունդի և նորա սերունդի մէջտեղը. նա քո գլուխը ջախջախէ, և դու նորա դարչապարը խայթէս:—

Արդեօք բոլոր մարդիկ ուրախութեամբ ընդունեցին այդ աւետիքը.

Ոչ, միայն բարեպաշտները կարօտութեամբ 4000 տարի սպասում էին փրկչին, իսկ մնացածները անհոգ էին, սորա համար էլ Աստուած թողեց նորանց գնալ իրանց ծուռ ճանապարհներով և իրան համար մի ժողովուրդ ընտրեց, այսինքն Իսրայէլը, որին նա առանձին կերպով յայտնում էր իրան:

Ո՞ր քաղցր խոտուածներովն էր մխիթարում Աստուած իր ժողովուրդին.

Աբրահամին, Իսրայէլացոց նախահօրը, որը ապրում էր Քրիստոսից 2000 տարի յառաջ, ասած նա.

Ծննդոց. 12 գլ. 3 հ.—Եւ երկրի բոլոր ազգերը քեզանով կ'օրհնուին:

Սյդ խոտուածն ժառանգում է Աբրահամից Իսահակը և սորա որդին Յակոբից նորա 12 որդկերանցից մէկը Յուզան, որին Աստուած ասում է.

Ծննդոց. 49 գլ. 10 հ.—Չ'պակասէ իշխանութիւնը Յուզայից, և օրէնստիրը նորա ոտքերի մէջտեղից. մինչև որ Սելովը դայ. և նորանն է ժողովուրդների հնազանդութիւնը.

Մովսէսի ժամանակ, որը 1500 տարի Քրիստոսից յառաջ էր ապրում, Բաղասմ մարգարէանում է և ասում.

Թուոց. 24 գլ. 17 հ.—Յակոբից մէկ Աստղ է ծագում, և Իսրայէլից մի գաւազան է բարձրանում. և Մովսէսի կողքերին է գարկում, և Սեթի բոլոր որդիներին բնաջինջ անում.

Իսրայէլի ո՞ր թագաւորն է համարվում Մեսսիայի նախապատկերը.

Դաւիթ թագաւորը, որը ապրում էր 1000 տարի Քրիստոսից յառաջ: Յիսուս կոչվում է Դաւթի որդի, այն, մինչև անգամ Դաւիթ (Նզեկիէլ 37 գլ. 24 հ.): Դաւթի նման Յիսուսն էլ Բեթլէհէմում ծնուեցաւ:

Մէքեա. 5 գլ. 2 հ.—Եւ դու, ով Բեթլէհէմ Նփրաթա, փոքր ես Յուդայի հազարաւորների մէջ, սակայն քեզանից պիտի դուրս գայ ինձ համար նա որ իշխան լինի Իսրայէլին, և նորա ելքը վաղուց՝ յաւիտեանական օրերից է:—

Ո՞վ է այնքան կենդանի խօսքերով նըկարագրում Յիսուսի չարչարանքը, որ կարծես՝ թէ գրող ինքը փրկչի խաչի մօտ կանգնած լինի.

Եսայիայ մարգարէն:

53 գլ. 4 և 5 հ.—Յիրաւի նա մեր ցաւերը վեր առաւ, և մեր վիշտերը բեռնեց իր վերայ, բայց մենք նորան պատուհարուած էինք համարում, Աստուածանից զարկուած և նկուն եղած: Բայց նա մեր մեղքերի համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւնների համար հար-

ուածուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը նորա վերայ եղաւ և նորա վերքերովը մենք բժշկուեցանք:

Ի՞նչ է պատմուում նոր կտակարանի 4 աւետարաններում մեր փրկչի կեանքի մասին.

Յիսուս Քրիստոսը, որը յաւիտենից Աստուծոյ մօտ էր՝ մօտաւորապէս 1900 տարի սորանից առաջ մարդ եղաւ և Բեթղէհէն քաղաքում Մարիամ կոյսից ծնուեցաւ: Նա 30 տարի նաղարէթ քաղաքում իւր խնամահօր հիւան Յովսէփի մօտ էր ապրում:— Երբոր Յովհաննէս Մկրտիչը նորա ճանապարհը պատրաստեց, նա ինքը ժողովուրդի մէջ յատնուեցաւ և սկսեց գործել:— Նորա առաջի քարոզն էր. ապաշխարեցէք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցել է: Նա իր քարոզները նշաններով և հրաշքներով էր հաստատում: Յետոյ նա ընտրեց իրան համար 12 աշակերտներ, որոնք միշտ իրան մօտ էին լինում: Թէ ժողովուրդը և թէ նորա իշխանները և դպիրները Յիսուսին մերժում էին և չհանգստացան մինչև նորան 33 տարեկան հասակում խաչ հանեցին Դողգոթայ սարի վերայ: Բայց Յիսուս

երբորդ օրում յարութիւն առաւ մեռելներից, երևեցաւ իր աշակերտներին 40 օրուայ ընթացքում և վերջապէս համարձուեց երկինք, որտեղից Պենտէկոստէի օրը իր ժողովուրդի վերայ Սուրբ Հոգին թափեց:

Ի՞նչ է պատմում գործք Առաքելոցը.

Նա պատմում է, ինչպէս աւետարանը տարածուեց ամբողջ աշխարհքի վերայ:

Ի՞նչ են ցոյց տալիս մեզ Առաքելոց թղթերը.

Նրանք ցոյց են տալիս, ինչպէս աւետարանը ժողովուրդների կեանքում կատարվում է և սխալ վարդապետութիւնները յաղթում:

Ի՞նչ նպատակի է ծառայում Յովհաննէսի Յայտնութեան գիրքը.

Նա բացում է ապագան մեզ համար, նկարագրում է Քրիստոսի յաղթութիւնը բոլոր իշխանութիւնների վերայ և Քրիստոսի նորոգուած արքայութիւնը աշխարհքի վերայ:

Արդեօք կարո՞ղ ես Ս. Գիրքը կարդալով իսկոյն անսխալ և պարզ կերպով գտնել ճանապարհը դէպ ի Աստուած.



36397-66

Ոչ որովհետև բոլոր դաւանութիւնները շատ թէ քիչ Ս. Գրքի վերայ են հիմնւում, սակայն նորանցից ամեն մէկը ջոկ կերպով է բացաղրում այդ ճանապարհը: Սրինակի համար՝ կաթոլիկները և լուսաւորչականները ասում են՝ թէ մարգս արդարանում է Աստուծոյ առջև հաւատքով և գործքերով. Բապտիստները ասում են՝ թէ դարձի եկած մարդը նորից պիտի մկրտուէ (գորա համար նրանք մկրտչականներ են կոչւում). Աւետարանական—Լութերականները ասում են՝ թէ մարդը փրկվում է միայն հաւատքով:

Ո՞րտեղ է գրուած աւետարանական—
Լութերական եկեղեցոյ դաւանութիւնը
Համառօտ և հասկանալի կերպով.

Փոքրիկ քրիստոնէականի մէջ:

Ո՞վ է նորա հեղինակը.

Գոկտոր Մարտինոս Լութեր:

Ի՞նչ կարող ես պատմել Լութերի մասին.

Լութերը ծնուել է Նոյեմբերի 10-ին 1483 թ. Էյսլինգեն քաղաքում: Հոգոյ խաղաղութիւն

որոնելով այն ժամանակուայ սովորութեան համեմատ վանք է մտել: Չատ ծոմ պահելուց և իր անձը չարչարելուց յետոյ, էլը Քրիստոսը նորա հոգոյ առջև երեացել է իբրև մի դատապարտող դատաւոր: Մի եղբայր, նորա ցաւերը և վիշտերը տեսնելով, ասել է նորան՝ հաւատա մեղքերի թողութեան, այսինքն իմացիր, որ մեղքերի թողութիւն չես կարող ձեռք բերել քո բարի գործքերով,—այլ սրտանց հաւատացիր նորան: Այդ ճանապարհով գտաւ նա հոգոյ խաղաղութիւնը:—

Հոկտեմպերի 31-ին 1517 թ. Լութերը իր 95 նախադասութիւնները խփեց Վիտտենբերգի եկեղեցոյ դռան վերայ. այդ նախադասութիւններով նա ապացուցանում էր կաթոլիկ դաւանութեան սխալները և պակասութիւնները: Դա բարեկարգութեան ըսկիզբն է եղել:—Նորա և նորա անունով կոչուած եկեղեցոյ դաւանութիւնը հետեւալն է՝ մարգս արդարանում է միայն հաւատքով: Հաւատոյ հարցերը պիտի վճռուին միայն Աստուծոյ խօսքի հիման վերայ, ոչ թէ պապերի, մարտիրոսների և ուրիշ մարդկանց խօսքերի հիման վերայ, ինչպէս կաթոլիկ

եկեղեցին է ասում,— ոչ էլ մարդուս ներքին զգացման հիման վերայ, ինչպէս շատ ազանդաւորներ են ասում:— Գորա համար էլ Լուծերը թարգմանեց Աստուածաշունչը երբայեցերէնից և յունարէնից, որպէս զի ամեն մարդ իր մայրենի լեզուով կարգայ այդ ամենակարևոր դիրքը: 1529 թ. Նա գրեց իր համառօտ քրիստոնէականը, որում պարզ կերպով բացաղբում է, թէ մարդ ինչ պիտի հաւատայ, որպէս զի ուղիղ ճանապարհով դէպ ի Աստուած գնայ:

— Մի կաթուղի կ'ըսանայ չ'իմանալով, թէ ո՞վ է այդ գրքի հեղինակը, կարդալուց յետոյ բացականչեց՝ երանելի են այն ձեռքերը, որոնք գրել են այդ սուրբ գիրքը:—

— Լուծերը մեռաւ էյսլերեն քաղաքում Փետրուարի 18-ին 1546 թ.—

Քրիստոնէականը ինչպէս է բաժանվում.

5 գլխաւոր մասի. առաջի գլխաւոր մասը խօսում է օրէնքի մասին, որը մեզ մեր մեղքը ցոյց է տալիս և մեր դաստիարակն է դէպի Յիսուս Քրիստոսը:— Բ. գլխաւոր մասը խօսում է քրիստոնէական հաւատոյ մասին (հաւատամքի մասին). Գ. գլխաւոր մասը

խօսում է Տէրունական աղօթքի (Հայր-Մերի մասին): Դ. գլխաւոր մասը խօսում է Ս. Մըկրտուլթեան և Ե. գլխաւոր մասը Ս. Հագորդուլթեան մասին:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆ.

Խնջի վրայով է խօսում առաջին գլխաւոր մասն.

Օրէնքի, կամ թէ 10 սուրբ պատուիրանների մասին, որը Աստուած 1500 տարի Քրիստոսից առաջ Մովսէսի միջոցով տուել է Իսրայէլ ժողովուրդին Սինա սարի վերայ երկու քարէ տախտակների վերայ գրուած և որը մեր Տէր Յիսուսը մեզ համար էլ իբրև սուրբ օրէնք հաստատել է:

Խնչպէս են բաժանվում 10 սուրբ պատուիրանները:

2 գլխաւոր պատուէրների. առաջին քարէ տախտակը խօսում է սիրոյ մասին դէպի Աստուած (1, 2 և 3 պատուիրաններ) և երկրորդ քարէ տախտակը խօսում է սիրոյ

մասին դէպ ի մեր մերձաւորը (4, 5, 6, 7, 8, 9, 10 պատուիրաններ):

Մատթ. 22 զլ. 37—40 հ.—Սիրիբ քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սա է առաջին և մեծ պատուիրանքը: Երկրորդն էլ սորան նման. Սիրիբ քո ընկերին քո անձի պէս: Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը և մարգարէքը:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ք Ա Ր Է Տ Ա Խ Տ Ա Կ Ը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ:

Ե՛ս եմ Եհովայ քո Աստուածը, բացի ինձանից ուրիշ աստուածներ չ'ունենաս:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է ամենից առաւել Աստուածանից վախենանք, նրան սիրենք և ապաւինենք:—

Ի՞նչ է արգելում սորանով.

Նախ կոպիտ կռակաշտութիւնը, որը հե-

թանոսներն են անում, իրանց համար կուռք շինելով, կամ թէ արևը, լուսինը, աստղերը և անասունները Աստուծոյ տեղ պաշտելով:

Նից: 20 զլ. 4 և 5 հ.—Քեզ համար կուռք չ'չի. նես, և ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վերայ՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մէկ նմանութիւնը. նորանց երկրպագութիւն չ'անես, և նորանց չ'պաշտես:

Միթէ՞ քրիստոնեաներն էլ կռակաշտութիւն են անում.

Այո՛ նուրը կռակաշտութիւն, Մամոնան, որովայնը, մարդկանց, հագնելիքը կամ ուրիշ բաներ իրանց համար Աստուած դարձնելով, կամ թէ նորանց առաւել սիրելով քան թէ Աստուծոյն:

Մատթ. 6 զլ. 24 հ.—Ոչ ով չէ կարող երկու տէրերի ծառայել. որովհետև կամ մէկին կ'ատէ և միւսին կ'սիրէ, կամ մէկին կ'մեծարէ և միւսին կ'արհամարէ: Չէք կարող Աստուծուն ծառայել և մամոնային:—

Փիլիպպեց. 3 զլ. 19 հ.— Որոնց վերջը կորուստ է, որոնց Աստուածն իրանց որովայնն

է. և փառքը՝ իրանց ամօթն. որոնք
երկրաւոր բաներն են մտածում:—

Մատթէոս. 10 գլ. 37 հ.—Ով որ հօրը կամ մօրը ինձա-
նից աւելի է սիրում, նա ինձ արժանի
չէ. և ով որ որդին կամ աղջիկն ինձանից
աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ:

Ա. Յովհանն. 2 գլ. 15 և 16 հ.—Մի սիրէք աշ-
խարհքը, և ոչ էլ այն ինչ որ աշ-
խարհքի մէջ է: Նթէ մէկն աշխար-
քը սիրէ, Հօր սէրը նորանում չէ.
որովհետև ինչ որ աշխարհքումն է,
մարմնի ցանկութիւնը, աչքերի
ցանկութիւնը և այս կեանքի ամ-
բարտաւանութիւնը, Հօրիցը չէ,
այլ աշխարհքիցն է:

Ի՞նչ է հրամայում այս պատուիրանը.

Որ մենք ամեն բանից առաւել Աստուածա-
նից վախենանք, նորան սիրենք և ապաւի-
նենք:

Ի՞նչ է նշանակում Աստուածանից վա-
խենալ.

Նորա մեծութիւն յիշել և զորա համար չյօ-
ժարուել գործելու ոչ մի մեղք:

Մատթէոս. 10 գլ. 18 հ.—Մի վախենաք նորա-դ

ցից, որ մարմինն սպանում են և հո-
գին չեն կարող սպանել, բայց աւելի
վախեցէք նորանից, որ կարող է հո-
գին էլ մարմինն էլ կորցնել գեհեհի
մէջ:—

Ծննդոց. 39 գլ. 9 հ.—Ուրեմն ես ինչպէս գոր-
ծեմ այս մեծ շարութիւնը, և Աստուծոյ
դէմ մեղանչեմ:

Ի՞նչ է նշանակում Աստուծոյն ամենից
առաւել սիրել.

Նորան ամենաբարձր բարիքը համարել,
ձգտել նորա հաղորդութեան և նորա պատ-
վիրանները յօժարութեամբ կատարել:

Սաղմոս. 73 գլ. 25 և 26 հ.—Ո՛վ ունիւմ ես երկն-
քումը, և քեզանից ջոկ բան չեմ ուզում
երկրի վերայ: Թէև մարմինս ու սիրսս
մաշուին, Աստուած յաւիտեան իմ սրտի
ոյժն ու իմ բաժինն է:

Սաղմոս. 42 գլ. 1 և 2 հ.—Ինչպէս որ եղջերուն
փափաղում է ջրերի առունների, այնպէս
էլ իմ անձը փափաղում է քեզ, ով Աս-
տուած: Իմ անձը ծարաւ է Աստուծուն՝
կենդանի Աստուծուն. կ'ըր կ'գամ և նո-
րա երեսի առաջին կ'երևամ:

Ա. Յովհանն. 5 գլ. 3 հ.—Որովհետև սա է Աս-
տուծոյ սէրը որ նորա պատուիրանք-

ները պահենք. և նորա պատուիրանքն՝նրը ծանր շին:—

Մի բարեպաշտ քրիստոնեայի չարչարում էին որպէս զի Քրիստոսին ուրանայ: Նորա կինը ու զաւակները լալով կանգնած էին նորա առաջև: Նորան հարցրին, մի՞թէ բոլորովին սէր չո՞ւնիս դէպ ի քո ընտանիքդ: Շատ ունիմ՝ ասաց նա: Եթէ ունենայի աշխարհքի բոլոր ոսկիները, ուրախութեամբ կ'տայի, միայն թէ ընտանիքիս հետ ապրելու բախտը ունենայի, թէ կուզ բանդումն էլ լինէր:— Ապա՛ ինչո՞ւ չես ուրանում Յիսուսին, որ կարողանաս քո սիրելի ընտանիքիդ հետ բախտաւոր ապրել:— Ա՛յ, ասաց նա, այդքանով չեմ կարող բախտս գնել: Թէև գերդաստանս աշխարհքի բոլոր գանձերից աւելի եմ սիրում, բայց Յիսուսին ընտանիքիցս էլ առաւել յեմ սիրում:—

Ի՞նչ է նշանակում Աստուծոյն ամենից առաւել ապաւինել.

Նորա վրայ իր բոլոր յոյսը դնել, և ոչ թէ փոյի, առողջութեան, գիտութեան կամ մարդկանց վրայ, և հաստատ իմանալ, որ նա ամեն բանի բարի վախճան կ'տայ:

Ա. Պետրոս. 5 զլ. 7 հ.—Ձեր բոլոր հոգսը նորա վրայ գցեցէք, որովհետև նա հոգս է անում ձեզ համար:—

Երեմիա. 17 զլ. 5 և 7 հ.—Այսպէս է ասում Տէրը. Անիծեալ լինի այն մարդը, որ մարդի է ապաւինում, և մարմինը իրան բազուկ շինում և իր սրտովը խոտորում է Տէրիցը.....Օրհնեալ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապաւինում, և Տէրն է նորա յոյսը:

Սաղմոս. 37 զլ. 5 հ.—Տիրոջը յանձնիր քո ճանապարհը՝ և նորան յուսա. և նա կ'կատարէ:—

Պահում է արդեօք քրիստոնեաների մեծամասութիւնը այդ պատուիրանը.

Ոչ՝ որովհետև նորանք երկրայինը աւելի են սիրում քան թէ Աստուծոյն, նորա պատուիրանները արհամարում և նեղութեան մէջ տրտնջում են:—

ԵՆԵՈՐԿ ՊԱՏՈՒԻՄԱՆԸ:

Քո Եհովայ Աստուծոյ անունը դարտակ տեղը չ'արտասանես, վասն զի Եհովան իր

անունը ի զուր բերանը առնողին անպատիժ չի թողիլ:

Սա Ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ նորա անունով անէծք չ'տանք, երգում չ'ուտենք, կախարդութիւն չ'անենք, սուտ չ'խօսենք և չ'խաբենք, այլ նորան ամեն նեղութեան մէջ օգնութիւն կանչենք, աղօթք անենք, գովենք և գոհութիւն տանք: —

Ի՞նչ է Աստուծոյ անունը.

Ամեն սուրբ խօսք, որով Աստուած ինքը յայտնում է մեզ իւր յատկութիւնները նորան յիշելու համար. բայց նախ և յառաջ Աստուած բառը և այն բաները, որոնք Աստուծոյ հետ կապ ունին, ինչպէս՝ երկինք, Աստուածաշունչ, խորհուրդներ, հրեշտակ և այլն:—

Ի՞նչ է արգելում այդ պատուիրանում.

Աստուծոյ անունը դարտակ տեղը արտասանելը՝ այսինքն արտասանել առանց նորա վրայ խորհելու. կամ էլ նորա անունը

արտասանելով անէծք տալ, երգում ուտել, կախարդութիւն անել, սուտ խօսել և խաբել:

Մատթէոս. 12 գլ. 36 հ.—Բայց ասում եմ ձեզ, թէ ամեն դատարկ խօսքի համար, որ մարդիկ խօսեն, դատաստանի օրը համար պիտի տան:

Ի՞նչ է նշանակում անէծք տալ.

Աստուծոյ դէմ շար բան խօսել, կամ Աստվածանից իրան համար, ուրիշների կամ անասունների համար շարիք խնդրել, առ հասարակ ամեն տեսակ հայհոյանք արտասանել:

Յակոբ. 3 գլ. 9 և 10 հ.—Բերանով օրհնում ենք Աստուած և Հայրը, և նորանով անիծում ենք մարդկանց, որ Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են: Միևնոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւն և անէծք. պէտք չէ եղբարքս, որ սա այսպէս լինի:

Մի կաշեգործ իր սպրանքը զետում լուանալիս՝ տեսաւ, որ սաստիկ անձրևը մօտենում է: Բարկացած վերկացաւ իր տեղից, սպառնալով մեկնեց իր ձեռքը դէպի երկինք

և բացականչեց. Էյ, դու, հէնց հիմա ես ան-
 ձրե ուղարկում, երբ նա ինձ պէտք չէ: Իբ-
 րև պատասխան սարսափելի որոտաց երկինքը
 և կայծակի հարուածը փչացրեց վարպետի
 աջ ձեռքը. հայհոյիչը ինքը կենդանի մնաց,
 բայց նրա ձեռքը իր կենաց բոլոր օրերում
 չիշեցնում էր նորան, թէ Աստուած չէ ար-
 համարհուելի. (Քաղատ. 6 գլ. 7 հ.):

Ի՞նչ է նշանակում երգում ուտել.

Աստուծոյն իբրև ասած ճշմարտութեան վը-
 կան և անճշմարտութեան դատաւորը կան-
 չել:

Մարդս երբ է մեղանչում երգում ու-
 տելով.

Երբոր նա սովորական կեանքի հանգամանք-
 ներում երգվում է, կամ երբ սուտ է երգ-
 վում, կամ իր երգումը չէ պահում:

Մատթէոս. 5 գլ. 34 և 37 հ.—Բայց ես ասում
 եմ ձեզ. բնաւ երգում մի՛ անիր. ո՛չ
 երկնքովն՝ որովհետև նա աթոռ է Աս-
 տուծոյ, և ո՛չ երկրովը՝ որովհետև
 պատուանդան է նորա ոտների.....
 Բայց ձեր խօսքը լինի, Այոն՝ այո, և
 Այն՝ ոչ. և սորանից աւելին չարիցն է:—

Եզեկիել. 17 գլ. 19 հ.—Սորա համար այսպէս է
 ասում Տէր Եհովան. կենդանի եմ ես որ
 իմ երգումը որ նա անարգեց և իմ ուղ-
 տը որ նա զրժեց, նորա գլխովը պիտի
 տամ:—

Մէկ փոքրիկ գիւղում մի մարդ կար,
 որը դատաստանի առջև երեք անգամ իբրև
 վկայ սուտ երգուեց: Երբորդ անգամ, երբ
 նա ձեռքը բարձրացրեց, խսկոյն իր ձեռքում
 սաստիկ ցաւ զգաց. շուտով ձեռքը սաստիկ
 տաքացաւ և վերջապէս ամբողջ ձեռքը փը-
 տեց: Նոյնը պատահեց միւս ձեռքին. յետոյ
 որդներ գոյացան նորա մարմնի մէջ: Այն
 ժամանակ ինքը խոստովանեց, թէ երեք ան-
 գամ սուտ երգուել է: Նորա մահը սարսա-
 փելի էր:—

Ե՞րբ է թույլ տվում երգուել.

Երբոր տէրութիւնը պահանջում է:

Երբայց. 6 գլ. 16 հ.—Իրաւի մարդիկ աւելի մե-
 ծովն են երգում անում, և նորանց բո-
 լոր հակառակութեան վճիռը բանը հաս-
 տատելու համար՝ երգումն է:

Արդեօք կան սուրբ գրքում երգման օ-
 րինակներ.

Այն, Արքահամը երզում է և Յովհաննու յայտնութեան գրքում պատմում է 'թէ ինչպէս մի հրեշտակ Աստուծոյ անունով երզվում է:—

Ի՞նչ է նշանակում կախարդութիւն անել:

Անբնական հնարներով աշխատել իմանալ այն, ինչ որ Աստուած մեզանից ծածկել է, կամ թէ աշխատել ստանալ այն, ինչ որ Աստուած մեզ մերժել է. օրինակի համար. երագներ մեկնել, թղթեր շարել, թիլիսմաններ ունենալ: Նախապաշարմունքն էլ նոյն մեղքն է:

Ղևդացոց. 19 գլ. 31 հ.—Վհուկներին մի նայէք, և հմայողներից մի հարցնէք, որ նորանցով չ'պղծուիք. ես եւ Յովան, ձեր Աստուածը:

Հին ուղտի մէջ ո՞վ գործեց այդ մեղքը.

Սաւուղ թագաւորը՝ երբոր զնաց կախարդ կնոջ մօտ:

Արդեօք քրիստոնէսաների մէջ էլ պատահում է այդ մեղքը.

Այն, և ոչ միայն տգէտ ժողովուրդների մէջ այլ մինչև անգամ բարձր դասակարգում:

Ի՞նչ է նշանակում Աստուծոյ անունով սուտ խօսել.

Աստուծոյ խօսքը ծռել. օրինակի համար, ասել 'թէ Յիսուս ընդունում է մեղաւորներին և մի և նոյն ժամանակ մնալ մեղքի մէջ, — և ուրիշին էլ մոլորեցնել:—

Ի՞նչ է նշանակում Աստուծոյ անունով խաբել.

Բարեպաշտ խօսքերով սուտը գեղեցկացնել, կեղծաւորութիւն անել՝ այս ինքն ամբարիշտ լինելով իրան հաւատացեալ ձեացնել:

Ի՞նչ օրինակներ ես գիտում.

Յակոբը Աստուծոյ անունով իւր հօրը խաբեց, Յուզան կեղծաւորութիւն էր անում. Փարիսեցիները սրտով չար էին, իսկ ժողովուրդի առջև ամենաբարեպաշտ էին ձևանում:

Ապա ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը.

Որ Աստուծոյ անունը վայել կերպով արտասանենք, այս ինքն նորան ամեն նեղութեան մէջ օգնութեան կանչենք, աղօթք անենք, նորան գովենք և գոհութիւն տանք:

Սաղմոս. 50 գլ. 15 հ.—Եւ կանչիր ինձ նեղութեան օրումը. և ես կ'ազատեմ քեզ, և դու կ'փառաբանես ինձ:

Մատթէոս. 7 գլ. 7 հ.—Խնդրեցէք և կ'տրուի ձեզ. որոնեցէք և կ'գտնեք, դուռը թակեցէք և կ'բացուի ձեզ:—

Սաղմոս. 103 գլ. 1—4 հ.—Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և բոլոր իմ ներսը՝ նորա սուրբ անունը: Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և մի մուսնար նորա բոլոր բարիքները. որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո ամեն ցավերը: Որ փրկում է քո կեանքն ապականութիւնից, որ պահում է քեզ շնորհքով և ողորմութիւնով:

Ասո՛ գոհութեան մի քանի օրինակներ:

Իսրայէլացիչ, երբոր կարմիր ծովից անց կացան գեղեցիկ երգով փառաբանում էին Աստուծոյն. Բորոտ սամարացին, երբոր Յիսուսի ձեռով բժշկուեցաւ, եկաւ նորա մօտ և երկրպագելով գոհանում էր նորանից:

Դաւիթ թագաւորն էլ հիանալի սաղմոսներով Աստուծոյ շնորհքը և անունը գովում էր:

Այդ պատուիրանում բացի արգելքից էլ ի՞նչ կալ գրուած.

Մի սպառնալիք ևս:

Ի՞նչ է ուզում Աստուած դորանով ասել.

Թէև դուք կարծում էք, որ բերանի մեղքը չնչին բան է և տէրութիւնը մինչև անգամ հազիւ թէ պատժում այդ,—բայց ես յանցաւորին անպատիժ չեմ թողիլ:—

ԵՐՐՈՐԿ ՊՍՏՈՒՐՍՆԸ:

Յիշիր հանգստութեան օրը նորան սուրբ պահելու համար:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ քարոզը և նորա խօսքը չ'արհամարենք, այլ նորան սուրբ պահենք, յօժարութեամբ լսենք և ուսանենք:

Ի՞նչ է հանգստութեան օրը.

Մէկ օր, որում մարդս իր սովորական աշխատանքից ու պարապմունքից դադարում է Աստուծոյ խօսքը լսելու և ուսանելու համար:—

Ո՞ր օրն էր Իսրայէլի հանգստութեան օրը.

Չարաթուայ եօթներորդ օրը, այս ինքն շաբաթ օրը, իբրև յիշատակ որ Աստուած այն օրում իւր ստեղծագործութիւնը վերջացրել էր:

Ապա ինչո՞ւ համար մենք քրիստոնէաներս շաբաթուայ առաջի օրը, այս ինքն կիւրակին ենք տօնում.

Որովհետև Քրիստոս այդ օրում իւր վրկագործութիւնը կատարեց, կիւրակի օրը մեռելներին յարութիւն առնելով և կիւրակի օրը Սուրբ Հոգին իւր ժողովուրդի վերայ թափելով:

Ել ի՞նչ տօներ ունինք.

Յիսուսի ծնունդ, նորա յայտնութիւն (մրկրտութիւն), զատիկ, համբարձում, հոգե-

գալուստ: Բացի սորանցից,—տարուայ ըսկիզբը և մի ընդհանուր աղօթքի օր:

Ինչպէս պէտք է կիւրակի օրը սուրբ պահենք.

Աստուծոյ տուն գնալով, քարոզը լսելով և պահելով, տանն էլ Աստուծոյ խօսքը կարդալով և սրտանց ուսանելով, սիրոյ գործեր կատարելով:

Սաղմոս. 84 զլ. 1, 2 և 10 հ.—Փանի սիրելի ենքո ընակարաները, ու Ջօրաց Տէր: Իմ անձը ցանկանում է և փափագում Տիրոջ սրահներին, իմ սիրտը և իմ մարմինը ցնծում են կենդանի Աստուծով:—Որովհետև լաւ է մէկ օր քո սրահներումը քան հազարներ. աւելի ուզում եմ դուռը պահպանել իմ Աստուծոյ տանը քան ընակիլ ամբարշտութեան տներումը:—

Կողոսաց. 3 զլ. 16 հ.—Քրիստոսի խօսքը ընակուի ձեր միջումն առատապէս ամեն իմաստութիւնով, իրար սովորեցրէք և խրատեցէք, սաղմոսներով և օրհնութիւններով և հոգեւոր երգերով և շնորհքով օրհներգեցէք Տիրոջը ձեր սրտերումը:—

Յակոբոս. 1 զլ. 27 հ.—Սուրբ և անարատ կրօնասիրութիւնն Աստուծոյ և Հօր առաջին

սա է, որբերին և այրիններին այցելել նորանց նեղութեան մէջ, և իր անձն աշխարհքից անարատ պահել:—

Ո՞վ է պղծուժ սուրբ օրը.

Այն, որը ընդհանուր և անային պաշտամունքն արհամարում է և սուրբ օրումն էլ իր սովորական գործը կատարում է, կամ մինչև անգամ իր անձը աշխարհային գուարձութիւններին է յանձնում:

Ներայեց. 10 գլ. 25 հ.— Եւ չ'թողնէք մեր իրար հետ ժողովուրդը, ինչպէս ոմանց սովորութիւն է. բայց իրար յորդորենք, և այնքան աւելի՛ որքան տեսնում էք որ օրը մօտեցած է:—

Ինչո՞ւ համար Աստուծոյ խօսքը և քարոզը արհամարելը այդքան մեծ մեղք է.

Որովհետև քարոզից հաւատք է գոյանում, որով մենք փրկվում ենք. վասնզի մարդս չէ կարող հաւատալ և Աստուծոյ խօսքի համեմատ ապրել, եթէ Տիրոջ խօսքը չէ լսում:

Հռովմայեց. 10 գլ. 17 հ.— Ուրեմն հաւատքը լրասիւլոցն է, և լսելը՝ Աստուծոյ խօսքիցը:

Յակոբոս. 1 գլ. 22 հ.— Բայց խօսքը անող եղէք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով:

Առած՝ քարոզ լսելը չէ փրկում, — քարոզ չ'լսելը դատապարտում է:— Մի քաղաքում մի քանի երիտասարդներ միասին շատ անվայել բաներ էին անում. մանաւանդ Տիրոջ սուրբ օրը միշտ պղծուժ էին: Տիրոջ տունը գնալու փոխարէն ման էին գալիս գինետները և երեկոյեան հարբած տուն վերադառնում: Նորանցից մէկը միայն զգացաւ և իր ընկերներից հեռանալով, ագնիւ և բարեպաշտ քրիստոնեայ դարձաւ:— Ուսումը աւարտելուց լետոյ դատաւոր եղաւ:— Մէկ օր նա պէտք է մի մարդոյ կախաղանի դատապարտէր, և լանկարծ ճանաչեց, որ այդ մարդը իւր առաջուայ ընկերներից մէկն է: Այդ դէպքից շարժուած՝ դատաւորը չ'կարողացաւ դիմանալ և հարցրեց դատապարտեալից, թէ ո՞ւր են իր միւս հին ընկերները: Աստուած գիտէ այդ, ասաց նա. երկրիս վերայ ոչ մէկը նորանցից ալլես չ'կայ. նրանք ամենքն էլ ընկան տէրութեան սրով, այժմ վերջինի հերթն է:— Տեսնո՞ւմ էք, սիրելիներս, Տիրոջ սուրբ օրը պղծելու պտուղները:

Ի՞նչ էին անում հին ուխտի մէջ շաբաթ օրը պղծողին.

Նորան քարկոծում էին, ինչպէս Յեսուի ժամանակ,—մի մարդ, որը շաբաթ օրում փայտ էր ժողովում, քարկոծուեցաւ:

Աստ մի քանի մարդկանց անուններ, որոնք մեզ համար այդ կողմանէ բարի օրինակ են:

Սամուէլ մարգարէն մանկութիւնից տաճարումն էր լինում. ծերունի Սիմէօնը միշտ տաճար էր գնում փրկչին սպասելու. Աննա մարգարէուհին՝ Փանուէլի աղջիկը, տաճարից չէր հեռանում. և Յիսուսին էլ շաբաթ օրերը միշտ տաճարումն ենք տեսնում:

Ախթէ չէ կարող մարդս իրան համար մենակ բարեպաշտութիւն անել, այլ պիտի անպատճառ Աստուծոյ տանը լինի ուրիշների հետ.

Ո՛չ չէ կարող, որովհետեւ քրիստոնէութիւնը Քրիստոսի մարմինն է և ամեն մի անդամ ուրիշների հետ պիտի կապուած լինի:

Մատթէոս. 18 գլ. 20 հ.— Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժո-

ղովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ:—

Մէկ կալուածատէր, չ'կամենալով իւր ծեր աղախնին ամեն կիւրակի եկեղեցի թողնել, ասաց՝ տանը նստիր, քեզ համար մի Աստուածաշունչ կ'առնեմ, կարգա. ի՞նչ կարիք կայ միշտ հեռու տեղ գնալ: Իսկ այն պառաւ մայրիկը պատասխանեց. վեր առ մի բորբոքուած ածուխ, մենակ մնալով, նա շուտով կ'հանգչէ, իսկ թող շատ վառուած ածուխներ միատեղ լինեն,—ի՞նչ գեղեցիկ և ուժեղ կրակ կ'լինի:—

Բայց շատերը ասում են՝ թէ կիւրակի օրը մարդս պիտի ուրախանայ և զուարճանայ,—ուզի՞ր է այդ.

Ուզի՞ր է, միայն մարդս զգուշութեամբ պիտի ընտրէ իրան համար զուարճութիւնը: Չատերը կիւրակի օրը չափազանց ուտում են և խմում. սա մեղք է:

Նսայիա. 5 գլ. 11 և 12 հ.—Վայ նորանց որ առաւօտանց կանուխ վեր են կենում և ցքիի հտից վազում. ուշանում են իրիկունը, որ գինին նորանց տաքացրել է: Եւ լինում է քնար ու տաւիղ, թմբուկ ու

սրինգ և գինի նորանց խնջոյքներումը,
բայց Տիրոջ արածներին մտիկ չեն տա-
լիս, և նորա ձեռքի գործերը չեն տես-
նում:—

Միթէ հաւատացեալը կիւրակի օրը չ'ը-
պիտի ուրախանայ:

Թող ուրախանայ, միայն քրիստոնեայվայել
կերպով:

Փիլիպպից. 4 գլ. 4 հ.—Ուրախ եղէք Տրումն ա-
մեն ժամանակ, դարձեալ ասում են՝
ուրախ եղէք:

ԵԿՐՈՐԴ ՔԱՐԷՏԱԽՏԱԿԸ:

Ո՞ր պատուիրաններն էին գրուած նորա
վերայ:

4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10:

Ի՞նչ է նորանց բովանդակութիւնը:

Սիրելի քո ընկերը քո անձի պէս:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ:

Պատուիր քո հօբը և մօրը, որ քեզ համար
բարի լինի և դու երկար ապրիս երկրիս
վերայ:

Սա ինչ է նշանակում:

Մենք պէտք է Աստուածանից վախենանք
և նորան սիրենք, որ չ'արհամարհենք և
չ'բարկացնենք մեր ծնողներին և տէրերին,
այլ նորանց պատուենք, նորանց ծառայենք,
հնազանդենք, նորանց սիրենք և յարգենք:

Ո՞վքեր են մեր ծնողները և տէրերը:

Ոչ միայն հարազատ ծնողները, այլ և խորթ
ծնողներն էլ, աներանք, ծառայութեան
տէրեր, ուսուցիչներ, հոգևորականներ և աշ-
խարհային տէրութիւնը:

Ի՞նչ է նշանակում մեծաւորներին պա-
տուել:

Նորանց աստիճանը և մեծութիւնը Աստուա-
ծանից ստացած համարել:

Ինչո՞վ է արհամարհում մարդս իւր ծը-
նողներին:

Նորանց ծերանալիս օգնութիւն չ'անելով,
 նորանց կոպիտ պատասխանելով, նորանց
 խորհուրդները անարգելով, տկարութիւն-
 ները և պակասութիւնները ծաղրելով, կամ
 նորանցից փողով, ուսմով, պաշտօնով բարձր
 լինելիս, նորանց իրանից ցած համարելով:

Առակաց. 30 գլ. 17 հ.—Այն աչքը որ իր հօրը
 կ'ծաղրէ և կ'անարգէ իր մօրը հնազան-
 դել, նորան պիտի փորեն ձորի ազուա-
 ները, և նորան պիտի ուտեն արծիւի
 ձագերը:

Ա. Տիմոթէոս 5 գլ. 8 հ.—Բայց եթէ մէկը իրան-
 ների և մանաւանդ ընտանիքների
 համար խնամք չ'տանի, նա հաւատ-
 քիցն ուրացած է և անհաւատից էլ
 չար է:

Ի՞նչ է նշանակում նորանց ծառայել.

Յօժարութեամբ կատարել այն ինչ որ նո-
 րանք պահանջում են:

Ինչպէս պիտի հնազանդէնք նորանց.

Իսկոյն, առանց շատ խօսելու:

Միթէ նորանց բոլոր պահանջները ա-
 ռանց բացառութեան պիտի կատարենք.

Եթէ նորանց կամքը Աստուծոյ պատուիրան-
 ներին հակառակ է, չ'պիտի կատարենք:

Գործք Առաքելոց. 4 գլ. 19 հ.—Եթէ արժան է
 Աստուծոյ առաջին՝ որ ձեզ ավելի ականջ
 դնենք քան թէ Աստուծուն, դուք դատե-
 ցէք:—

Յփեսացիս. 6 գլ. 1 հ.—Որդիք, հնազանդ եղէք
 ձեր ծնողներին Տէրով, որ այն է ար-
 ժանը:

Մարդս մինչև ո՞ր հասակը պիտի այդ
 պատուիրանը պահէ.

Մինչև իր կեանքի վերջը:

Աստ՝ մի քանի գեղեցիկ օրինակներ.

Յովսէփը, թէև ինքը մեծ պաշտօնի մարդ
 էր, Փարաօնի օգնական, պատվում էր իր
 հօրը կենաց բոլոր օրերում.—Նմանապէս
 Յիսուսն էլ մինչև անգամ խաչափայտի վե-
 րայ, սարսափելի ցաւերի մէջ, իր մօրը տես-
 նելով յանձնեց նրան աշակերտներից մէկին,
 որպէս զի խնամէ նրան:

Մէկ անգամ Վէննա քաղաքում մի քանի
 բանտարկեալներ ստիպուած էին փողոցում
 գործելու: Մի գեղեցիկ հագնուած երիտա-

սարդ պաշտօնեայ առանց ամաչելու վագեց ծերունի բանտարկեալի մօտ, բռնեց նորա ձեռքից և համբուրեց, և լետոյ շարունակեց իր ճանապարհը: Մի իշխան, որը նոյն փողոցով անց էր կենում, տեսաւ այդ, կանչեց երիտասարդին և սկսեց նորան լանդիմանել ասելով. Ի՞նչ պաշտօնեայ մարդ ես, ուսւմ առած, մեծ ուժիկ ստացող, ինչո՞ւ համար քեզ կարգին չես պահում փողոցում. քո մեծաւորին կ'ասեմ, որ քեզ պաշտօնից հեռացնէ:—Այն բանտարկեալը իմ հայրիկս է. խոնարհութեամբ պատասխանեց երիտասարդը:—

Իսկ քրիստոնեայ ծնողները ինչից պիտի զգուշանան.

Աւելորդ և չափազանց խստութիւնից զավակների դէմ:

Կողոտաց. 3 գլ. 21 հ.—Հայրեր, մի գայրացնէք ձեր որդկանցը, որ չ'վհատին:—

Բացի ծնողներից ո՞վքեր են մեր մեծաւորները.

Մեր տէրերը, հոգևորականները, վարպետներ, և մանաւանդ աշխարհային տէրութիւնը:

Ի՞նչ է հրամայում չորրորդ պատուիրանը սորանց մասին էլ.

Որ մենք նորանց էլ սիրենք և յարգենք:

Երբայեց. 13 գլ. 17 հ.—Ականջ դրէք ձեր առաջնորդներին, և հնազանդեցէք. որ նո. բանք հսկում են ձեր հոգիների համար որպէս թէ հաշիւ պիտի տան որ ուրախութիւնով անեն այն և ոչ թէ հառաչելով. որ դա ձեզ օգուտ չէ:

Հռովմայեց. 13 գլ. 1 հ.—Ամեն անձը թող հնազանդէ բարձր իշխանութիւններին, որովհետև չ'իայ իշխանութիւն որ չէ Աստուածանից. և ներկայ իշխանութիւններն Աստուածանից են կարգուած:—

Բացի սիրելուց և յարգելուց էլ ի՞նչ պարտաւորութիւն ունին քրիստոնեաները իրանց մեծաւորներն վերաբերեալ.

Նորանց համար աղօթք անելու:

Ա. Տիմոթէոս. 2 գլ. 1 և 3 հ.—Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղօթք անել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամեն մարդկանց համար, թագաւորների և ամեն իշխանաւորների համար.....

Որովհետև սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստուծոյ առաջին:

Ի՞նչ օրինակներով է զգուշացնում Աստուած այդ պատուիրանի դէմ մեղանջելուց.

Կորնթի որդոց պատմութիւնով, որը զրուած է Թուոց 16 զլ. 1—35 հ., և Բեթէլի 42 հրեխաների վիճակով, զրուած Գ. թագաւորաց 2 զլ. 23 և 24 հ.:

ՀԻՆՉԵՐՈՐԳ ՊԱՏՈՒԻՐԱՆԷ:

2՝ սպանես:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ մեր ընկերի մարմնի վրնաս կամ նեղութիւն չ'տանք, այլ նորան օգնենք և ամեն մարմնաւոր նեղութիւններում ձեռնտու լինենք:

Ի՞նչ է արգելվում այս պատուիրանում.

Ամեն տեսակ մարդասպանութիւն և անձնասպանութիւն,— թէ զէնքով, թէ խօսքով,

թէ զիտակցարար և թէ անզիտակցարար:

Ուրեմն ո՞ւմ չ'պէտք է սպանենք,

Ոչ որի:

Ո՞վ էր առաջին մարդասպանը.

Կայէնը, որը սպանեց իր եղբօր Հաբէլին:

Էլ ո՞ր մեղքն է մարդասպանութիւն Համարվում.

Ատելութիւնը:

Մատթէոս. 5 զլ. 21 և 22 հ.— Լսել էք, որ առաջիններին ասուեցաւ, մի սպանիր, և ով որ սպանէ, պարտական կ'լինի դատաստանին: Բայց ես ասում եմ ձեզ թէ Ամեն ով որ զուր տեղը բարկանայ իր եղբօրը, պարտական կ'լինի դատաստանին. և ով որ իր եղբօրն ասէ Յիմար, պարտական կ'լինի ատեանին. և ով որ իր եղբօրն ասէ Մորոս, պարտական կ'լինի զեհնի կրակին:—

Ա. Յովհաննէս. 3 զլ. 15 հ.— Ամեն ով որ իր եղբօրն ատում է, մարդասպան է. և զիտէք որ ամեն մարդասպան յաւիտենական կեանք չ'ունի հաստատուած իրանում:—

Ապա ո՞վ իրաւունք ունի սպանելու.

Կառաւարութիւնը, երբոր նա իբրև Աստուծոյ սպասաւոր է գործում:

Հռովմայեց. 13 զլ. 4 հ.— Որովհետև սպասաւոր է նա Աստուծոյ քեզ համար դէպի բնաբն. ապա եթէ չարը գործես, վախեցիր. որովհետև զուր տեղը սուրը չէ կրում. որովհետև նա սպասաւոր է Աստուծոյ՝ վրեժխնդիր բարկութիւն բերելու չարը գործողի համար.

Ո՞ր թագաւորը մարդասպանութիւն գործեց ոչ թէ իբրև Աստուծոյ սպասաւոր.

Հերովդէսը, որը անմեղ մանուկներին սպանիլ տուաւ:

Կարո՞ղ են քեզ էլ դէպքեր պատահել, երբոր դու էլ սպանես.

Այո, ամեն մարդ կարող է սպանել, երբոր նա անձնապաշտպանութեան զրութենումն է. օրինակի համար,— անտառում ոչ կառաւարութիւն, ոչ ոստիկանութիւն, ոչ էլ ուրիշ օգնող կայ, ուստի մարդ ինքը պիտի իր անձն պաշտպանէ:

Ելից. 22 զլ. 2 հ.— Եթէ գողը տուն ծակելիս գտնուի և զարկուի որ մեռնէ, նորա համար արիւն չ'կայ:

Միայն սեփական ձեռով սպանելն է մեղք.

Ո՛չ, ուրիշի միջոցով սպանիլ տալն էլ մեղք է: Այդպէս տեսնում ենք, որ Աստուած Գաւիթ թագաւորին խրատում է Ուրիային սպանիլ տալու համար:

Ինչո՞ւ համար մարդասպանութիւնը այնքան մեծ մեղք է.

Որովհետև սպանելով մարդ մեղանշում է իւր եղբոր և Աստուծոյ պատկերի դէմ:

Մենդոց. 9 զլ. 6 հ.— Ով որ մարդի արիւն թափէ, նորա արիւնը մարդով թափուի. որովհետև Աստուծոյ պատկերովն ստեղծեց մարդին.—

Սուրբ Գրքի հոգով նայած էլ ինչ է մարդասպանութիւնը.

Ընկերին նեղութեան մէջ չ'օգնելն էլ:

Աստ՛ նուրբ մարդասպանութեան մի քանի տեսակներ:

Ձէնքը գործածելով անզգուշութեամբ մարդ սպանել, հարբեցողութեամբ իր կեանքը կարճացնել, անառակ կեանքով ժամանակից առաջ ծերանալ, անհոգութեամբ վերաբերուել զէպի երեխաները, ինչպէս պատահում է մայրերին որ քնած ժամանակ խեղզում են իրանց փոքրիկներին,—իմանալով թէ մի մարդ նեղութեան մէջ է և կարող լինելով օգնել նորան, օգնութիւն չ'անել, ինչպէս քահանան և ղետացիին արին Երիքովի ճանապարհում, անպէտք և վնասակար սննդեան առարկաներ ծախել, որը ուտելով մարդս կարող է հիւանդանալ. ուրիշներին զուգուել զէպի յիմար և անտեղի քաջութիւն:

Արդ ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը.

Որ ամեն մարդկանց՝ մեր թշնամիներին էլ մեր եղբայրները համարենք:

Նփեսաց. 4 զլ. 32 հ.—Եւ իրար հետ քաղցր եղէք, զթած՝ իրար ներելով, ինչպէս Աստուած էլ Քրիստոսով ձեզ ներեց:

Հուովմայեց. 12 զլ. 18 հ.—Եթէ կարելի է՝ որքան ձեզանից է կախուած, ամեն մարդկանց հետ խաղաղութիւն ունեցէք:

Արդեօք կարո՞ղ է ամեն մարդ իր թշնամուն ներել.

Ո՛չ, միայն Աստուծոյ որդիքը կարող են:

Մատթէոս. 5 զլ. 44 և 45 հ.—Սիրեցէք ձեզ թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի արէք ձեզ ատողներին. և աղօթք արէք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար. որ որդիք լինիք ձեր Հօրն, որ երկնքումն է. որովհետեւ նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վերայ, և անձրև է բերում արդարների և անիրաւների վերայ:—

Ինչո՞ւ համար մարդը իրան էլ չ'պիտի սպանէ.

Որովհետեւ մենք չենք մեզ կեանք տուողը և իրաւունք էլ չ'ունինք նորան վերցնելու:

Հուովմայեց. 14 զլ. 7 և 8 հ.— Որովհետեւ մեզանից ոչ ով ինքն իրան համար չէ ապրում, և ոչ ով ինքն իրան համար չէ մեռնում. Որովհետեւ եթէ ապրենք՝ Տիրոջ ենք ապրում, և եթէ մեռնենք՝ Որոջ ենք մեռնում. ուրեմն թէ ապրենք և թէ մեռնենք՝ Տիրոջն ենք:—

Ուրեմն ի՞նչ պարտաւորութիւններ ունի մարդս իւր կեանքին վերաբերեալ.

Պիտի պահպանէ նորան, զգուշութեամբ
փախչէ վնասակար բաներից, իւր մարմինն
մաքուր պահէ, հիւանդանալիս բժշկին զիմէ
և նորա հրամաններին հնազանդէ:

Բայց ինչ պիտի անենք, երբոր Աստու-
ծոյ պատիւը մեր կեանքն է պահանջում.

Պիտի ուրախութեամբ մեր կեանքն էլ զո-
հենք Աստուծոյ անուան պատուոյ համար,
ինչպէս հաւատացեալներն էին անում առա-
քելոց ժամանակում. նորանք շարշարվում
էին, մեռնում էին, բայց չէին ուրանում
Քրիստոսին: (Ստեփաննոսի պատմութիւնը,
Գործք Առաքելոց 6 և 7 գլ.):

Ել ո՞ւմ համար կ'զոհէ ճշմարիտ քրիս-
տոնեան իւր կեանքը.

Եղբայրների համար:

Ա. Յովհաննէս. 3 գլ. 16 հ.—Եւ մենք պարտենք
մեր եղբայրների վերայ գնել մեր
անձերը:

Ո՞ր սպանութիւնն է մարդասպանու-
թիւնիցն էլ վատ.

Հոգին սպանել՝ այսինքն մոլորեցնել ծուռ

վարդապետութիւնով, հրապուրել զէպի մեղք
և անհաւատութիւն, զայթաղեցնել շար օ-
րինակով.

Մատթէոս. 16 գլ. 26 հ.—Ի՞նչ օգուտ ունի մարդ,
որ բոլոր աշխարհքն ստանայ և իր
անձը կորցնէ. կամ ինչ գին կ'տայ
մարդ իր անձը փրկելու համար:

Ո՞վ գործեց այդ տեսակ մեղք.

Յերոբովամ թագաւորը, որը մոլորեցրեց
ժողովուրդին զէպի կռապաշտութիւնը:

Սպա ինչ պիտի անենք տեսնելով, որ
մեր ընկերը մեղանջում է.

Պիտի յորդորենք և զգուշացնենք նորան:

Գաղատաց. 6 գլ. 1 հ.—Եղբարք, եթէ մէկը յան-
կարծ բռնուի մի յանցանքով, դուք
որ հոգևոր էք, այնպիսին հաստատե-
ցէք հեղութեան հոգով:

Ա. Պետրոս. 5. գլ. 8 հ.—Արթուն եղէք, հսկում
արէք. որովհետև ձեր ոտիս թշնա-
մին՝ սատանան՝ գոռոզ արիւծի պէս
ման է գալիս և որոնում է թէ որին
կուլ տայ:

ՎԵՅԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ:

Ձնութիւն չ'անէս:

Սա ինչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ պարկեշտ և ողջախոհ կեանք վարենք խօսքով և գործով, և ամեն մէկը իւր ամուսնակիցը սիրէ և պատուէ:

Ի՞նչ է ամուսնութիւնը.

Սիրոյ կապ մի մարդու և մի կնոջ մէջ, մինչև կեանքի վերջը իրար հաւատարիմ մնալու համար:

Ե՞րբ կ'լինի հաւատարմութիւն ամուսնութեան մէջ.

Երբոր ամուսնակիցները միմիանց առաւելութիւնները կ'ճանաչեն և տկարութիւնները հեզութեամբ կրկրեն:

Կողոսաց. 3 գլ. 18 և 19 հ.—Կանայք, հնազանդ եղէք ձեր մարդկանցը, ինչպէս կ'վայելէ Տէրումը: Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, և դառն մի լինիք նորանց դէմ:—

Ի՞նչ է ամուսնութեան հոգևոր նպատակը.

Իրար օգնել սրբութեան ճանապարհում ինչպէս Պիղատոսի կինը խնդրում է իր մարդոյն, որ չ'մեղանչէ արդար Յիսուսի դէմ:

Ներայեց. 13 գլ. 4 հ.—Ամուսնութիւնը ամեն կողմանէ պատուական է և անկողինը սուրբ. բայց շնացողներին և պուռնիկներին Աստուած կ'դատէ:

Ի՞նչ մեղք է գործում ամուսնական հաւատարմութիւնը խախտողը.

Նա քանդում է Աստուծոյ կարգը, իւր տրուած խօսքը զրթում է և ստոր կերպով խաբում է իւր ամուսնակցին:

Ինչի՞ց պիտի զգուշանայ հաւատացեալը, որպէս զի ամուսնութիւնը ամեն կողմանէ բախտաւոր լինի.

Անհաւատի և այլակրօնի հետ ամուսնանալուց:

Ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը. Պարկեշտ և ողջախոհ կեանք վարել, այս

ինքն փախչել լիբր դործքերից և խօսքերից:

Ա. Կորնթաց. 15 գլ. 33 հ.—Մի խարուիք. չար ընկերակցութիւններն ապականում են բարի վարքերը:

Ա. Կորնթաց. 6 գլ. 19 հ.—Կամ թէ չ'գիտէք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են՝

Եփեսաց. 4 գլ. 29 հ.—Ոչ մի գէշ խօսք չ'դուրս գայ ձեր բերանիցը. բայց այն՝ որ բարի է՝ շինութեան համար հարկաւոր, որ շնորհք տայ լսողներին:

Ինչից պիտի զգուշանայ մարդս, որ չ'մեղանչէ այդ պատուիրանի դէմ.

Պարապութիւնից, չար ընկերներից, վատ գրքերից և պատկերից և անժողովակալութիւնից.

Ի՞նչ հետեւանք ունի այդ պատուիրանի դէմ մեղանչելը:

Մարմինն և հոգին փշանում են:

Ա. Կորնթաց. 3 գլ. 17 հ.—Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կ'ապականէ. որովհետեւ Աս-

տուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք:

Մարդս էլ ինչով կարող է շնութիւն անել.

Մտքով և աչքերով:

Մատթէոս 5 գլ. 27 և 28 հ.—Լսել էք որ ասուեցաւ առաջիններին, թէ շնութիւն մի անիր: Բայց ես ասում եմ ձեզ թէ ամեն ով որ մի կնկայ վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արգէն շնացաւ նորա հետ իր սրտի մէջ:

Ինչպէս պիտի մեռցնենք չար ցանկութիւնները մեր սրտում.

Մտածենք Յիսուսի չարչարանքի և մահուան մասին, արթուն կենանք և աղօթենք, որ Սուրբ Հոգին ընդունենք:

Սաղմոս. 51 գլ. 10 հ.—Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում, ով Աստուած, և ուղիղ հոգին նորոգիր իմ ներսումը:

Մատթէոս. 5 գլ. 8 հ.—Նրանի նորանց, որ սրտով մաքուր են, որ նորանք Աստուծուն կ'տեսնեն:

Մի բարեպաշտ քարոզիչ 200 տարի սորանից յառաջ ասած. երբոր մեր երիտասարդութեանը նայում եմ, իսկոյն 6 գերեզմանափորներին եմ նշմարում: Առաջինի անունն է հարբեցողութիւն. ինչքանները արդէն մեռել են այդ մեղքից: դաշտն էլ փչանում է երբոր անդադար թրջվում է: Երկրորդ գերեզմանափորի անունն է ցանկասիրութիւն. ինչքանները արդէն իրանց կեանքը կարճացրել են այդ մեղքով, որով մարմինը տկարանում և թոյլանում է. պարզ է որ բորբոքուած բանը շուտով է փչանում: Երրորդի անունն է բարկութիւն. նախանձը ու բարկութիւնը կեանքը կարճացնում են: Պողոս առաքեալն էլ ասում է Գաղատացոց 5 գլ. թէ կռիւներ, նախանձներ, բարկութիւններ մարմնոյ գործքեր են: Չորրորն գերեզմանափորը կոչվում է անհնազանդութիւն ծնողներին. այն ծառը որը չէ ուզում ծռուել, պիտի կտրուի: Հինգերորդի անունն է չար ընկերակցութիւն. ինչքաններին արդէն փրչացրել է նա, սպանել է այս և այն կեանքի համար: Կապոտիր միասին կենդանի և մեռած մարդոյն, ինչ կ'իլինի. մեռածը չի կենդանանալ, իսկ կենդանին մեռածի գէշ հոտից

անշուշտ կ'մեռնէ: Վեցերորդը կոչվում է պարապութիւն. պարապ մարդուց այնքան օգուտ է, ինչքան էլ մի մեռածից. անպտուղ ծառը պիտի կտրուի և կրակում այրուէ:—

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ:

Գողութիւնն չ'անես:

Սա ինչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածածնից վախենանք և նորան սիրենք, որ մեր ընկերի փողը կամ ունեցածը չ'յափշտակենք, այլև վատ վաճառքով կամ խարդախ առևտուրով չ'սեփականենք մեզ, այլ ձեռնտու լինենք նորա ունեցածը և ապրուստը լաւացնելու և պահպանելու:

Գողութիւնը ինչպէս է կատարվում.

Կոպիտ գողութիւնը ավագակութեամբ կամ ծածուկ տուն մտնելով, գողացած բաներ ծախելով, իսկ նուրը գողութիւնը լինում է խաբելով, վատ ապրանք ծախելով, վաշխառութիւնով, կաշառակերութիւնով, սուտ

մուրհակ գրելով, կապուած պայմանագիր-
ները չ'կատարելով, իր տիրոջ գործը ծու-
լութեամբ անելով. մարսանենգութեամբ,
պարտք ուրանալով, ծուլութիւնից ողորմու-
թիւն խնդրելով:—

Ա. Թեսաղոնիկեց. 4 գլ. 6 հ.—Չլինի որ մէկն մի
բանում չափիցն անցնէ և իր
կրօնը գրկէ. որովհետև Տէրն
այդ բոլոր բաների համար վը-
րեժխնդիր է:

Մի մարդ իր գողութիւնների համար
կախաղանի մահուան դատապարտուեցաւ:
Մեռնելուց լաւաջ լանկարծ տեսնում է իր
մօրը կախաղանի մօտ կանգնած դառն ար-
տասունք թափելիս: Նա իրաւունք խնդրեց
մօրը խօսացնելու և թոյլտուութիւն ստանա-
լուց լետոյ, երբ մայրը լալով մօտեցել էր իւր
անբախտ որդոյն,—որդին սաստիկ կծեց մօր
ականջը. մայրը սաստիկ աղաղակեց: Բոլորը
զարմացան և զղուեցան որդու արարքից: Այն
ժամանակ դատապարտեալը ասաց. մայրս է
մեղաւոր, որ ես այժմ կախաղան եմ բարձրա-
նում. երբոր ես դեռ փոքր էի շուա շուա
գողանում էի մօրիցս զանազան մանր բաներ,
և մայրս ինձ չէր պատժում: Երբոր ուսում-

նարան էի մտել, սկսեցի աշակերտակիցներիցս
գրքեր, տետրակներ ու գրիչներ գողանալ,
իսկ մայրս ուրախանում էր իմ ճարպիկու-
թեանս վերայ: Այդպիսով ես այնքան ընտե-
լացայ գողութեան որ ինձ համար փեշակ
դարձրի և ահա նորա պտուղը կախաղանն է:

Ո՛ր մեղքն է շատ տարածուած, որը Աս-
տուծոյ առջև գողութիւն է համարվում,
իսկ մարդիկ նորան անմեղ զուարճու-
թիւն են ասում.

Թղթախաղով ուրիշի փողը իրան սեփակա-
նացնելը:

Ի՞նչ է ստիպում մարդկանց գողութիւն
անելու:

Անգոհութիւնը, արծաթասիրութիւնը, ժլա-
տութիւնը և ծուլութիւնը:

Սաղմոս. 37 գլ. 21 հ.—Ամբարիշտը փող է առ-
նում և չէ վճարում:

Ա. Տիմոթէոս 6 գլ. 9 և 10 հ.—Նորանք որ կա-
մենում են հարստանալ փորձու-
թեան և որոգայթի և շատ անմիտ
վնասակար ցանկութիւնների մէջ
են ընկնում. որ ընկղմում են մարդ-

կանց սատակումի և կորուստի մէջ: Որովհետև արծաթասիրութիւնը ամեն չարիքների արմատն է:

Ծննդոց. 3 գլ. 19 հ.—Երեսիդ քրտինքովը հաց ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև նորանից առնուեցար:

Ուրեմն քրիստոնեան ինչպէս պիտի ապրէ.

Քրիստոնեան պիտի բաւականանայ իր ունեցածովը:

Ա. Տիմոթէոս. 6 գլ. 8 հ.—Բայց եթէ կերակուր և հագուստ ունինք, նորանցով բաւականանանք:

Ի՞նչ է հրամայում այդ պատւիրանը.

Ընկերին օգնել նորա ունեցածը լաւացնելու և պահպանելու:

Ո՞ւմ մասին է պատմում սուրբ գիրք այդպիսի բարեգործութիւններ.

Յորայ մասին, աղքատ որբեայրու մասին, որը մարգարէին օգնում էր, Տաբիթայի մասին, որը աղքատների համար շորեր էր պատրաստում:

Յապիայ. 58 գլ. 7 հ.—Այո, հացդ կտալը տուր սովածին, և թափառական խեղճերին տար տունդ, երբոր մի մերկ տեսնես, նորան հագցու, և քեզ պէս մարմին ունեցողից քեզ մի ծածկիր:

Երբայց. 13 գլ. 16 հ.— Իսկ բարերարութիւնը և հաղորդակցելը մի մուանաք.—որ այնպիսի պատարագներին հաւանում է Աստուած:

Ինչպէս պիտի օգնենք մեր ընկերին.

Չուտով, առանց երկմտելու և կողմնակի նպատակներ ունենալու:

Մատթէոս. 6 գլ. 3 հ.—Բայց դու երբոր ողորմութիւն անես, թող չ'իմանայ քո ձախ ձեռքը, թէ ինչ է դործում քո աջը:

Ինչքան պիտի օգնենք.

Մեր օգնութիւնը պիտի առանց խնայելու լինի:

Բ. Կորնթաց. 9 գլ. 6 հ.—Խնայելով սերմողը, խրնայելով էլ կ'հնձէ. և առատութեամբ խերմողը, առատութեամբ էլ կ'հնձէ:

Ինչո՞վ պէտք է օգնենք ընկերին.

Գործով և խօսքով:

Միթէ պիտի ատենք այս աշխարհքը
բարիքները:

Ո՛չ, պիտի աշխատասէր լինինք և ունեցածի համար Աստուածանից գոհանանք, — միայն մեր սիրտը չ'պիտի նուիրենք աշխարհքիս բարիքներին:

Բ. Թեսաղոնիկ. 3 գլ. 10 և 12 հ. — Սա էինք պատուիրում ձեզ, որ եթէ մէկը չէ կամենում գործել թող չ'ուտէ էլ...: Այնպիսիներին պատուիրում ենք և աղաչում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով որ հանդարտութեամբ աշխատեն և իրանց հացն ուտեն:

Ո՞ր մեղքն է արծաթսիրութեան հակառակ.

Չուսուցումը:

Ուրեմն հաւատացեալը ինչպէս կ'վերաբերուէ դէպի իր ունեցածը.

Նա լաւ տնտեսութիւն կ'անէ, և մի և նոյն ժամանակ ողորմութեամբ կ'օգնէ ընկերին էլ:

Բայց ի՞նչ պիտի անէ մարդս, որը արդէն մեղանչած է այդ պատուիրանի դէմ.

Այն՝ ինչ որ Զարէսը արաւ:

Ղուկաս. 19 գլ. 8 հ. — Տէր, ահա իմ ինչկերի կէսն աղքատներին կ'առամ և եթէ մէկին զրպարտութիւնով զրկել եմ՝ չորեքսատիկ կ'վճարեմ:—

ՈՒԹԵՐՈՒԴ ՊԱՏՈՒԲԱՆԷ:

Սուտ վկայութիւն չ'տաս քո ընկերիդ դէմ:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ կեղծութեամբ չ'խաբենք մեր ընկերին, նորան չ'մատնենք, չ'բամբասենք, չ'վատաբանենք, այլ նորան ներթէ՛ք, նորանից բարին խօսենք և ամեն բան դէպի բարին մեկնենք:

Ի՞նչ է սուտ վկայութիւն.

Ամեն անազնիւ և անճշմարիտ խօսք դատաստանի առջև կամ սովորական կեան-

քում,—որով մեր ընկերին վնաս կամ ցաւ է պատճառւում:

Աստ սուրբ գրքից մի քանի օրինակներ:

Նաբովթի դէմ կանչուած վկաները. Պիղատոսի առջև Քրիստոսի դէմ եղած սուտ վկանները: Առ հասառակ թէ դատաւոր, թէ վկայ, թէ փաստաբան, երբոր անճշմարտութիւն են ասում, մեղանշում են այդ պատուիրանի դէմ:

Առակաց. 17 դլ. 15 հ.—Անդգամին արդարացնողը, և արդարին անզգամ անողը, երկուսն էլ զգուելի են Տիրոջը:

Ի՞նչ է նշանակում խաբել.

Դիտմամբ ասել այն՝ որ ճշմտրիտ չէ: Օրինակի համար, ինչպէս Յակոբը ասաց հօրը՝ թէ ես Եսաւն եմ:—Յիսուսի գերեզմանի պահապանները, որոնք ասել էին՝ թէ աշակերտները եկան և Յիսուսի մարմինն զողացան:

Ի՞նչ է նշանակում ընկերին մատնել.

Նորա գաղտնիքները յայտնել, երբոր ոչ ով ինձանից այդ պահանջելու իրաւունք չ'ու-

նի, և ընկերս էլ ինձանից լուռութիւն է ըստասում:

Ի՞նչ մատնելը մեղք չէ.

Չար բաները յայտնել մեղք չէ. օրինակի համար, Մուրթրէն յայտնեց թագաւորին, որ նորան ուզում են սպանել,—դա մատնութիւն չէր, այլ հպատակի հաւատարմութիւնը:

Աստ մատնութեան ամենազգուելի օրինակը:

Յուդան մատնեց իւր Տիրոջը:

Ի՞նչ է նշանակում բամբասել.

Ընկերի բացակայութեամբ նորանից չարը խօսել, կամ նորա անունն սևացնել:

Աստ բամբասելու օրինակները:

Աբիսողոմը բամբասում էր ժողովուրդի մէջ իւր հօրը մասին: Դպիրները սևացնում էին Յիսուսի արածները, ասելով թէ նա դեերի իշխանութիւնով դեեր է հանում,

Աւրեմն սուտ ասել տկարութիւն չէ, այլ ինչ տեսակ մեղք է.

Սատանայական մեղք. սուրբ գիրքը ասում է՝ թէ ստախօսները սատանայի որդիքն են:

Սաղմոս. 5 գլ. 6 հ.—Դու կ'կորցնես սուտ խօսողներին. Տէրն արիւն թափող և նենգաւոր մարդիցը զզվում է:

Ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը.

Միշտ ընկերի մասին և նորա հետ սիրով ճշմարտութիւնը խօսել,—առանց մարդկանցից վախենալու և կեղծաւորութիւն անելու:

Նսայիա. 5 գլ. 20 հ. Այն նորանց, որ չարին ասում են բարի, և բարին՝ չար. որ խաւարը շինում են լոյս, և լոյսը խաւար. որ դառնը քաղցր են շինում, և քաղցրը՝ դառն:

Միթէ՞ միշտ և ամեն տեղ պիտի բոլոր իմացած ճշմարտութիւնը ասես.

Ոչ, եթէ ինձ չեն հարցնում, կամ եթէ խօսելը աւելորդ է, աւելի լաւ է լռել:

Ի՞նչ է նշանակում ընկերին ներել.

Միշտ լաւ կողմերը գտնել՝ ինչպէս Քրիստոսը իր թշնամիների մասին ասաց.

«Հայր ներիք նորանց, վասնզի չեմ իմանում ինչ եմ անում»:

Ա. Պետրոս. 4 գլ. 8 հ.—Սէրը ծածկում է մեղաց շատութիւնը:—

Մարդս ինչպէս զգուշանայ սուտիցը.

Պիտի իրան շուտ շուտ քննէ:

Բ. Կորնթաց. 13 գլ. 5 հ.—Փորձեցէք ձեր անձերը, թէ արդեօք հաւատքովն էք. քննեցէք ձեր անձերը:

Յակոբոս. 3 գլ. 5 և 6.—Լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծ մեծ բաներ է խօսում. տես, մի փոքր կրակը սրբան բան է վառում: Լեզուն էլ կրակ է այդ անիրաւութեան աշխարհքը. այսպէս է լեզուն զրուած մեր անդամների մէջ, որ նա բոլոր մարմինն ապականում է և կրակով վառում է մեր գոյութեան անիւր, և ինքը բորբոքուած է գեհենիցը:—

ԻՆՆԵՐՈՐԿ ՊԱՏՈՒԻՐԱՆԵՐ:

Չ'ցանկանաս քո ընկերի տանն:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ խաբեբայական հնարներով չ'ընդդրենք մեզ համար մեր ընկերի ժառանգութիւնը կամ տունը և ոչ էլ քաշենք դէպի մեզ իրաւունքի երեւոյթով, — այլ մեր ընկերին ձեռնտու և հպասաւոր լինինք պահպանելու իւր սեփականութիւնը:

Ի՞նչ պիտի անէ մարդս, եթէ այդ ցանկութիւնը գոյանայ:

Պիտի ամեն կերպով նորան յաղթէ, որովհետև նորան հաւանելով և հետեւելով նա շուտով կարող է իր ցանկութիւնը իրագործել և դորանով ընկերին վնաս տալ:

Յակորոս. 1 գլ. 15 հ.—Եւ այնուհետև որ ցանկութիւնը յղացած է՝ ծնվում է մեղք. և մեղքն էլ երբոր կատարվում է՝ մահ կ'ծնի:—

Աստ՛ մի քանի օրինակներ սուրբ գրքից:

Յեսուի ժամանակ Աքարը, որի պատճառով Տիրոջ բարկութիւնը եկաւ Իսրայէլի վերայ: Աքաար թագաւորը, որը ցանկացաւ նաբովթի այգին:

Ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը.

Պիտի մեր ընկերին ձեռնտու լինինք պահպանելու իւր սեփականութիւնը:

Աստ՛ մի օրինակ սուրբ գրքից:

Աբրահամը օգնեց Ղովտին Քողոզադոմոր թագաւորի դէմ, որը Ղովտին զրկեց և նորան էլ գերի տարաւ:

ՏՍՍԵՆՈՐԻ ՊՍՏՈՒԲՆԵՐ:

2'ցանկանաս քո ընկերի կնոջը, նորա ծառային, աղախին, անասնին և այն ամենին, ինչ որ նորանն է:

Սա ի՞նչ է նշանակում.

Մենք պէտք է Աստուածանից վախենանք և նորան սիրենք, որ մեր ընկերի կինը, ծառան, աղախինը կամ անասունը նորանից չ'շեղենք, չ'քաշքշենք կամ երեսաղարձ չ'անենք, այլ նորանց յորդորենք, որ մնան և կատարեն ինչ որ իրանց պարտքն է:

Ո՞վ գործեց այդ պատուիրանի դէմ.

Գաւիթ թագաւորը, որը Ուրիայի կինն իրան համար վեր տուաւ. Հերովդէսն, որը իր եղբօր կնոջ հետ էր ապրում:

Ինչով է մեղանշում մարդս այդ պատուիրանի դէմ.

Ընկերի կնոջ, ծառայի, աղախնու գանգատները արդարացնելով, հեռանալու խորհուրդ տալով և օգնելով, աւել վարձք խոստանալով, գաւակներին ծնողաց դէմ գողգոլով և այլն:

Ի՞նչ է հրամայում այդ պատուիրանը.

Պիտի յորդորենք նորանց, որ իրանց պարտաւորութիւնը ճանաչեն և հնազանդեն:

Աստ մի քանի բարի օրինակներ:

Հրեշտակը յորդորեց Հագարին որ վերագառնայ իր տիկնոջ մօտ. Պօղոսը համոզեց փախած գերիին, Ոնեսիմոսին, որ ետ դառնայ իր տիրոջ Փիլիմոնի մօտ:

Երկրորդ Օրինաց. 22 գլ. 1 հ.—Նրբոր տեսնես քո եղբօր կզը կամ ոչխարը մորրուած, նորանց սնտես չ'անես.

անպատճառ քո եղբօր մօտ դարձնես նորանց:—

Առհասառակ, ի՞նչ պիտի անենք եթէ պատահմամբ ուրիշի բանը գտնենք.

Պիտի որոնենք այն բանի տիրոջը և վերագարձենք նորան իր կորուստը:

Ի՞նչ պիտի անենք որ այդ պատուիրանն էլ կարողանանք կատարել.

Պէտք է հոգևոր կեանք վարենք:

Մատթէոս. 6 գլ. 33 հ.—Առաջ Աստուծոյ արքայութիւնը և նորա արգարութիւնը խնդրեցէք. և այդ ամենքը կ'տրուի ձեզ:

Ինչով պիտի պատերազմենք ցանկութիւնների դէմ.

Աղօթքով և Աստուծոյ խօսքով:

Ծննդոց. 4 գլ. 7 հ.—Չէ որ եթէ բարի լինիս, (կրեադ) կ'բարձրանայ. բայց եթէ բարի չ'լինիս, մեղքը դրան մօտ պառկած է. և նա քեզ է փափագում, բայց դու իշխիք նորա վերայ:—

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Արդ ինչ է ասում Աստուած այս ամեն պատուիրանների մասին.

Այսպէս է ասում նա. «Ես քո Տէր Աստուածը, հզօր և նախանձոտ Աստուած եմ, որը ինձ ատողների մեղքը հատուցանում եմ որդոց մինչև երրորդ և չորրորդ ցեղը իսկ նոցա, որ ինձ սիրում են և իմ պատուիրանները պահում, — հատուցանում եմ մինչև հազարերորդ ցեղը»:

Սա ինչ է նշանակում.

Աստուած սպառնում է պատժել ամենքին, որ անցանում են այս պատուիրաններից. վասնորոյ պիտի վախենանք նորա բարկութիւնից և չ'գործենք ընդդէմ այս պատուիրաններին: Իսկ նա խոստանում է շնորհք և ամեն բարիք ամենքին, որոնք այս պատուիրանները պահում են. այս պատճառով և պարտական ենք նորան սիրել և ապաւինել և յոժարութեամբ կատարել նորա պատուիրանները:

Ինչ է նշանակում նախանձոտ Աստուած.

Նա պահանջում է իւր պատիւը և բարկանում է մեղքի վերայ:

Ինչ է մեղքը

Ամեն յանցանք Աստուծոյ պատուիրանների դէմ, անարգանք նորա սուրբ կամքին:

Ա. Յովհաննէս. 3 գլ. 4 հ.—Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում, և մեղքն է անօրէնութիւնը:—

Մարդս ինչով է անցնում Աստուծոյ պատուիրաններից.

Գործով, խօսքով և մտքով:—Բարին իմանալ և չ'անելն էլ մեղք է:

Մատթէոսի. 25 գլ. 42, 43, 46 հ.—Սուկեցի և դուք չ'տուիք ինձ ուտել, ծարաւեցի և ինձ չ'խմեցրիք. օտար էի՝ և ինձ ձեզ մօտ չ'առիք, մերկ՝ և ինձ չ'հագցրիք, հիւանդ և բանտի մէջ՝ և ինձ չ'այցելեցիք:— Եւ սորանք կ'դնան յաւիտեանական տանջանքը:

Ինչ մեղք ունի մարդս արդէն ծնուելու ժամանակ.

ժառանգական մեղքը:

Սաղմոս. 51 զլ. 5 հ.—Ահա ես անօրէնութիւնով
եմ ծնուել. և մեղքով յղացաւ ինձ իմ
մայրը:

Ի՞նչ է անում Աստուած մեղքի համար.
Աստուած պատժում է մեղքը:

Ինչպէս է պատժում մեղքը.

Ձանազան ներքին և արտաքին պատիժնե-
րով:

Ի՞նչ է ներքին պատիժը.

Միշտ մեղքի իշխանութեան տակ լինելը:

Յովհաննէս. 8 զլ. 24 հ.—Ճշմարիտ, ճշմարիտ ա-
սում են ձեզ, թէ՛ ամեն ով որ մեղք
է դործում, մեղքի ծառայ է:

Եսայիայ. 48 զլ. 22 հ.— Խաղաղութիւն չ'ունին
ամբարիշտները, ասում է Տէրը:—

Ել ի՞նչ պատիժներ է ուղարկում Աստ-
ուած մեղքի համար.

Փամանակաւոր և յաւիտենական պատիժ-
ներ:

Որո՞նք են ժամանակաւոր պատիժները.

Ազրատութիւն, հիւանդութիւն, անպատու-
թիւն, մահ:

Ո՞րն է յավիտենական պատիժը.

Յաւիտենական մահը:

Ի՞նչ է խօստանում Աստուած իւր պատ-
ուիրանները պահողներին.

Արտաքին և ներքին օրհնութիւն, խաղաղու-
թիւն և հոգևոր ուրախութիւն ժամանակա-
ւոր և յաւիտենական:

Եսայիայ. 54 զլ. 10 հ.—Սարերը կ'քաշուին և բը-
լուրները կ'սասանեն, բայց իմ ողորմու-
թիւնը քեզանից չի քաշուիլ, և իմ խա-
ղաղութեան ուխտը չի սասանիլ, ասում
է քեզ ողորմող Տէրը:

Սակայն դեռ ի՞նչ պատիժ է մնում ա-
մեններիս համար.

Փամանակաւոր մահը:

Հռովմայեց. 6 զլ. 23 հ.—Որովհետև մեղքի վարձ-
քը մահն է. բայց Աստուծոյ շնորհքը
յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի ձեռովը:

Ապա մեռնելուց յետոյ ի՞նչ է լինելու.

Դատաստան արդար Աստուծոյ առջև:

Կարող է մարդո Աստուծոյ պատուիրանները պահել:

Քանի որ դարձի եկած չէ, չէ կարող:

Հռովմայեց. 6 զլ. 14 հ.—Ես եմ մարմնաւոր՝ մեղքի տակը ծախուած:

Ե՛րբ է ստանում մարդս զօրութիւն պատուիրանները կատարելու թէև ոչ կատարեալ կերպով:

Երբոր նա դարձի գալով իւր սրտում սէր ու երկիւղ է ունենում դէպ ի Աստուած տնկուած:

Ա. Յովհաննէս. 5 զլ. 3 հ.—Որովհետև սա է Աստուծոյ սէրը որ նորա պատուիրանքները պահենք և նորա պատուիրանքները ծանր չեն:

Արդ կարող ենք օրենքի միջոցով արգարանալ:

Երբէք ոչ, որովհետև ամենալաւ մարդն էլ մտում է Աստուծոյ առջև մեղաւոր՝ դատապարտութեան արժանի:


Հռովմայեց. 3 զլ 23 հ.—Որովհետև խտրութիւն չ'կայ: Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստուծոյ փառքիցը պակասուած են:

Երկրորդ Օրինաց. 27 զլ. 26 հ.—Անիծեալ է նա որ չ'կենայ այս օրենքի ամեն խօսքերի մէջ որ նորանց կատարէ:—

Ապա ի՞նչ հարկաւոր է օրէնքը քանի որ նորան ոչ կատարելապէս կատարել կարող ենք, ոչ էլ նորա միջոցով երջանկութիւն ստանալ:

Նա մեր կեանքի համար ուղղեցոյց է և նորա միջոցով պիտի ճանաչենք մեր անպօրութիւնը, Քրիստոսին իբրև Փրկիչ զիմենք և հ աւ ա տ ք ո վ բռնենք:

Գաղատաց. 3 զլ. 11 հ.—Եւ թէ օրէնքովն ոչ ով չէ արդարանում Աստուծոյ առաջին, դա յայտնի է. որովհետև Արդարը հաւատքիցը կ'ապրէ:—



ԵՐԿՐՈՐԿ ԳԼԽԱԻՈՐ ՄԱՍՆ:

Առաքելական հաւատոյ դաւանութիւնը:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն:

Ահա տասը սուրբ պատուիրանները բացառութիւններով կարգացիր,—հիմա ասա Աստուծոյ առջև անկեղծ սրտով,—արդեօք պահել ես միշտ նորանց.

Ոչ՝ ցաւում եմ որ շատ շատ անգամ Աստուծոյ պատուիրանների դէմ եմ գործել:

Ո՛ւմ ենք նման, երբ մեզ Աստուծոյ պատուիրաններով քննում ենք.

Այն պարտապանին, որը իր տիրոջ 10000 տաղանդ էր պարտական:

Ա. Յովհաննս. 1 գլ. 10 հ.—Եթէ ասեմք թէ մեզք չ'դորձեցինք, ստախօս ենք անում նորան և նորա խօսքը մեզանում չէ:

Միթէ օրէնքը զօրութիւն չէ տալիս պատուիրանները կատարելու համար.

Ոչ՝ պիտի ներքնապէս փոխուինք:

Ի՞նչ միջոց կայ դորա համար.

Աւետարանը, որից հաւատ է գոյանում, որը ճշմարտապէս մարդոյ սիրտը փոխում է և տալիս է զօրութիւն օրէնքը կատարելու համար: Միասիօնները և վայրենիների մօտ գործողները փորձերով ամեն օր հաստատում են այդ:

Ի՞նչ է նշանակում հաւատալ.

Բոլոր սրտով Աստուծոյ զօրութեան և շնորհքին վստահանալ:

Ներայեց. 11 գլ. 1 հ.—Հաւատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ և չ'կրեցող բաների ապացոյցն է:

Ի՞նչ է այս հաւատոյ հետևանքը.

Զօրութիւն, որը ստանում ենք բարի գործքեր կատարելու և չարին յաղթելու:

Յակորոս. 2 գլ. 17 հ.—Այսպէս էլ հաւատքը, եթէ գործ չ'ունենայ, ըստ ինքեան մեռած է:

Ա. Յովհաննէս. 5 գլ. 4 հ.—Որովհետև ամեն ով որ Աստուածանից է ծնուած յաղ-

թում է աշխարհքին. և սա է յաղ-
թութիւնն՝ որ աշխարհքին յաղթեց,
այսինքն մեր հաւատքը:

Ի՞նչ է խոստացուած այս հաւատքը ու-
նեցողին.

Փրկութիւն:

Գործք Առաքել. 16 դլ. 31 հ.—Հաւատա Տէր Յի-
սուս Քրիստոսին, և կ'փրկուիս
դու՝ և քո տունը.—

Ո՞րտեղից է առաջանում այդ հաւատքը.

Քարոզից:

Հռովմայից. 10 դլ. 17 հ.—Ուրեմն հաւատքը լը-
սելուցն է, և լսելը՝ Աստուծոյ խօս-
քիցը:—

Կարո՞ղ է մարդս այդ հաւատքը ծածուկ
պահել սրտումը.

Ոչ՝ նա կ'արտայայտէ, կ'դաւանէ նորան:

Ո՞րտեղ է գրուած մեր հաւատոյ դա-
ւանութիւնը.

Առաքելական հաւատամքում, որը առաքի-
լոց ժամանակից է մնացել և բոլոր քրիս-

տոնէական կրօնների դաւանութիւնն է:

Ի՞նչ ուրիշ կրօններ կան.

Հրէական, մահմեդական և հեթանոսական
կրօնները:

Ի՞նչ են դաւանում նորանք.

Հրէաները դաւանում են մի Աստուծոյ, մահ-
մեդականները ասում են՝ թէ մի Աստուած
կայ, և Մահմեդը նորա մարգարէն է,—բայց
այդ 2 կրօնը մերժում է Յիսուսի փրկիչ լի-
նելը: Հէթանոսները շատ աստուածներ ու-
նին, օրինակի համար հնդկացիք 330 միլ-
լիօն:—

Ինչի՞ վրայով է խօսում քրիստոնէական
հաւատոյ դաւանութիւնը.

Երեք յօդուածներում խօսում է նա ստեղ-
ծագործութեան, փրկագործութեան և սր-
բագործութեան մասին:

Ո՞վ կատարեց այդ գործերը.

Ստեղծագործութիւնը Հայր Աստուածը՝ փր-
կագործութիւնը Որդի Աստուածը՝ և սրբա-
գործութիւնը Սուրբ Հոգի Աստուածը:

Ուրեմն Աստուած ինչպէս է յայտնուել մեզ.

Իբրև մի Աստուած 3 անձնաւորութիւններում, կամ թէ իբրև երրորդութիւն:

Երկրորդ Օրինաց. 6 գլ. 4 հ.—Լսիր, ով Խորայել. մեր Եհովայ Աստուածը՝ Եհովան մէկ է:—

Մատթէոս. 23 գլ. 19 և 20 հ.— Գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունովը. նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահէն:—

Աստուած ինչո՞վ է մեզ յատնվում.

Իւր գործքերով: Բոլոր արարածները պիտի մի արարիչ ունենան. եթէ աշխարհքը կայ, նորա վարպետն էլ պիտի լինի: Յետոյ այս աշխարհքի կարգ ու կանոնը տեսնելով պիտի ասենք՝ թէ կայ մի յաւիտենական իմաստութիւն, որը այդ բոլոր արարածների համար իրանց ճանապարհները կարգադրել է:—Վերջապէս յայտնվում է մեզ Աստուածը մեր խղճմտանքում: Մեր խղճմտանքը մեր կամքից կախուած չէ, մենք նորա իշխանութեան տակ ենք, ուրեմն նա իր գոյութիւնը մի բարձր օրէնագիրից ունի:

Սաղմոս. 14 գլ. 1 հ.—Անդգամն ասեց իր սրտումը՝ թէ Աստուած չ'կայ:

Բաւական են արդեօք այդ աղբիւրները Աստուծոյն ճանաչելու համար.

Ինչ որ Աստուծոյ վրայով բնութիւնից սովորում ենք այնքան հաստատ չէ, ուրեմն և բաւական չէ մեր փրկութեան համար:

Միմօնդէս փիլիսոփան ասում էր. որքան շատ եմ մտածում Աստուծոյ վրայ, այնքան քիչ եմ հասկանում:

Ի՞նչ հաստատ աղբիւր կայ Աստուծոյն ճանաչելու համար.

Սուրբ գիրքը:

Ի՞նչ է յայտնում մեզ Սուրբ Գիրքը Աստուծոյ էութեան մասին.—

Սուրբ Գիրքը յայտնում է մեզ, թէ Աստուծոյ էութիւնը Հոգի, Լոյս և Սէրն է:

Յովհաննէս. 4 գլ. 24 հ.—Աստուած Հոգի է, և նորան երկրպագողները պէտք է հոգով և ճշմարտութիւնով երկրպագեն:

Ա. Յովհաննէս. 1 գլ. 5 հ.—Նւ սա է այն աւե-

տիքը, որ նորանից լսեցինք և պատմում ենք ձեզ, թէ Աստուած լոյս է, և ոչ մի խաւար չ'կայ նորանում:

Ա. Յովհաննէս. 4 գլ. 16 հ.—Աստուած սէր է, և ով որ մնում է սէրի մէջ, Աստուծոյ մէջ է բնակւում, և Աստուած նորանում:

Ի՞նչ են Աստուծոյ յատկութիւնները.

Նա իբրև Հոգին յաւիտենական է, ամենակարող, ամենազէտ, ամենուրէք, ամենախմաստուն, ճշմարիտ. իբրև Լոյսը սուրբ է և արդար. իբրև սէրը ողորմած է և երկայնամիտ:

Սաղմոս. 90 գլ. 2 հ.—Գեռ որ սարերը չէին ծնուած, և երկիրս ու աշխարհքս չէիր ըստեղծել. յաւիտենից մինչև յաւիտեան դու ես Աստուած:

Մենդոց. 17 գլ 1 հ.—Ես եմ Ամենակարող Աստուածը. իմ առաջին վարուիր և կատարեալ եղիր:

Սաղմոս. 139 գլ. 1—5 հ.—Տէր, դու քննում ես ինձ և ճանաչում ես ինձ: Գու գիտես իմ նատիրն ու վեր կենալը, հեռուանց իմանում ես իմ մտածմունքները: Իմ գնալն

ու պառքելը քննում ես. և իմ ճանապարհները գիտես. որովհետև դեռ բնաւ լսօք չ'կայ իմ լեզուի վերայ. ահա, ով Տէր, դու ամենը գիտում ես:

Սաղմոս. 139 գլ. 7—11 հ.—Ո՛ւր գնամ քո Հոգիցը. և քո երեսիցն ո՞ւր փախչեմ: Նթէ վերանամ երկինքը՝ դու այնտեղ ես. և եթէ դժողքը փաթաթուիմ, ահա դու այնտեղ ես: Եթէ արշալուսի թևերն առնեմ և ծովի վերջի ծայրերումը բնակուեմ, այնտեղ էլ քո ձեռքը կ'առաջնորդէ ինձ, և քո աջը կ'պահէ ինձ:

Սաղմոս. 33 գլ. 4 հ.—Ուղիղ է Տիրոջ լսօքը, և նորա ամեն գործերը հաւատարմութիւնով են:

Եսայիայ. 6 գլ. 3 հ.—Սուրբ, սուրբ, սուրբ է Զօրաց Տէրը. բոլոր երկիրը լիքն է նորա փառքով:

Սաղմոս. 11 գլ. 7 հ.— Տէրն արդար է և արդարութիւն է սիրում:—

Երեմիայի Ողբեր. 3 գլ. 22 և 23 հ.—Տիրոջ ողորմութիւններն են, որ չ'վերջացանք, որովհետև չ'պակասեցան նորա գթութիւնները:—Նորանք ամեն առաւօտ նորանոր են. մեծ է քո հաւատարմութիւնը:—

Հ Ա Ի Ա Տ Ա Մ Ք :

Առաջին յօդուածը:

Ստեղծագործութեան մասին:

Ես հաւատում եմ Հայրն Աստուած, ամենակարող, Արարիչը երկնքի և երկրի:

Սա ինչ է նշանակուած.

Ես հաւատում եմ, որ Աստուած ստեղծել է ինձ բոլոր միւս արարածների հետ, ինձ տուել է մարմին և հոգի, աչք, ականջ և ամեն անդամներ, բանականութիւն և ամեն զգացմունքներ, որը և պահպանում է մինչև այժմ. այլև զգեստ, ուտելիք ու ըմպելիք, տուն և բնակութիւն, կին ու զաւակ, դաշտ և անասուն ու ամեն բարիք,—իմ մարմնիս և կեանքիս պիտոյքը առատութեամբ և ամեն օր պարգևում է ինձ: Պաշտպանում է ինձ ամեն վտանգից, ազատում է և պահպանում ամեն շարից. և այս բոլորը միմիայն հայրական, աստուածային զթիւթեամբ և ողորմութեամբ առանց իմ արժանաւորու-

թեան, և այս ամենի համար ես պարտական եմ գոհանալ նորանից, նորան զովել, սորա փոխարէն ծառայել և հնազանդել:— արդար և ճշմարիտ է այս:

Ինչո՞ւ համար է Աստուած Ամենակարող կոչվում.

Որովհետեւ նա ոչինչից ստեղծեց երկինքը, երկիրը ու ամբողջ տիեզերքը:

Երբայց. 11 դ. 3 հ.—Հաւատքով ենք խմանում, որ աշխարհքներն Աստուծոյ խօսքովը հաստատուեցան, որ չ'երևողներինցն այս տեսնուողներս եղած են:

Ի՞նչ է նշանակուած արարածներ.

Աստուծոյ ձեռքից ստեղծուած ամեն մի առարկայ, որոնցից դիւաւորներն են հրեշտակները ու մարդիկ:

Ովքեր են հրեշտակները.

Այն անթիւ երկնային հոգիները, որոնք իրանց Աստուծոյն են նուիրել և այլևս մեղանչել չեն կարող:—Սորանք միշտ օրհնում են Աստուծոյն և նորան ծառայում և հաւատացեալներին պահպանում ու ուրախանում

են մեղաւորներ զարձի գալու համար:

Սաղմոս. 103 գլ. 20 հ.—Օրհնեցէք Տիրոջը, ով նորա հրեշտակներ՝ հօր. զօրութեամբ, որ կատարում էք նորա խօսքը. նորա խօսքի ձայնը լսելով:—

Եբրայեց. 1 գլ. 14 հ.—Չէ որ ամենը սպասաւոր հողիներ են ուղարկուած սպասաւորութիւն անելու նորանց համար, որ փրկութիւնը պիտի ժառանգեն:

Սաղմոս. 34 գլ. 7 հ.—Տիրոջը հրեշտակը բանակ է շինում Նորանից վախեցողների շորս կողմովը և փրկում է նորանց:

Ղուկաս: 15 գլ. 10 հ.—Ատում եմ ձեզ, այսպէս էլ Աստուծոյ հրեշտակների առաջին ուրախութիւն կ'լինի մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ:—

Աստուած ինչպէս ստեղծեց մարդը.

Հողից, բայց իր նմանութեան պէս:

Մենդոց. 1 գլ. 27 հ.—Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան:—

Ինչպէս էին առաջ Աստուծոյ բոլոր արարածները.

Բոլորը շատ բարի էին:

Աստուած ինչ նպատակով ստեղծեց մարդը.

Որպէս զի նա Աստուծոյն ճանաչէ, նորան օրհնէ, ծառայէ և իւր ընկերին սիրէ:

Այն մենք երկու նպատակներ ունենք՝ երկնային և երկրային:

Աստուած մարդոյն ինչ է տուել այս նպատակին հասնելու համար.

Բոլոր հարկաւոր միջոցները և գործիքները՝ հողի, մարմին, մարմնոյ անդամներ, բանականութիւն և զգացմունքներ:

Արդեօք պահեց մարդը Աստուծոյ նմանութիւնը իրանում.

Ոչ՝ նա մեղանշելով այդ նմանութիւնը կորցրեց և ահա նորա բանականութիւնը այժմ խաւարուած է, նորա գործը մեղանշական, նորա մարմինը մահկանացու:

Ինչպիսի մեղանշեց մարդս.

Սատանան օձի կերպարանք ընդունելով խա-

բեց մարդկանց և նորանք էլ մեղանչեցին:

Ո՞վ է սատանան.

Սատանան չար հրեշտակների իշխանն է որոնց Աստուած սկզբուն իբրև բարի հոգիների էր ստեղծել,—իսկ նորանք ապստամբուեցան նորանից, նորա թշնամիները դարձան և հիմա դժոխքի արքայութիւնն են կազմում:

Յովհաննէս. 8 գլ. 44 հ.—Սատանան սկզբիցը մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չ'կեցաւ, որովհետև ճշմարտութիւն չ'կայ նորանում:

Թողէց Աստուած մարդկանց կորուստի մէջ երբոր նորանք մեղանչեցին.

Ոչ՝ նա հիմա էլ պահում է նորանց և ամեն հարկաւոր բան տալիս է և ամեն վտանգից պահպանում է:

Ինչո՞ւ համար է անում նա այդ.

Որովհետև նա մեր Հայրն է:

Ինչո՞վ է նա մեր հայրը.

Յիսուս Քրիստոսով:

Ո՞վ ունի իրաւունք ասելու թէ Աստուած իր Հայրն է.

Միայն հաւատացեալ քրիստոնեան:

Իսկ միւս մարդիկ ինչպէս պիտի անուանեն Աստուծոյն.

Իրանց Արարիչը:

Միևնոյն չէ այդ.

Ոչ՝ եթէ Աստուած իմ Հայրս է, այն ժամանակ ես գիտեմ էլ, որ նա ինձ սիրում էլ է Հօր պէս և միայն իմ բարեխաղութիւնն է ուզում, ինձ համար խնամք է տանում:—Այն քաղցը է մեզ համար այդ:—Փառք մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ նա մեզ համար կրկին գտաւ Աստուծոյ հայրական սէրը:

Ել ինչո՞ւ պիտի ուրախանանք՝ որ մի այսպիսի Հայր ունինք.

Նրովհետև իմանում ենք որ Աստուած՝ մեր Հայրը՝ ամենակարող է:

Ի՞նչ է նշանակում այդ.

Սա նշանակում է, որ Աստուած գորութիւն

ունի կատարելու ամենը, ինչ որ իրա սուրբ կամքն է:

Ի՞նչպիսի ուրախութիւն է առաջանում քեզ համար Հօրդ այդ յատկութիւնից.

Իմանում եմ, որ չկայ մի այնպիսի թշնամի, նեղութիւն, կամ զօրութիւն ոչ երկնքում, ոչ երկրիս վերայ, ոչ երկրի տակ, որը իմ Հօրիցս զօրեղ լինէր: —

Ա. Մնացորդ. 29 դլ. 10, 11, 12 հ.—Օրհնեալ ես դու, ով մեր հայրը Իսրայէլի Տէր Աստուածը, յաւիտենից մինչև յաւիտեան. քոնն է, ով Տէր մեծութիւնը և զօրութիւնը և փառքը և յաղթութիւնը և պայծառութիւնը, և բոլոր երկնքումն ու երկրում եղողները. քոնն է, ով Տէր, թագաւորութիւնը, և դու բարձրացեալ ես ամենից վեր իբրև դերիշխան: Եւ հարստութիւնն ու պատիւը քո երեսիցն է, և դու ես ամենի վերայ տիրողը, և քո ձեռին է ամենի մեծացնելը և ուժովացնելը:

Ինչո՞վ է մեղանչում քրիստոնեան, ունենալով մի այսպիսի Հայր.

Հոգս անելով, երկիւղ անելով, վստահութիւն չ'ունենալով:—Սա ապերախտութեան մի նըշան է:

Ա. Պետրոս. 5 դլ. 7 հ.—Ծեր բոլոր հոգսը Նորա վերայ գցեցէք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար:

Մատթէոս. 6 դլ. 26 հ.—Միտք արէք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ոչ էլ հնձում, և ոչ ամբարների մէջ ժողովում, և ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նորանց. չէ՞ որ դուք նորանցից աւելի լաւ էք:

Մատթէոս. 10 դլ. 29 հ.—Ձէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանքի են ծախվում, և նորանցից մէկը չի ընկնիլ դեռինն առանց ձեր Հօրը: Իսկ ձեր գլխի ամեն մազերն էլ համարուած են: Աւրեմն մի վախենաք:—

Սակայն ինչ դրութեան մէջ ենք տեսնում մեզ ամեն օր.

Հոգսերի, երկիւղի, անվստահութեան առ հասարակ մեղաց և տկարութեան մէջ:

Յովհաննէս. 3 դլ. 6 հ.—Մարմնիցը ծնուածը մարմին է:

Մեթէ չ'կան սուրբ մարդիկ՝ առանց մեղքի.

Մէկն էլ չ'կայ և չէ եղել:

Հռովմայեց. 3 գլ. 23 հ.—Որովհետև ամենքը մեղանչեցին, և Աստուծոյ փառքիցը պակասուած են:

Յակոբոս. 3 գլ. 2 հ.—Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենքս:—

Ուրեմն ինչ խոստովանութիւն պիտի անէ ամեն մի մարդ:

«ես մեղաւոր եմ»:

Ապա Աստուծոյն ինչ ենք պարտական, քանի որ Նա, չ'նայելով մեր մեղքերին, պահում ու պահպանում է մեզ.

Խորին խոնարհութեամբ նորանից զոհանալ, նորան օրհնել, ծառայել և հնազանդել:

Ծննդոց. 32 գլ. 10 հ.—Նա արժանի չեմ այն ամեն ողորմութիւններին և ամեն հաւատարմութեանը, որ քո ծառային արել ես:

Նփեսաց. 5 գլ. 20 հ.—Ամեն ժամանակ ամեն բանի համար զոհացէք Աստուածանից և

Հօրիցը մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը:

Բայց ինչ ձգտում կ'զգայ խղճմտանք ունեցող մարդը, Աստուծոյ գթութիւնը վայելելով և իր մեղքերը տեսնելով:

Կ'փափագէ մեղքերի թշուառութիւնից ազատուել:

Կարո՞ղ է մարդս իր զօրութիւնով ինքը իրան ազատել:

Ո՛չ ուրիշ մարդ էլ չէ կարող օգնել այդ նեղութիւնից:

Բայց եթէ շատ բարի գործքեր գործենք, մի՞թէ սա էլ չի օգնել.

Ոչ ծոմապահութիւնը, ոչ պասը, ոչ ուխտատեղ զնալը, ոչ էլ փող տալը կարող է մեր մեղքերը ոչնչացնել:

Յակոբոս. 2 գլ. 10 հ.—Վասն զի ով որ բոլոր օրէնքը պահէ և մէկումը մեղանչէ, ամեն օրէնքին եղաւ պարտական:

Ղուկաս. 17 գլ. 10 հ.—Այնպէս էլ դուք, երբոր բոլոր ձեզ հրամայուած բաներն անէք, ասեցէք, թէ մենք անպիտան ծառաներ

ենք. որովհետեւ այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու:

Ի՞նչ պիտի սպասենք մեր շեղքերի համար.

Յաւիտենական դատապարտութիւն:

Մի՞թէ բնաւ ազատուելու միջոց չ'կայ.

Փնօք Աստուծոյ, կայ՝ փրկագործութիւնն էլ կատարուեց մեղաւորներիս համար:

Հռովմայեց. 7 դլ. 24, 25 հ.—Ես ինչ խեղճ մարդ եմ. ո՞վ կ'ապրեցնէ ինձ այս մահի մարմնիցը: Ծնորհակալ եմ Աստուածանից մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը:

Յոր. 19 դլ. 25 հ.—Իսկ ես զիտեմ որ փրկիչս կենդանի է:

Ա. Տիմոթէոս. 1 դլ. 15 հ.—Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուսն աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց առաջինը ես եմ:

ԵՐԿՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾԸ:

Փրկագործութեան մասին:

Ես հաւատում եմ Յիսուս Քրիստոսը՝ միաճին Որդին Աստուծոյ՝ մեր Տերը, որ Հոգով Սրբով լղացած է, ծնուած է Մարիամ կուսից, չարչարուած է Պոնտացի Պիղատոսի ժամանակ, խաչուած, մեռած և թաղուած է, իջել է դժողքն, երրորդ օրումն յարուժիւն է առել մեռածներից, համբարձուած է երկինք, նստած է Աստուծոյ՝ ամենակարող Հօր՝ աջ կողմում, որտեղից Նա գալու է դատելու կենդանիքը և մեռեալքը:—

Սա ի՞նչ է նշանակում.

Ես հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոս՝ ճշմարիտ Աստուած՝ Հօրից յաւիտեան ծնեալ և ճշմարիտ մարդ՝ Մարիամ կուսից ծնուած՝—իմ Տէրս է, որը ինձ՝ կորած և դատապարտուած մարդուս՝ ազատել է, գնով ստացել է և ձեռք բերել ամեն մեղքերից, մահից և սատանայի իշխանութիւնից, ոչ թէ ոսկով և արծաթով, այլ իւր սուրբ և թանգագին արիւնով և իր անմեղ չարչարանքով և մահով,

որպէս զի ես նորա սեփականը լինիմ և Նորա արքայութեան մէջ Նորա իշխանութեան տակ ապրիմ և Նորան ծառայեմ մշտնջենաւոր արդարութիւնով և անմեղութիւնով, — ինչպէս որ ինքը մահից յարութիւն է առել, կենդանի է և թագաւորում է յաւիտեան: —

Արդար և ճշմարիտ է այս: —

Ո՞վ է մեր փրկիչը.

Յիսուս Քրիստոս:

Գործք Առաքել. 4 գլ. 12 հ. — Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով փրկութիւն չ'կայ. որովհետեւ ուրիշ անուն էլ չ'կայ երկնքի ներքեւ մարդկանց արուած, որով կարելի լինի մեզ փրկուիլ:

Ի՞նչ է նշանակում Յիսուս անունը.

Փրկիչ, երջանկացնող:

Ի՞նչ է նշանակում Քրիստոս անունը.

Սուրբ Հոգով օծեալ:

Միթէ չէր կարող մեզ մի ուրիշ մարդ կամ հրեշտակ փրկել.

Ոչ՝ մարդիկ չեն կարող, որովհետեւ իրանք

մեղաւոր են և նորանց անմտքուր արիւնը Աստուծոյ առջև զին չ'ունի: — Իսկ հրեշտակներն էլ չեն կարող մեզ փրկել, որովհետեւ իրանք մարդիկ չեն, և միայն մարդը կարող է մարդոյ փոխարինել:

Սաղմոս. 49 գլ. 7, 8 հ. — Մարդ չէ կարող իր եղբորը փրկել, և ոչ նորա փրկանքը տալ Աստուծուն. որովհետեւ թանգ է նորանց անձերի փրկանքը, և յաւիտեան կ'զարէ:

Ուրեմն Յիսուս ի՞նչ պիտի լինէր, որ կարող լինէր մեզ փրկել.

Աստուած և մարդ:

Յովհաննէս. 3 գլ. 16 հ. — Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չ'կորչի այլ յաւիտեանական կեանքն ունենայ:

Փիլիպպեց. 2 գլ. 6, 7 հ. — Քրիստոս Յիսուս Աստուծոյ կերպարանքումը լինելով, յափշտակութիւն չ'համարեց Աստուծուն հաւասար լինել: Այլ իր անձն ունայնացրեց, և ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդի պէս գտնուելով: —

Ի՞նչ զարմանալի անուշով կարող ենք
կոչել Յիսուսին.

Աստուածմարդ:

Ո՞վ է վկայում մեզ՝ թէ Քրիստոսը ճշ-
մարտապէս Աստուծոյ Որդին է.

1) Նա ինքը վկայում է այդ քահանայապե-
տի առջև, 2) Նորա աշակերտները նոյն վը-
կայութիւն են տալիս և 3) Սուրբ Հոգին
էլ վկայում է նորա մասին:

Յովհաննէս. 10 գլ. 30 հ.—Նա և Հայրը մի ենք:

Յովհաննէս. 14 գլ. 9 հ.— Ինձ տեսնողը Հօրը
տեսաւ:

Բ. Պետրոս. 1 գլ. 17, 18 հ.—Հայր Աստուածա-
նից պատիւ և փառք առաւ, երբոր
այն մեծ վայելչութեան փառքիցն այն-
պիսի ձայն եկաւ նորան թէ Դա է
իմ սիրելի Որդին, որին ես հաւանել
եմ: Եւ այս ձայնը մենք լսեցինք երկն-
քիցն եկած, երբոր Նորա հետ այն
սուրբ սարումն էինք:—

Հռովմայից. 1 գլ. 4 հ.—Աստուծոյ Որդի սահման-
ուեցաւ զօրութիւնով սրբութեան
Հոգու կողմանէ՝ մեռելներից յարու-
թիւն առնելուցը, մեր Տէր Յիսուս
Քրիստոսի համար:—

Եթէ Յիսուս Քրիստոսը Աստուած է,
ինչպէս կարող էին աշակերտները և ու-
րիշ մարդիկը տեսնել նորան.

Յիսուսը, թէև Աստուած էր, բայց մարմնա-
ցաւ ու մեզ նման դարձաւ:

Որտեղ էր Նա մինչև իրա աշխարհք
գալը.

Յաւիտենից Հօր մօտ էր:

Յովհաննէս. 1 գլ. 1 հ.—Սկզբումն էր բանը. և
բանն Աստուծոյ մօտ էր. և բանն Աս-
տուած էր:

Յովհաննէս. 1 գլ. 14 հ.— Եւ բանը մարմին ե-
ղաւ՝ և բնակուեց մեր մէջ. և նորա
փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից ե-
ղած միածնի փառք՝ շնորհքով և
ճշմարտութիւնով լիքը:

Ո՞ւմից ստացաւ Նա մարմինը.

Իւր մօրից՝ Մարիամ կուսից:

Ի՞նչ դարձաւ Նա գորանով.

Ճշմարտապէս մարդ:

Բայց իբրև մարդ էլ՝ ինչով էր տարբեր-

վում նա միւս մագկանցից,

Յիսուսը առանց մեղքի էր:

Ներայեց. 4 գլ. 15 հ.—Որովհետև ոչ թէ այնպիսի քահանայապետ ունինք որ չ'կարողանայ մեր տկարութիւններին հետ կարեկից լինիլ. այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձուած մեր նմանութեամբ, բայց առանց մեղքի:—

Ինչո՞ւ համար Յիսուսը առանց մեղքի էր.

Որովհետև նա Սուրբ Հոգուցը յղացած էր և ոչ թէ մահկանացու մարդուցը:

Ղուկաս 1 գլ. 35 հ.— Հրեշտակը պատասխանեց և ասեց նորան. Սուրբ Հոգին կ'գայ քեզ վերայ, և Բարձրեալի զօրութիւնը քեզ վերայ կ'հովանաւորէ, վասնորոյ և այն ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որդի կ'կոչուի:—

Ի՞նչ բերաւ Յիսուսը այս աշխարհքս.

Աստուծոյ արքայութիւնը:

Ինչո՞վ բերաւ նա այդ.

Իր վարդապետութիւնով, կեանքով, չարչա-

րանքով, մահով և յարութիւնով:—

Ի՞նչ է Աստուծոյ արքայութիւնը երկրիս վերայ.

Արդարութիւն և խաղաղութիւն և ուրախութիւն Սուրբ Հոգովը:

Հովմայեց. 14 գլ. 17 հ.— Աստուծոյ արքայութիւնն ուտելիք և խմելիք չէ. այլ արդարութիւն և խաղաղութիւն և ուրախութիւն Սուրբ Հոգովը:

Ի՞նչ պաշտօնով սկսեց Յիսուսը իր գործը.

Մարգարէական պաշտօնով. իբրև մարգարէ յայանուեց նա իր ժողովուրդին:

Ի՞նչ էր անում Յիսուսը իբրև մարգարէ.

Նա անդադար ժողովուրդին սովորեցնում էր ու քարոզում:

Ի՞նչ առարկայի վրայով էր քարոզում նա.

Աստուծոյ արքայութեան վրայով:

Ինչպէս կարող էր Նա յայտնել մարդկանց Աստուծոյ արքայութեան խորհուրդները.

Վարող էր, որովհետև ինքը Հօրիցն էր եկել աշխարհքը:

Յովհաննէս. 7 գլ. 16 հ.—Իմ վարդապետութիւնն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է:

Բացի քարոզելուց էլ ի՞նչ էր անում Նա.

Հրաշխներ ու նշաններ էր կատարում:

Բայց ի՞նչ պաշտօնով Նա մեզ համար էլ Աստուծոյ արքայութեան մուտքը բացեց.

Իւր քահանայապետական պաշտօնովը:

Ի՞նչ էր քահանայապետը Իսրայէլի մէջ.

Միջնորդ էր Աստուծոյ և ժողովուրդի մէջ, — ժողովուրդի փոխանորդը:—

Ի՞նչ էր անում քահանայապետը ժողովուրդի համար.

Նա ժողովուրդի մեղաց համար ընծաներ և զոհեր էր մատուցանում իբրև պատարագ:—

Բայց ի՞նչ պիտի ասենք Հին ուխտի քահանայապետութեան մասին.

Նա անկատարեալ էր:—

Ի՞նչ էին նորա պակասութիւնները.

Առաջինը, որ քահանայապետը ինքը կատարեալ չէր, այլ մեղաւոր մարդ էր. զորա համար էլ առաջ պէտք էր իրա համար պատարագ մատուցանէր: Երկրորդը, — պատարագը կատարեալ չէր, որովհետև անասնի արիւնով մեղքերը չեն կարող ջնջնուել: Եւ վերջապէս տաճարն էլ կատարեալ չէր, որովհետև մեղաւոր մարդկանց ձեռներով էր շինուած:

Ուրեմն այն պաշտօնի նշանակութիւնը և էութիւնը ո՞ւմ միջոցով ճշմարտապէս կատարուեց.

Յիսուս Քրիստոսի միջոցով և միմիայն նորանում:

Ի՞նչ կարողացաւ կատարել Յիսուսը ճշմարիտ քահանայապետ լինելով.

Կորած և զատապարտուած մարդկանց ազատել մահից, մեղքից և սատանայի իշխա-

Նութիւնից:

Ա. Յովհաննէս. 1 գլ. 7 հ.— Յիսուսի Քրիստոսի արիւնը մեզ սրբում է ամեն մեղքից:

Ա. Յովհաննէս. 3 գլ. 8 հ.— Նորա համար յայտնուեցաւ Աստուծոյ Որդին, որ սատանայի գործերը քանդէ:

Յովհաննէս. 11 գլ. 25 հ. Ես եմ յարութիւնը և կեանքը. ինձ հաւատացողը թէև մեռնի էլ, կ'ապրի:

Ուրեմն էլ ո՛ւմ ազատեց Նա.

Ինձ և ամեն մէկին, որը ուզում է ազատուել:

Ինչո՞ւ համար կորած և դատապարտուած ենք եղել.

Որովհետև մեր կամքով ընկանք մեղքի մէջ:

Ի՞նչ է մեղքի վարձքը.

Մահ:

Հռովմայեց. 6 գլ. 23 հ.— Որովհետև մեղքի վարձքը մահն է:

Սակայն ոչ թէ ժամանակաւոր մահը,

այլ ինչն է մեղքի ամենազարհուրելի հետեանք.

Յաւիտենական մահը կամ թէ դատապարտութիւն:

Ի՞նչ դառաւ ինձ համար Յիսուսը, ինձ փրկելով.

Նա իմ Տէրս եղաւ, իմ թաղաւորս:

Ուրեմն ի՞նչ է Քրիստոսի երբորդ պաշտօնը.

Թաղաւորական պաշտօնը:

Բայց երբ է յայտնուելու Նա իբրև թագաւոր.

Վերջի օրում:

Ի՞նչպէս եմ պարտաւոր ես ապրել այս թագաւորի արքայութեան մէջ.

Ինչպէս հաւատարիմ հպատակին վայելում է, այս ինքն նորա կամքին հնազանդ:

Ինչո՞վ է սկսել Յիսուս իր գործը.

Նա մկրտուել է Յովհաննէսի ձեռքով յետոյ իրա համար 12 աշակերտներ ընտրել և ըս-

կսել է իրան իբրև Փրկիչ ապացուցանել:

Մատթէոս. 9 գլ. 35 հ.—Եւ Յիսուսն ամեն քաղաքները և գիւղերը ման էր գալիս. նորանց ժողովարաններումը սովորեցնելով և արքայութեան աւետարանը քարոզելով և ժողովուրդի մէջ ամեն ցաւն և ամեն հիւանդութիւնը բժշկելով:

Ե՞րբ չարչարուեց Յիսուսը մարդկանց փրկութեան համար.

Երբոր Պոնտացի Պիղատոսը չըէաստանի կուսակալն էր:

Ի՞նչ մահով մեռաւ Նա մեզ համար.

Խաչափայտի վերայ:

Ինչո՞ւ հենց խաչի վերայ սիրտի մեռնէր Յիսուս.

Որովհետև փայտի վերայ կախուածը իբրև անիծեալ էր համարվում և Քրիստոս ուզում էր մեր անէծքը իրան վերայ վերըցնել:

Գաղատաց. 3 գլ. 13 հ.—Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքիցը մեզ համար անէծք լինելով (վասնզի գրուած է թէ Անի-

ծեալ լինի ամեն փայտից կախուածը):

Ուրեմն ազատ ենք հիմա մեղքից, մահից և սատանայից.

Այո, որովհետև եթէ Քրիստոսումն ենք, այն ժամանակ մեղքը, մահը և սատանայի իշխանութիւնը կործանուած է. մեղքը ու սատանան այլևս չեն կարող մեզ դատապարտել և մահն էլ մեզ համար յաւիտենական կեանքի դուռն է:

Հռովմայեց. 8 գլ. 1 հ.—Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ Յիսուս Քրիստոսումը լինողների համար, որ մարմնաւորապէս չեն վարվում, այլ հոգևորապէս:

Ի՞նչ նպատակով է փրկել մեզ Քրիստոսը.

Որպէս զի մենք՝ մեղքին մեռած՝ մեր փրկչի համար ապրինք:

Հռովմայեց. 14 գլ. 7, 8 հ.—Որովհետև մեղանից ոչ ով ինքն իրան համար չէ ապրում, և ոչ ով ինքն իրան համար չէ մեռնում: Որովհետև եթէ ապրենք՝ Տիրոջ հնք ապրում, և եթէ մեռնենք՝ Տիրոջ

ենք մեռնում. ուրեմն եթէ ապրենք և
թէ մեռենք՝ Տիրոջն ենք:

Ի՞նչ են անում այն քրիստոնեաները, ո-
րոնք չ'նայած Քրիստոսի փրկութեանը,
մեղքի մէջ են մնում.

Նորանք Քրիստոսի արիւնը ոտնակոխ են
անում և Աստուծոյ Որդոյն կրկին խաչում
են:

Երբայց. 10 գլ. 28 հ.—Մեկը, որ Մովսէսի օ-
րենքն անարգում էր, առանց ողորմու-
թեան երկու կամ երեք վկայի խօսքով
մեռնում էր: Ել սրբան աւելի, կարծում
էք, սաստիկ պատժի կ'արժանանայ, նա
որ Աստուծոյ Որդուն ոտքի տակը կո-
խեց, և ուխտի արիւնը պիղծ համա-
րեց որով նա սրբուեցաւ, և չնորճքի
չողուն նախասեց.

Ի՞նչ եղաւ Քրիստոս մեռնելուց յետոյ.

Նա թաղուեցաւ և իջաւ դժոխքն, որտեղ
իրան իբրև յաղթող ապացուցեց:

Ա. Պետրոս. 3 գլ. 18, 19 հ.—Որ թէև մեռաւ
մարմնով, բայց կենդանի եղաւ հո-
գով. Որով գնաց բանտում եղող հո-
գիներին ել քարոզեց:

Ինչո՞վ ապացուցեց Նա իր յաղթութիւնը.
Նա յարութիւն առաւ մեռելներից և 40 օ-
րից յետոյ համբաձուեց երկինք:

Գործք Առաքել, 3 գլ. 15 հ.—Կեանքի Առաջնոր-
դին սպանեցիք, որին Աստուած
մեռելներից յարութիւն տուաւ.
որի վկաներն ենք մենք:

Ղուկաս. 24 գլ. 51 հ.—Եւ եղաւ որ Նա նորանց
օրհնելիս, ջոկուեց նորանցից, և վերա-
նում էր երկինքը.

Հիմա ի՞նչ է անում Նա երկնքում.

Նստած է Աստուծոյ աջ կողմն:

Սա ի՞նչ է նշամակում.

Նա մասնակցում է աշխարհքի կառաւարու-
թեան մէջ:

Ա. Պետրոս. 3 գլ. 22 հ.—Որ գնացել է երկինքը,
և Աստուծոյ աջ կողմն է. հրեշտակ-
ներն և իշխանութիւններն և զօրու-
թիւններն հնազանդելով նորան:—

Ի՞նչքան ժամանակ է մնալու Նա այն-
տեղ.

Մինչև վերջին օրը:

Յետոյ ի՞նչ է լինելու.

Նա կրկին փառքով կ'գայ այս աշխարհը
դատելու կենդանիքը և մեռեալքը:

Գործք Առաքել. 1 գլ. 11 հ.—Այս Յիսուսը, որ
ձեզանից վերացաւ երկինքը,
այսպէս կ'գայ ինչպէս նորան
տեսաք երկինքը գնալիս:—

Բ. Կորնթաց. 5 գլ. 10 հ.—Մենք ամենքս պէտք
է յայտնի լինենք Քրիստոսի ասեա-
նի առաջին. որ ամեն մէկն ընդու-
նի իր մարմնովն՝ ինչ որ գործեց՝
թէ բարի և թէ չար:

Ի՞նչ կ'դատէ Քրիստոս վերջին օրումը.

Մեր գործքերը, խօսքերը ու մտքերը:

Մատթէոս. 12 գլ. 36 հ.—Բայց ասում եմ ձեզ,
թէ ամեն դատարկ խօսքի համար, որ
մարդիկ խօսեն՝ դատաստանի օրը
համար պիտի տան:

Ա. Կորնթաց. 4 գլ. 48 հ.—Ուրեմն ժամանակից
առաջ մի դատէք. մինչև Տէրը գայ՝
որ խաւարի ծածուկ բաները կ'բե-
րէ էլ լոյսի մէջ, և սրտերի խոր-
ուրդները կ'յայտնէ, և այն ժամա-
նակ ամեն մէկին դովասանք կ'լինի
Աստուածանից:—

Տէրը ինչով կ'դատէ մեզ.

Իւր սուրբ խօսքովը:

Յովհաննէս 12 գլ. 49 հ.—Ինձ անարգողը և իմ
խօսքերը չ'ընդունողը ունի իրան դա-
տողին. այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա
կ'դատէ նորան յետին օրը:

Արդ ինչպէս պիտի սպասենք Քրիստո-
սի գալը.

Պիտի յաճախ յիշենք այն օրը և պատրաս-
տուենք արթուն կենալով, աղօթք անելով
և սրբութիւնով ծառայենք Տիրոջը:

Յովհաննէս. 12 գլ. 26 հ.—Եթէ մէկը ծառայէ
ինձ, թող նա իմ ետեից գայ. և ուր
եւ եմ, այնտեղ էլ իմ պաշտօնեան
կ'լինի:

Մատթէոս. 16 գլ. 24 հ.—Եթէ մէկը կամենում է
իմ ետեից գալ, թող իր անձն ուրա-
նայ և իր խաչն առնէ, և իմ յետեից
գայ:

Յովհաննէս. 14 գլ. 1 հ.— Աստուծուն հաւատա-
ցէք և ինձ հաւատացէք:—

ԵՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ:

Սրբագործութեան մասին:

Ես հաւատում եմ Հոգին Սուրբ, մէկ սուրբ քրիստոնէական եկեղեցին՝ սուրբերի ժողովքը՝ մեղքերի թողութիւն, մարմնոյ յարութիւն և յաւիտենական կեանք:—Ամէն:

Սա ինչ է նշանակում.

Ես հաւատում եմ, որ ոչ իմ սեփական բանականութիւնով կամ թէ զօրութիւնով կարող եմ հաւատալ Յիսուս Քրիստոսը՝ իմ Տէրը՝ կամ մօտենալ նորան, այլ Սուրբ Հոգին է ինձ աւետարանով կոչել, իւր շնորհներով լուսաւորել, ուղիղ հաւատքի մէջ սրբել և պահպանել. ինչպէս որ և բոլոր քրիստոնէութիւնը երկրիս վերայ կոչում է ժողովում է, լուսաւորում է, սրբում և ուղիղ միաբան հաւատով պահում է Յիսուս Քրիստոսի մօտ. նոյն քրիստոնէական ժողովուրդի մէջ նա ինձ և ամեն հաւատացեալներին ամեն օր առատութեամբ թողում է բոլոր մեղքերը և վերջին օրում ինձ և բոլոր մեռածներին յարուցանելու է և ինձ

բոլոր հաւատացեալների հետ միասին Քրիստոսով պարգևելու է յաւիտենական կեանք:—Արդար և ճշմարիտ է այս:—

Ո՞վ է կատարում սրբագործութիւնը մարդկանց մէջ.

Սուրբ Հոգին:

Ո՞վ է Սուրբ Հոգին.

Աստուածութեան երրորդ անձնաւորութիւնը:

Ի՞նչ է հիմնադրել նա այս աշխարհքում.

Մի սուրբ քրիստոնէական եկեղեցի:

Ի՞նչ է ստանում մարդս՝ իբրև եկեղեցոյ անդամ՝ Սուրբ Հոգուցը.

Փրկութիւն:

Բայց ի՞նչ է պահանջվում մարդուց փրկուելու համար.

Ապաշխարութիւն և հաւատ աւետարանին:

Մարկոս. 1 գլ. 15 հ — Ժամանակը կատարուել է,
և Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցել

է. սպաշխարհեք և հաւատացէք աւետարանին:

Ի՞նչ է նշանակում սպաշխարհել.

Իւր մեղքերից դառնալ:

Ի՞նչ է հարկաւոր դորա համար.

Առաջ կենդանի կերպով իւր մեղքը ճանաչել, ինչպէս անառակ որդին. յետոյ սրտանց զղջալ, ինչպէս Պետրոսի օրինակիցն ենք տեսնում և վերջապէս խոնարհութեամ միայն Աստուծոյ ողորմութիւնը փափագել:

Սաղմոս. 51 զլ. 17 հ.—Աստուծոյ ընդունելի պատարագները կտարուած հոգին է. կտարուած ու փշրուած սիրտը դու չես անարգիլ, ով Աստուած:

Ղուկաս. 18 զլ. 13 հ.—Մաքսաւորը հեռու կանգնած էր, իր աչքերն էլ չէր կոմննում դէպի երկինք բարձրացնել, այլ իր կուրծքը ձեռնում էր և ասում. ով Աստուած, ողորմիր ինձ մեղաւորիս:—

Ի՞նչ է նշանակում հաւատալ աւետարանին.

Վստահութեամբ ընդունել Քրիստոսին, ինչպէս նա աւետարանում, իբրև մեր Փրկիչը,

նկարագրուած է:

Կարող է մարդս իւր զօրութիւնով հաւատալ Յիսուս Քրիստոսին.

Ո՛չ, բնութիւնից մենք հոգեպէս մեռած ենք:

Ա. Կորնթ. 2 զլ. 14 հ.—Շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում որովհետև նորանք յիմարութիւն են նորա համար. և չէ կարող էլ գիտենալ՝ որովհետև հոգեւոր կերպով են քննվում:—

Ուրեմն ո՞վ պիտի մեզ օգնէ հաւատալու համար.

Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգին ինչպէս է կատարում իւր գործը.

Ոչ թէ յանկարծակի, ինչպէս շատերը ասում են, այլ աստիճանաբար, այս ինքն, կոչում է, լուսաւորում, սրբում և պահում:

Ի՞նչ է նշանակում թէ՛ Սուրբ Հոգին կոչում է.

Նա հրաւիրում է ամեն անձին աշխարհքից
զնալ և Յիսուսին մօտ գալ:

Յայտնութիւն. 18 զլ. 4 հ.—Դուրս եկեք Բարի-
լօնից, ով իմ ժողովուրդ, որ մաս-
նակից չ'իւնիք զօրա մեղքերին, և
որ զօրա պատուհասիցը չ'ընդու-
նիք:

Մատթէոս. 11 զլ. 28 հ.—Ինձ մօտ եկէք, ամեն
վատակածներ և բռնաւորուածներ,
և ես հանդիստ կ'տամ ձեզ:

Ինչո՞վ է կանչում Սուրբ Հոգին մարդ-
կանց.

Աւետարանով, քարոզներով, բայց առաջ Աս-
տուծոյ ողորմութիւնը մարդկանց սրտերը
թէ նեղութիւններով և թէ զթուլթիւններով
ընդունակ է դարձնում սորա համար:

Հռովմայեց. 2 զլ. 4 հ.—Աստուծոյ քաղցրութիւնը
քեզ ապաշխարութեան է տանուեւ:—

Սրգեօք ընդունում են մարդիկ Աստու-
ծոյ հրաւերը.

Միայն քիչերը, իսկ մեծամասնութիւնը ար-
համարում է:

Մատթէոս. 22 զլ 5 հ.—Իսկ նորանք անհոգ լի-

նելով գնացին մէկն իր արտը, միւսն
իւր առուտուրին:

Մատթէոս. 23 զլ. 37 հ.—Երուսաղէմ երուսաղէմ,
մարդարէնները կոտորող, և քեզ մօտ
ուղարկուածները քարկոծող. քանի
անգամ կամեցայ քո երեխաները ժո-
ղովիլ, ինչպէս հաւը ժողովում է իր
ձագերը թեւերի տակը. և դուք չ'կամե-
ցաք.—

Ի՞նչ փոփոխութիւն է յառաջ բերում
Սուրբ Հոգին այն մարդկանց մէջ, ո-
րոնք Նորա կոչումը ընդունում են.

Նորանք արթնանում են մեղաց քնից և
զգում են մի առանձին ձգտում դէպի Աս-
տուած և Նորա խօսքը:—

Նիհասաց. 5 զլ. 14 հ.—Վեր կաց, ով քնած, և վեր
կանգնիր մեռելներից, և Քրիստոսը կ'ըն-
սաւորէ քեզ:

Յետոյ Սուրբ Հոգին ի՞նչ է անում մար-
դոյ.

Նորան դարձի է բերում:

Սա ինչպէս է լինում.

Սուրբ Հոգին լուսաւորում է մարդոյն, հաս-

կայնում է նորան իրան մեղքը և զրութիւնը և մարդս այս տեսնելով, տրտմում է ու աղաղակում զէպի Աստուած և խնդրում է շնորհք ու ողորմութիւն:

Բ. Կորնթաց. 7 զլ. 10 հ.—Որովհետև Աստուծոյ ուղած կերպով արտմութիւնը, ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց զղջալու. բայց աշխարհքի տրտմութիւնը մահ է գործում:—

Յետոյ ինչ է լայտնում Սուրբ Հոգին մարդոյն.

Նա ցոյց է տալիս, որ Յիսուսի մահով մարդու բոլոր մեղքերը ջնջուած են և Աստուծոյ ողորմութիւնը ձեռք բերուած է: Մարդս ընդունում է Քրիստոսին, իբրև իր փրկիչը, արդարացնվում է Աստուածանից Յիսուսի համար և ապա ունենում է խաղաղութիւն:

Եսայիա. 1 զլ. 18 հ.—Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան. եթէ նորանք որդան կարմիրի պէս լինին, ասրի պէս սպիտակ պիտի դառնան:

Եզեկիել. 33 զլ. 11 հ.—Կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ ես ամբարշտի մեռնելը

չեմ ուզում, այլ որ ամբարիշտը դարձի զայ իր ճանապարհիցը և ապրէ:

Հռովմայեց. 5 զլ. 1 հ.—Արդ մենք՝ հաւաարով արդարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը:

Ինչով է լցվում յետոյ մարդոյ սիրտը.

Աննկրագրելի ուրախութիւնով և երջանկութիւնով:

Եւ ինչ հաստատ որոշումն է գոյանում մարդոյ սրտի մէջ.

Մարդս կամենում է որ բարի վաղը ունենայ:

Եփեսաց. 4 զլ. 22, 23, 24 հ.—Որ ձեզանից դուրս հանէք առաջի զնայքի պէս և զող հին մարդը որ խաբեբայութեան ցանկութիւնովն ապականուած է. և նոր մարդին հագնէք՝ որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է՝ ճշմարտութեան արդարութիւնովը և սրբութիւնովը:—

Այն ժամանակ մեղաւորը ինչ է դաւնում.

Մի նոր արարած:

Ինչից է իմացվում այս նորոգութիւնը.
Մարդուս կեանքը ու գործը լաւ ու մարուր
է դառնում:

Ի՞նչ է հարկաւոր մարդու կողմից այս
նորոգութեան համար.

Նորա յօժար կամքը և համաձայնութիւնը:

Փիլիսոփայեց. 3 դլ. 12 հ.—Ոչ իբր արդէն բռնած
լինեմ, կամ թէ արդէն կատարեալ ե-
ղած լինեմ, բայց հետևում եմ որ իցէ
թէ հասնեմ Նորան, ինչպէս որ էլ հէնց
Քրիստոս Յիսուսիցը բռնուած եմ:

Ուրեմն ի՞նչ չէ կարող կատարել անհա-
ւատը.

Բարի գործքեր:

Հուովմայեց. 14 դլ. 23 հ.—Նւ ամեն ինչ որ հա-
ւատքից չէ, մեղք է:—

Մարդիկ էլ այսպէս են դատում.

Ոչ՝ մարդիկ ներսը տեսնել չեն կարող:

Ի՞նչ օրինակ գիտես սորա համար.

Փարիսեցիք, որոնք աղօթք էին անում, ծոմ
պահում, ողորմութիւն տալիս:

Բայց ի՞նչ նպատակով էին անում այդ.
Նորանք ուզում էին փառաւորուել մարդ-
կանցից:

Ուրեմն ի՞նչպիսի հնազանդութիւն է
սիրում Աստուած.

Սիրոյ հնազանդութիւն:

Ա. Կորնթաց. 13 դլ. 3 հ.—Նւ եթէ իմ ամեն ա-
պրանքներն աղքատներին ուտե-
ցնեմ և իմ մարմինը մատնեմ որ
այլուի, բայց սէր չունիմ, ես ո-
չինչ օգուտ չեմ ունենալ:

Բայց ի՞նչ գործքեր շատերը բարի են
համարում.

Չատերը սխալմամբ ասում են թէ՛ ծոմա-
պահութիւնը, ողորմութիւն տալը, վանք
գնալը և այլն բարի և փրկարար գործքեր
են. իսկ սուրբ գրքի հաշվով այդ ուղիղ չէ:

Որքան կարևոր է կեանքի սրբութիւնը.

Առանց նորան ոչ ով չէ կարող երկինք մտ-
նել:

Սրգեօք կատարեալ է մեր սրբութիւնը

Երկրէս վերայ.

Ոչ՝ միայն այն ժամանակ է կատարեալ համարվում Աստուծոյ առջև, երբոր մենք մինչև մահ հաւատոյ մէջ ենք մնում:

Ուրեմն քանի որ մարմնոյ մէջ ենք, ինչ կարող է պատահել մեզ.

Կարող ենք մեր հաւատքը կորցնել:

Ի՞նչ օրինակով է հաստատում այդ Պօղոսը.

Իսրայելի օրինակով:

Ա. Կորնթաց. 10 գլ. 6 հ.—Եւ սորանք մեզ օրինակի համար եղան, որ մենք չար բաների ցանկացող չ'լինենք, ինչպէս նորանք ցանկացան:

Ա. Կորնթաց. 10 գլ. 12 հ.—Ուրեմն ով որ համարում է թէ հաստատ կանգնած է, թող զգոյշ լինի, որ վայր չ'ընկնի:—

Ո՞վ պիտի պահէ մեզ հաւատոյ մէջ.

Սուրբ Հոգին:

Ի՞նչ է գոյանում սրբուած մարդոյ մէջ.

Անդադար պատերազմ հին և նոր մարդոյ մէջ:

Գաղատաց. 5 գլ. 17 հ.—Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին մարմնին հակառակ, և սորանք իրար հակառակ են:—

Ի՞նչ է սրբութեան նպատակը.

Կատարելապէս կերպարանափոխուել Քրիստոսի նմանութիւնովը և բաժանուել ամեն մեղանշական բաներից:

Բ. Կորնթաց. 3 գլ. 18 հ.—Բայց մենք ամենաբաց երեսով Տիրոջ փառքն ինչպէս հայելու մէջ տեսնելով՝ նոյն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դէպ ի փառք, ինչպէս թէ Տիրոջ հոգուցը:—

Բ. Տիմոթէոս. 2 գլ. 19 հ.—Բայց Աստուծոյ հաստատ հիմքը կանգնած է և այս կընիքն ունի, թէ Տէրը ճանաչում է նորանց որ իրն են, և թէ ետ կենայ անիրաւութիւնից այն ամենն որ Քրիստոսի անունն կանչում է:—

Կարող ենք բոլորովին անմեղ դառնալ.

Ո՞չ մեղքն միշտ կ'կալչէ մեզ, բայց այլևս ոչ թէ զիտմաւր կ'մեղանշենք, այլ տկարու-

Թիւնից և շտապելուց:

Ա. Յովհաննէս. 1 զլ. 8 հ.—Եթէ տսինք թէ մեզք չ'ունինք, մեր անձերը խարում ենք և ճշմարտութիւնը չ'կայ մեզանում:

Սորա համար էլ ի՞նչ պիտի անենք ամեն օր.

Աստուծոյ Հոգուց ամին օր մեղքերի թողութիւն աղերսենք:

Էլ ի՞նչ գործ է կատարում Սուրբ Հոգին մեզ վերայ.

Նա պահում է մեզ ուղիղ հաւատոյ մէջ մինչև և մեր կեանքի վերջը:

Մատթէոս. 24 զլ. 13 հ.—Քայց ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կ'փրկուի:

Ի՞նչ է պատահում այն մարդկանցը, որոնք Սուրբ Հոգոյ կոչումը շարունակ արհամարում են և հակառակութեամբ մերժում են նորան.

Նորանք ընկնում են մեղանշական հակառակութեան մէջ և այնուհետև Սուրբ Հոգին

չէ կարող ներգործել նորանց վերայ:—Ահա՛ դա է Սուրբ Հոգոյ դէմ մեղքը:

Մատթէոս. 12 զլ. 31 հ.—Սորա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք և հայհոյեանքը կ'թողուի մարդկանց. բայց Հոգիին դէմ հայհոյանքը չի թողուիլ մարդկանց:

Ուրեմն ի՞նչ է մարդկանց սուրբ պարտաւորութիւնը.

Դարձի գալը չ'յետաձգել այլ արդէն մանկութիւնից Յիսուսին նուիրուել:

Երբայց. 3 զլ. 7, 8 հ.—Նորա համար՝ ինչպէս Սուրբ Հոգին ասում է. այսօր՝ եթէ նորա ձայնը լսէք, մի խտացնէք ձեր սրտերը ինչպէս բարկանալու ժամանակումն, փորձութեան օրը անապատի մէջ:

Ո՞րն է Սուրբ Հոգոյ գործելու տեղը.

Սուրբ քրիստոնէական եկեղեցին:

Ինչո՞ւ համար է կոչվում նա քրիստոնէական.

Որովհետև Քրիստոս է նորա գլուխը:

Ինչո՞ւ համար ենք ասում թէ՛ հաւա-

տում ենք մէկ եկեղեցի.

Որովհետև բոլոր ճշմարիտ հաւատացեալները մէկ աներևոյթ եկեղեցոյ են պատկանում:

Ել ինչ ուրիշ անուն ունի՝ ճշմարիտ եկեղեցին.

Սուրբերի ժողովուրդ:

Բայց արտաքուստ այն մէկ եկեղեցին ինչպէս է երևում.

Իբրև շատ տեսանելի եկեղեցական դաւանութիւններ, որոնցից աւետարանական եկեղեցոյն 200 միլիօն մարդիկ են պատկանում, հռոմի—կաթոլիկ—եկեղեցոյն 196 միլիօն, յոյն—կաթոլիկ 100 միլիօն և հայ—լուսաւորչական մօտաւորապէս 4 միլիօն մարդիկ:

Ե՞րբ է հիմնուել եկեղեցին Սուրբ Հոգուց.

Հոգեգալուստի կամ Պէնտէկոստէի օրում, ինչպէս պատմում է սուրբ գիրքը Գործք Առաքելոց 2-րդ գլխում:

Միթէ՞ եկեղեցոյ բոլոր անդամները սուրբ են.

Ոչ, Տէրը ինքն պատմում է մեզ, որ մի և նոյն ուռկանում լաւ և վատ ձկներ են լինում և մի և նոյն դաշտի վերայ ցորեն ու որոմ են գտնվում:

Ուրեմն մարդս ինչ բանի պիտի հետեւէ.

Որ եկեղեցոյ կենդանի անդամը լինի:

Իսկ տեսանելի եկեղեցիներից ո՞րն է ամենաուղիղը.

Այն, որը Քրիստոսի վարդապետութեան վերայ ոչինչ չէ աւելացնում և նորանից ոչինչ էլ չէ պակսեցնում և որի մէջ խորհուրդները Քրիստոսի սահմանադրութեան համեմատ են դործ ածվում:

Յովհաննէս. 8 գլ, 31 հ.—Եթէ դուք իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք:

Գործք առաքել. 2 գլ, 42 հ.—Եւ միշտ հետևում էին առաքեալների վարդապետութեանը և հաղորդութեանը և հացի կտրելին՝ և աղօթքներին:

Ապա ի՞նչ վկայութիւն կարող ես ատշ աւետարանական—Լուծերական եկեղեցոյ համար.

Ուրախ սրտով պիտի ասեմ ամեն մէկին՝ թէ իմ տւետարանական—Լուծերական եկեղեցիս ունի այն յատկութիւնները, որոնք ուղիղ եկեղեցոյ համար անհրաժեշտ են:

Սորա համար ի՞նչ ես պարտական քո եկեղեցուն.

Պիտի նորան հաւատարիմ լինիմ և նորա դաւանութեան մէջ մնամ. նորա շնորհաց միջոցները պորժ դնեմ, իմ վարքովս նորա պատիւը պահեմ, նորա համար աղօթեմ և այն պոհաբերութիւնները, որոնք նորա բարելաւութեան համար հարկաւոր են, յօժարութեամբ կատարեմ:

Գաղատաց. 6. դլ. 10 հ.—Ուրեմն քանի որ ժամանակ ունինք, բարի գործենք, մանաւանդ հաւատքի ընտանիքներին:

Ի՞նչ է մեղքերի թողութիւնը.

Որ մեր պարտքը մեզ Աստուածանից չէ համարվում և մեղաց պատիժը թողվում է:

Նսայիայ. 43 դլ. 25 հ.—Նս ես եմ, որ ջնջում եմ քո յանցանքները իմ պատճառով և քո մեղքերը չեմ յիշում:

Ի՞նչ է Սուրբ Հոգոյ վերջին գործը երկրիս վերայ.

Նա մեզ և բոլոր մեռելներին վերջին օրումը յարուցանելու է:

Ի՞նչ կ'տայ Նա յետոյ հաւատացեալներին.

Յաւիտենական կեանք, այսինքն երջանկութիւն Քրիստոսի մօտ:

Ա. Կորնթաց. 2 դլ. 9 հ.—Ինչ որ աչք չ'տեսաւ և ականջ չ'լսեց և մարդի սիրտ չ'ընկաւ, այն պտարաստեց Աստուած իրան սիրողների համար.

Իսկ որանջ են զնալու ամբարիշտները.

Դժողք, այսինքն յաւիտենական տանջանքի և կրակի տեղը:


Մատթէոս. 25 դլ. 41 հ.—Այն ժամանակ կ'ասէ ձախ կողմիներին էլ. ինձանից դէն զնացէք, ով անիծեալներ, յաւիտենական կրակի մէջ, որ պատրաստուած է

ստտանայի և նորա հրեշտակների համար:

Ինչպէս կարող է մարդ երջանկացնող
հաւատքը ստանալ:

Խնդրելով և աղօթելով:

Մատթէոս. 7 գլ. 7 հ.—Խնդրեցէք և կ'արուի ձեզ,
որոնեցէք և կ'դանէք, դուռը թակեցէք
և կ'բացուի ձեզ:



ԵՐՐՈՐԴ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆ:

Տէրունական աղօթքը կամ «Հայր Մեր» աղօթքը:

Ի՞նչ է աղօթք.

հաւատացեալ սրտի խօսակցութիւնը Աստուծոյ հետ:

Միթէ հաւատացեալը անպատճառ պիտի աղօթէ.

Անպատճառ, որովհետեւ նորա կեանքը սորանով է յայտնվում, ինչպէս որ նոր ծընուած երեխայի կեանքն էլ շունչ բաշելով է յայտնվում:

Ի՞նչ է ստիպում մեզ աղօթք անելու.

Մեր սեփական կարիքը, Աստուծոյ հրամանը և նորա խոստմունքը:

Սաղմոս. 50 գլ. 15 հ.—Նե կանչիր ինձ նեղութեան օրումը, և ես կ'աղատեմ քեզ, և դու կ'փառաբանես ինձ:

Հաւատացեալը ի՞նչ բանի վրայով կարող է խօսել Աստուծոյ հետ.

Ամեն բանի վրայով, ինչով որ իր սիրտը
լցուած է, թող խնդիրք լինի, թէ փառա-
բանութիւն, թէ աղաչանք, թէ գոհութիւն:

Ինչ կարող ենք խնդրել Աստուածանից.

Ամեն բան, ինչ որ նորա անուան փառքին
և մեր ու մեր ընկերների բարելաութեան
է ծառայում, ուրեմն նախ և յառաջ պիտի
հոգևոր պարզենք խնդրենք:

Իսկ ինչպէս պիտի խնդրենք մարմնաւո-
րի համար.

Աւելացնելով որ ոչ թէ մեր այլ Քո կամբը
լինի, ով Հայր:

Մատթէոս. 6 զլ. 33 հ.—Առաջ Աստուծոյ արքա-
յութիւնը և նորա արդարութիւնը խըն-
դրեցէք. և այդ ամենքը կ'արուի ձեզ:

Որտեղ կարելի է աղօթք անել.

Ամեն տեղ, բայց անպատճառ ժողովքում
եղբայրների հետ էլ և անշուշտ իր տանն էլ
առանձին:

Գործք առաքել. 3 զլ. 1 հ.—Պետրոսն և Յովհան-
նէսը գնում էին միտսին տաճա-
րը իննկրորդ ժամի աղօթքին:

Մատթէոս 6 զլ. 6 հ. Բայց դու երբոր աղօթք
անես, մտիւր քո սենեակը և դուռդ
փակած աղօթք արա դէպի քո Հայրը,
որ ծածուկումն է. և քո Հայրն՝ որ
ծածուկ տեղը տեսնում է, յայտնա-
պէս կ'հատուցանէ քեզ:

Ինչպէս պիտի մարդս աղօթք անէ.

Անհրաժեշտ պայմանն է, որ Յիսուս Քրիս-
տոսի անունով աղօթենք, իսկ արտաքին
չարժմունքները նշանակութիւն չ'ունին, ո-
րովհետև Աստուած սրտին է նայում:

Աղոթաց. 3 զլ. 17 հ.—Եւ ամեն ինչ որ էլ ա-
նէք խօսքով կամ գործով, ամենը Տէր
Յիսուսի անունովն արէք, գոհութիւն
տալով Աստուծուն և Հօրը նորա ձե-
ռովը:

Յովհաննէս. 14 զլ. 13 հ.—Եւ ինչ որ էլ խնդրէք
իմ անունովը, այն կ'անեմ, որ Հայրը
փառաւորուի Որդումը:

Ինչ է շատ անգամ մեր աղօթքների
պակասութիւնը.

Վստահութեան սլակասութիւնը և կասկածը:

Յակոբոս. 1 զլ. 6 հ.—Միայն թէ թող հաւատ-
քով խնդրէ առանց երկմտելու, որովհե-

տև երկամտողը նման է ծովի հողմա-
կոծուած և տատանուած ալիքին: Այն
մարդը թող չ'կարծէ որ Տէրիցը մի բան
կ'առնէ:

Աղօթքին ինչ խոստմունք է տրուած.

Ուղիղ աղօթքը անպատճառ կ'լսուի և կ'կա-
տարուի:

Յովհաննէս. 16 զլ. 23 հ.— Ճշմարիտ ճշմարիտ ա-
սում եմ ձեզ, թէ ինչ որ Հօրիցը խն-
դրէք իմ անունովը, կ'տայ ձեզ:—

Մի՛թէ աղօթք անելն էլ վարպետու-
թիւն է պահանջում.

Այո՛, հարկաւոր է աղօթք անելը սովորել:

Պուկաս. 11 զլ. 1 հ. Եւ եղաւ որ մի տեղ աղօթք
էր անում. և երբոր դադարեց, իր ա-
շակերտներից մէկն ասեց նորան. Տէր,
սովորեցրու մեզ աղօթք անելը, ինչպէս
Յովհաննէսն էլ իր աշակերտներին սո-
վորեցրեց:

Ո՞վ է սովորեցնում մեզ աղօթք անելը.

Տէր Յիսուս Քրիստոսը ինքը:

Ի՞նչ աղօթք է թողացել Նա մեզ իբրև

օրինակ.

Տէրունական աղօթքը, կամ թէ «Հայր Մե-
րը»:

Ասա՛ «Հայր Մեր» աղօթքը:

Հայր մեր, որ երկնքումն ես.

Քո անունը սուրբ լինի.

Քո արքայութիւնը գայ.

Քո կամքը լինի, ինչպէս երկնքումն, նոյն-
պէս ևս երկրիս վերայ:

Մեր օրական հացը տուր մեզ այսօր:

Եւ մեզ փորձութեան մէջ մի տանիր.

Այլ մեզ շարիցը ազատիր.

Որովհետև Քոնն է արքայութիւնը և զօրու-
թիւնը և փառքը յաւիտեանս. ամէն:

Ինչպէս է վերաբաժանվում այս աղօթ-
քը.

Նա ունի յառաջարան, 7 խնդրուածք և վեր-
ջարան:

Ո՞րն է յառաջարանը.

Հայր մեր, որ երկնքումն ես:

Սա ինչ է նշանակում.

Աստուած սորանով ուզում է մեզ քաջալերել, որ հաւատանք, թէ նա մեր ճշմարիտ Հայրն է և մենք նորա հարազատ որդիներն ենք, որպէս զի մենք վտահուլթեամբ և կատարեալ յուսով խնդրենք նորանից, ինչպէս որ սիրելի որդիները խնդրում են իւրեանց սիրելի հօրիցը:

Ինչո՞ւ Համար է կոչվում Աստուած մեր Հայրը.

Որովհետեւ, եթէ հաւատում ենք նորան, ճշմարտապէս նորա գաւակներն ենք:

Ա. Յովհաննէս. 3 զլ. 1 հ.—Տեսէք թէ Հայրն ինչպիսի սէր շնորհեց մեզ, որ Աստուծոյ որդիք կոչուինք:

Ինչո՞ւ Համար ենք աւելացնում, «որ երկնքումն ես».

Որպէս զի նորա գորութիւնը յիշենք և հաւատանք, թէ նա կարող է մեր խնդրուածքը կատարել:

Ել ինչո՞ւ Համար ենք ասում «որ երկնքումն ես».

Որ յիշենք թէ՛ եթէ մեր Հայրն երկնքումն է, մեր հայրենիքն էլ այնտեղ է:

Վոդոսաց. 3 զլ. 2 հ.—Վերինները մտածեցէք, ոչ թէ երկրի վերայինները:

Ինչո՞ւ Համար ենք ասում «մեր».

Որովրետեւ Աստուած բոլոր հաւատացեալների Հայրն է, և մենք պիտի յիշենք, որ ուրիշների համար էլ պէտք է աղօթենք:

Փիլիպպեց. 3 զլ. 20 հ.—Մեր քաղաքականութիւնը երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին:

ԱՌԱՋԻՆ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ:

Քո անունը սուրբ լինի:

Սա ինչ է նշանակում.

Աստուծոյ անունն թէ՛ և ինքն ըստ ինքեան սուրբ է, բայց մենք այս աղօթքով խնդրում ենք, որ նա և մեզանում սուրբ լինի:

Սա ինչպէս է լինում.

Երբոր Աստուծոյ խօսքը ուղիղ և պարզ քարոզվում է և մենք էլ իբրև Աստուծոյ որդիքը սորա համեմատ սուրբ ապրում ենք. այս մասին օգնիր մեզ, սիրելի Հայրը, որ երկնքումն ես:—Բայց ով որ ուրիշ կերպ է սովորեցնում և ապրում քան թէ Աստուծոյ խօսքն է ասում, նա պղծում է մեր մըշումն Աստուծոյ անունը,—սորանից պահիր մեզ, սիրելի երկնաւոր Հայր:

Ի՞նչ է Աստուծոյ անունը.

Աստուծոյ յայտնուած էութիւնը:

Ինչո՞վ ենք Աստուծոյ անունը սուրբ պահում.

Մաքուր վարդապետութիւնով և սուրբ վարքով:

Յովհաննէս. 17 գլ. 17 հ.—Նորանց սուրբ արաքս ճշմարտութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է:

Ինչո՞վ է անպատվում Աստուծոյ անունը.

Անուղիղ վարդապետութիւնով և անմաքուր վարքով:

Ի՞նչ է հարկաւոր մեզ Աստուծոյ անունն ուղիղ պատել և փառք տալու համար.

Որ Նորա անունը լաւ ճանաչենք:

Ո՞ր ազբիւրից կարող ենք ամենապարզ կերպով ճանաչել նորան.

Աստուծոյ խօսքից, որը պիտի հասկանալի և մաքուր կերպով քարոզուի:

Ի՞նչ են տնում ուրեմն այն մարգարէները, վարդապետները և քարոզիչները, որոնք ուղիղ չեն քարոզում, կամ թէ բոլորովին չեն քարոզում.

Նորանք Աստուծոյ անունը պղծում են:

Ի՞նչպէս է կոչում նրանց Քրիստոսը.

Վարձկաններ:

Մատթէոս. 7 գլ. 15 հ.—Զգոյշ կացէք սուտ մարգարէներիցը, որ գալիս են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով, բայց ներսեանց յափշտակող գայլեր են:

Ուրեմն առաջն խնդրուածքով ի՞նչ ենք խնդրում Աստուածանից.

Որ ուղարկէ հաւատացեալ և հաւատարիմ քարոզիչներ:

Բացի հաւատացեալ քարոզիչներից էլ ի՞նչ է հարկաւոր ունկնդիրների համար.

Որ ինանք ընդունակ սրտեր ունենան:

Ի՞նչ է ընդունակ սիրտը.

Որը ցոյց է տալիս որ Աստուծոյ խօսքը 'ի գուր չէ լսում, այլ նորա համեմատ էլ ապրում է:

Յակորոս. 1 գլ. 22 հ.—Բայց խօսքը անսղ եղէք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով:

Մատթէոս. 5 գլ. 16 հ.—Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, և փառաւորեն ձեր հօրը որ երկնքումն է:

Ի՞նչ առիթ ենք տալիս անհաւատներին մեր վատ վարքով:

Աստուծոյ անունը անպատուելու:

Հռովմայեց. 2 գլ. 24 հ.— Որովհետև Աստուծոյ անունը ձեր պատճառովը հայհոյվում

է հեթանոսների մէջ, ինչպէս և գրուած է:—

Քրիստոնէութեան առաջի երեք դարերում հեթանոսները այնքան քարոզներից չէին յաղթվում, ինչքան քրիստոնեաների համբերութիւնից, հեզութիւնից, սիրուց և հաւատարմութիւնից:

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴՐՈՒՆԾՔԸ:

Քո արքայութիւնդ գայ:

Սա ի՞նչ է նշանակում.

Աստուծոյ արքայութիւնը յիրաւի գալիս է ինքն ըստ ինքեան առանց մեր աղօթքին էլ, բայց մենք ինչպէս ենք այս աղօթքով որ նա մեզ մօտ էլ գայ:

Ի՞նչ է Աստուծոյ արքայութիւնը.

Այն արքայութիւնն, որ երկնքից է գալիս, ուստի հոգևոր է և երկրիս վրայ այնտեղ է լինում, ուր Աստուած թագաւոր է և իւր հոգով սրտերը կառաւարում է:

Ղուկաս. 17 դլ. 21 հ.—Ահա Աստուծոյ արքայութիւնը հէնց ձեր ներսումն է:

Հովովմայեց. 14 դլ. 17 հ.—Աստուծոյ արքայութիւնն ուտելիք և խմելիք չէ. այլ արդարութիւն և խաղաղութիւն և ուրախութիւն Սուրբ Հոգովը:—

Ինչպէս է գալիս Աստուծոյ արքայութիւնը մեզ մօտ.

Երբոր երկնաւոր Հայրը մեզ իւր Սուրբ Հոգին է տալիս, որ մենք նորա շնորհով նորա սուրբ խօսքին համեմատ և աստուածահաճոյ ապրենք այստեղ ժամանակաւոր և այնտեղ յաւիտենական կեանքով:

Ի՞նչ պիտի անենք սորա համար.

Ամեն օր Սուրբ Հոգին խնդրենք Աստուածանից:

Ղուկաս. 11 դլ. 13 հ.—Արդ եթէ դուք, որ չար էք՝ զիտէք բարի պարգևներ տալ ձեր օրդկանցը, էլ սրբան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կ'տայ նորանց որ ուզում են նորանից:

Ի՞նչ փոփոխութեան է ենթարկվում Աստուծոյ Հոգին ստացած մարդը.

Նա հաւատում է Աստուծոյ խօսքին և ապրում է աստուածահաճոյ:

Ա. Յովհաննէս. 5 դլ. 18 հ.—Իրտենք որ ամեն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ գործում, բայց նա որ Աստուածանից է ծնուած, իր անձը պահում է, և չարը չէ մօտենում նորան:—

Յդեկիիւ. 36 դլ. 27 հ.—Եւ իմ հոգին պիտի դնեմ ձեր միջումը, և պիտի անեմ, որ իմ օրէնքների մէջ վարուիք և իմ դատաստանները պահէք և նորանց կատարէք:—

Ի՞նչ չ'պէտք է մոռանանք այս խընդրուածքի մէջ.

Խնդրել որ Աստուծոյ արքայութիւնը ոչ թէ միայն քրիստոնէաների մօտ, այլ Հրէաների, Մահմետականների և հեթանոսների մօտ էլ գայ. որովհետեւ դեռ շատ մարդիկ կան, որոնք քրիստոնէութիւնից շատ հեռու են:

Ինչքան է նորանց թիւը.

Հեթանոսներ.	—	—	մօտ	812	միլլիօն
Հրէաներ.	—	—	մօտ	8	միլլիօն
Մահմետական.	—	—	մօտ	180	միլլիօն
Ուրեմն միասին—	—	—	մօտ	1000	միլլիօն:

Իսկ քրիստոնեաների թիւը ի՛նչքան է.

500 միլլիօն:

Այո՛ դեռ շատ պիտի խնդրենք թէ՛ «քո արքայութիւնը գայ»:

Եկել է արգեօք Աստուծոյ արքայութիւնը երկրիս վրայ կատարելապէս.

Ոչ՛ շնորհաց արքայութիւնը եկել է և ամեն մէկը կարող է Քրիստոսին հաւատալով մըտնել Աստուծոյ շնորհաց փրկութեան մէջ. գօրութեան արքայութիւնն էլ եկել է և ոչ մի ոյժ կամ թէ իշխանութիւն չէ կարող արգելել որ Աստուծոյ խօսքը տարածուէ. բայց Աստուծոյ փառաց արքայութիւնը դեռ եկած չէ:

Ե՞րբ կ'գայ նա.

Երբ Քրիստոսը կ'գայ իւր փառքով աշխարհին դատելու:

Ի՞նչ է շնորհաց և փառաց արքայութիւնների տարբերութիւնը.

Չնորհաց արքայութեան մէջ դեռ շատ տրկարութիւններ, նեղութիւններ և ձգտում-

ներ ունինք և յուսով ենք ապրում, իսկ փառաց արքայութեան մէջ կ'ապրենք փառքի մէջ, առանց նեղութեան, տկարութեան և փորձութեան, Աստուծոյն էլ կ'տեսնենք երես առ երես:

Ա. Յովհաննէս. 3 գլ. 2 հ.— Սիրելիներ, հիմա Աստուծոյ որդիք ենք, և տակաւին յայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք. բայց գիտենք թէ, երբոր նա կ'յայտնուի, նորան նման կ'լինենք, որովհետև կ'տեսնենք նորան ինչպէս որ է:

Ուրեմն էլ ի՛նչ պիտի խնդրենք երկրորդ խնդրուածքով.

Որ Աստուծոյ փառաց թագաւորութիւնը գայ քրիստոնեաների մէջ և մենք էլ արժանանանք այնտեղ մտնելու:

ԵՐՐՈՐԳ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ:

Քո կամքը լինի ինչպէս երկնքումն, նոյնպէս ևս երկրիս վերայ:

Սա ի՛նչ է նշանակում.

Աստուծոյ բարի և ողորմած կամքը առանց մեր աղօթքին էլ լինում է, բայց մենք խընդրում ենք այս աղօթքով, որ նա և մեզ վերայ կատարուի:

Սա ինչպէս է լինում.

Երբոր Աստուած ամեն չար խորհուրդ ու կամք կոտորում է և խափանում, որը չէ թողնում որ Աստուծոյ անունն մեր մէջ սուրբ մնայ և նորա արքայութիւնը մեզ մօտ գայ՝ — այս ինքն, սատանայի, աշխարհքի և մեր մարմնի կամքը. այլև երբոր նա մեզ զօրացնում է և հաստատ պահում իւր խօսքի և հաւատքի մէջ մինչև մեր վերջը: Այս է նորա ողորմած և բարի կամքը:

Ուրեմն ի՞նչ ենք խնդրում սորանով.

Որ մենք էլ երկրիս վերայ Աստուծոյ կամքը կատարենք և երբոր նա նեղութիւն է ուղարկում, թողնենք որ նորա կամքը լինի:

Սաղմոս. 40 զլ. 8 հ.—Քո կամքը կատարել կամեցայ, ով Աստուածս. և քո օրէնքն իմ սրտի մէջ է:

Ղուկաս. 22 զլ. 42 հ.—Հայր, եթէ կամիս այս

բաժակը անցրու ինձանից. սակայն ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի:

Որտե՞ղ է կատարվում Աստուծոյ կամքը կատարելապէս,

Երկնքումն:

Ի՞նչ է գտնում Աստուծոյ կամքը երկրիս վերայ.

Հակառակութիւն և հակաճառութիւն:

Ինչպէս կարող է մտրդս Աստուծոյ կամքին հակառակել.

Աստուծոյ զօրութեան կամքին չէ կարող, իսկ Աստուծոյ շնորհաց կամքին կարող է:

Ի՞նչ օրինակ կարող ես ասել.

Քաղաամբ ուզում էր Իսրայէլին անիծել, բայց չկարողացաւ և իւր անէծքը պէտք էր փոխել օրհնութեան, որովհետև Աստուած ստիպեց նորան իւր զօրութիւնովը:

Ի՞նչ է Աստուծոյ շնորհած կամքը.

Աստուած ուզում է մեր փրկութիւնը:

Յովհաննէս. 6 զլ. 40 հ.—Եւ սա է ինձ ուղար-

կողի կամքը. որ ամեն ով որ տեսնէ Որդուն և հաւատայ նորան, յաւիտենական կեանք ունենայ:

Ա. Թեոսաղոնիկ. 4 գլ. 3 հ.—Որովհետև սա է Աստուծոյ կամքը՝ ձեր սրբութիւնը:

Ինչպէս կարող է մտրդս հակառակել այս կամքին.

Աստուած ոչ ովին չէ ստիպում փրկուել, սրովհետև մեր փրկութիւնն մեր յօժար կամքիցն է կախուած:

Մատթէոս. 23 գլ. 37 հ.—Երուսաղէմ, Երուսաղէմ, մարգարէները կոտորող, և քեզ մօտ ուղարկուածները քարկոծող. քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել, ինչպէս հաւը ժողովում է իր ձագերը թևերի տակը. և դուք չ'կամեցաք:

Ուրեմն ինչ մտքով ենք աղօթում երբորդ խնդրուածքը.

Որ Աստուծոյ շնորհաց կամքը մեր մէջ կատարուէ:

Ո՞րտեղից կարող ենք Աստուծոյ կամքը իմանալ.

Աստուծոյ խօսքից:

Բայց կասկածելու ժամանակ ինչ պիտի անենք.

Պիտի լաւ և փորձառու քրիստոնեաներից հարցնենք, բայց նախ և առաջ Սուրբ Հոգուց խնդրենք որ նա մեզ Աստուծոյ կամքը հասկացնէ:

Ո՞վ է արգելում մեզ Աստուծոյ կամքի մէջ մնալը.

Երեք թշնամիներ՝ սատանան, աշխարհքը ու մարմինը:

Եփեսոաց. 6 գլ. 12 հ.—Որովհետև մեր պատերազմը արիւնի և մարմնի հետ չէ, այլ իշխանութիւնների և պետութիւնների հետ, այս աշխարհի խաւարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնաւորների մէջ են:—

Աստուծոյն հակառակ այս կամքը ինչպէս է յաղթվում.

Երբոր Աստուած չար կամքը կոտրում է և մեզ հաւատոյ մէջ պահում:

Բ. Թեոսաղոնիկ. 3 գլ. 3 հ.—Բայց Տէրը հաւատարիմ է, որ կ'հաստատէ ձեզ և կ'պահէ այն չարից:

ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴՐՈՒՆԾՔԸ:

Մեր օրական հացը տուր մեզ այսօր:

Սա ի՞նչ է նշանակում.

Աստուած տալիս է օրական հացը և առանց մեր խնդրելուն բոլոր շաշ մարդկանց էլ. բայց մենք խնդրում ենք այս ազօթքով, որ նա մեզ այս բանը հասկացնէ և մենք մեր օրական հացը շնորհակալութեամբ ընդունենք:

Ի՞նչ է օրական հացը:

Ամեն բան որ մեր մարմնի սննդեան և կարիքին է պատկանում, որպէս ուտելիք, ըմպելիք, հագուստ, ոտնաման, տուն, տեղ, արտ, անասուն, արծաթ, բարիք, երկիւղած ամուսնակից, երկիւղած զաւակներ, երկիւղած ծառաներ, երկիւղած և հաւատարիմ մեծաւորներ, բարի իշխանութիւն, բարի եղանակ, խաղաղութիւն, առողջութիւն, պարկեշտութիւն, պատիւ, լաւ բարեկամներ, հաւատարիմ հարեաններ և ուրիշ այսպիսի բաներ:

Ինչո՞ւ համար միայն օրական հացը պի-

տի խնդրենք.

Որովհետեւ էզուցուայ համար Աստուած է ուզում հոգալ:

Մատթէոս. 6 գլ. 34. հ.—Ուրեմն էզուցուայ համար հոգս մի անէք, որովհետեւ էզոց վայ օրն իր համար հոգս կ'անէ. օրուայ համար բաւական է իր նեղութիւնը:

Ինչո՞ւ համար միայն հաց ենք խնդրում:

Որպէս զի առատութիւն չ'ցանկանք, այլ միայն այն որ օրուայ համար հարկաւոր է:

Ս. Տիմոթէոս. 6 գլ. 8 հ.—Եթէ կերակուր և հագուստ ունինք, նորանցով բաւականանանք:

Առակաց. 22 գլ. 2 հ.— Հարուստը և աղքատը հանդիպում են իրար. նորանց ամենքիւ անողը Տէրն է:

Ինչո՞ւ համար մարդս պէտք է ասէ թէ՛ տուր մեզ և ոչ թէ՛ տուր ինձ.

Որպէս զի մարդս միայն իրան չ'յիշէ, այլ և ուրիշի կարիքն էլ չ'մոռանայ:

Մարդս ուտելիս ի՞նչ պէտք է անէ լի-

չելով թէ հաց տուողը Աստուած է.

Նա պիտի ուտելիս Աստուածանից գոհանայ:

Մէկ հաւատացեալ մարդ անծանօթ քաղաքում մտաւ ճաշարան: Ուտելուց առաջ նա կարճ աղօթք արաւ: Նորա մօտ նստած պարոնը, տեսնելով այդ, կամեցաւ ծաղրել նորան և ասաց. Պարոն, երևում է որ ձեր կողմում ամենքը դեռ հին կարգով են ապրում, հացից առաջ աղօթք են անում:—Ո՛չ, պատասխանեց հաւատացեալը,—ամենքը չեն, կան և նոր կարգով ապրողներ էլ: Ո՛վքեր են դրանք, հարցրեց ծաղրողը:—Խօզերը նոր կարգով են ապրում և ուտում,—պատասխանեց քրիստոնեան:—

Ա. Տիմոթէոս. 4 գլ. 4 և 5 հ.—Աստուծոյ բոլոր ստեղծութիւնները բարի են, և ոչ մի բան խօտան չէ. երբոր գոհութիւնով ընդունուի: Որովհետեւ սրբւրբում է Աստուծոյ խօսքովը և աղօթքով:—

Ինչո՞ւ համար չ'պէտք է ցանկանք առատութիւն:

Որովհետեւ չատերի համար առատութիւնը վնասարեւ է:

Ի՞նչ օրինակ գիտես սորա համար:

Այն հարուստ մարդոյ մասին, որի համար Քրիստոսը պատմում է, հարստութիւնը իրա կորստին ծառայեց:

Ի՞նչ է հարկաւոր մեզ, որպէս զի կարողանանք մեր հացը գոհութիւնով ուտել.

Աստուածավախ ընտանիք. որովհետեւ եթէ ամուսնակիցը չար է, կամ թէ զաւակները անհնազանդ են և մեզ հոգսեր են պատճառում, մենք չենք կարող ուրախութիւնով և գոհութիւնով մեր օրական հացը վայելել:

Ել ի՞նչ հանգամանքներ են արգելում մեզ մեր հացը գոհութիւնով ուտել:

Հասարակական կեանքի անապահովութիւնը, թանկութիւն, պատերազմ, ժանտախտ, թրշնամութիւն բարեկամներից և հարեաններից:

Դորա համար ի՞նչ ենք խնդրում չորրորդ խնդրուածքում.

Երկիւղած և հաւատարիմ մեծաւորներ, բարի իշխանութիւն, բարի եղանակ, խաղա-

դուժիւն, առողջութիւն, լաւ բարեկամներ,
հաւատարիմ հարեաններ:

Յունաց իշխան՝ Թեմիստոկլը ուզելով իւր
կալուածքը ծախել և իմանալով թէ ինչքան
է խանգարվում մարդոյ կեանքի խաղաղու-
թիւնը վատ հարեաններից, յայտարարեց, թէ
կալուածք է ծախվում, որը լաւ հարեաններ
ունի:—Շուտով առնող գտնուեցաւ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ:

Եւ թող մեզ մեր պարտքը ինչպէս որ և մենք
թողում ենք մեր պարտականներին:

Սա ինչ է նշանակում.

Այս աղօթքով մենք խնդրում ենք, որ երկ-
նաւոր հայրը խստութեամբ չ'նայէ մեր մեղ-
քերի վերայ և այդ պատճառով չ'մերժէ մեր
խնդրուածքը, վասն զի մենք չենք աշխա-
տել այն բաները որ խնդրում ենք, ուրեմն
և անարժան ենք նորանց ստանալու, բայց
այս հինգերորդ խնդրուածքով մենք աղօ-
թում ենք որ նա բարեհաճէ տալ մեզ ամեն
բան իբրև շնորհ, որովհետև մենք ամեն օր

մեղանշում ենք և արժանի ենք միայն պա-
տժի:—Նոյնպէս կամենում ենք և մենք սըր-
տանց և յօժարութեամբ բարի անել նորանց,
որոնք մեղանշել են մեզ դէմ:

Ինչքան են մեր մեղքերը.

Անթիւ. նորանք մինչև երկինք ենք հասնում
և մեզ Աստուծոյ առջև դատապարտում են:

Նզրաս. 9 զլ. 6 հ.—Մեր անօրէնութիւնները մեր
գլխիցը վեր բարձրացան, և մեր յան-
ցանքը մեծ է մինչև երկինքը:

Յովհանի 1 զլ 2 հ. նորանց չարութիւնը վեր է
եկել իմ առաջին:

Ինչ կարող ենք անել դորա դէմ.

Աստուծոյն աղաչել որ նա Քրիստոսի սիրոյ
համար թողէ մեզ մեր անթիւ պարտքերը:

Միայն մեզ համար պիտի թողութիւն
խնդրենք.

Ոչ՝ մեր եղբայրների համար էլ:

Մի՛թէ խնդրելը բաւական է.

Ոչ՝ մենք պիտի թողնենք նորանց իրանց

պարտքը:

Ն՞րբ պէտք է թողենք նորանց պարտքը:

Նոյն կռուելու օրը:

Յփեսայ. 4 գլ. 26 ճ.—Թող արեգակը ձեր բարկութեան վերայ չ'մտնէ:

Ի՞նչ է մնում մեզ վերայ, երբոր մենք նորանց պարտքը չենք թողնում

Մեր հին պարտքերը և ապա էլ հին անէծք և դատապարտութիւնը:

Մատթէոս. 6 գլ. 16 հ.—Իսկ եթէ դուք մարդկանց չէք թողիլ նորանց յանցանքները, ձեր հայրն էլ չի թողիլ ձեր յանցանքները:

Քանի անգամ պէտք է մեր եղբօր պարտքը թողենք:

Միշտ՝ երբոր նա զղջալով թողութիւն է խնդրում:

Բացի սորանից էլ ի՞նչ ենք պարտաւոր անելու մեր պարտապաններին.

Միշտ նորանց պարտաւոր ենք բարիք անելու:

Հովհաննէս. 12 գլ. 20 հ.—Արդ եթէ քո թշնամին սուլած է, հաց տուր նորան. և եթէ ծարաւ է, ջուր տուր նորան. որովհետև այս անելով կրակի կայծեր կ'ժողովես նորա գլխի վերայ:

Ի՞նչ պէտք է ստիպէ մեզ մեր պարտապաններին նորանց պարտքը թողելու.

Այն մեծ ողորմութիւնը և պարտքերի թողութիւնը, որը մենք ամեն օր ստանում ենք խնդրելով Աստուծոյն:

Ինչպէս պիտի թողնենք մեր հակառակորդի պարտքը.

Սրտանց և միայն Աստուծոյ առջև չէ, այլ Աստուծոյ և մարդկանց առջևը:

Մատթէոս. 18 գլ. 35 հ.—Այսպէս էլ իմ կրկնաւոր Հայրը կ'անէ ձեզ, եթէ դուք ամեն մէկդ իր եղբօրը՝ ձեր բոլոր սըրտիցը չ'թողէք նորանց յանցանքը:—

ՎԵՑԵՐՈՐԳ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ:

Եւ մեզ փորձութեան մէջ մի տանիր:

Սա ինչ է նշանակում.

Թէպէտ Աստուած ոչ ոքին չէ փորձում, բայց մենք խնդրում ենք այս աղօթքով, որ նա մեզ պահէ և պահպանէ, որ սատանան, աշխարհը և մեր մարմինը չ'խաբեն և չ'տանեն մեզ դէպ ի ծուռ հաւատ, յուսահատութիւն և ուրիշ ամօթալի գործեր և արատներ. նաև խնդրում ենք, որ, եթէ էլ նորանցից փորձուենք, սակայն վերջապէս զօրանանք և յաղթութիւն ստանանք:—

Ե՛րբ ենք լինում մեղանչելու վտանգի մէջ.

Ձանազան փորձութիւնների մէջ, որոնք մեզ հանդիպում են մեր կեանքում:

Ասան սուրբ գրքից փորձութեան մի օրինակ.

Յուդայի օրինակը:

Յիսուս նորան ինչ պաշտօն էր յանձնել.

Գանձապահութիւն:

Ի՛նչ պատերազմ սկսուեցաւ Յուդայի ներսումը.

Մի ձայն ասում էր թէ՛ հաւատարիմ եղիր, իսկ մի ուրիշ ձայն ասում էր թէ՛ վնաս չ'կայ, եթէ քեզ համար էլ մի քիչ վեր առնես:

Պօղոս առաքեալը ինչպէս է կոչում այս պատերազմը.

Մարմնոյ և հոգոյ մէջ պատերազմը:

Ի՛նչ եղաւ Յուդայի այս պատերազմի վերջը.

Մարմինը յաղթեց:

Ասան մի ուրիշ միսթարական օրինակ.

Յովսէփի օրինակը:

Ո՛ւմ տան էր նա Եգիպտոսում.

Պետափրէսի տան:

Ո՛ւմ պատճառով էր վտանգաւոր նորա

Համար այն տան մէջ լինելը.

Նորա տանտիկնոջ պատճառով:

Դէպ ի ինչ էր հրապուրում նա Յովսէփին.

Դէպ ի անպարկեշտութիւն:

Ի՞նչ պատերազմ գոյացաւ նորանում.

Մի ձայն ասում էր թէ՛ պարկեշտ մնա, մի ուրիշը ասում էր թէ՛ ուրախացիր, վայելիր, և ախորժելի կերպով կ'ապրես:

Ի՞նչ էր այս պատերազմի վերջը.

Հոգին յաղթեց մարմնոյն և Յովսէփը ասաց այն կնոջը թէ՛ ինչպէս գործեմ այս մեծ շարութիւնը և Աստուծոյ դէմ մեղանշեմ:

Ո՞ւմնից են դուրս գալիս այս փորձութիւնները.

Նորանք Աստուածանից չեն:

Յակորոս. 1 գլ. 13 հ.—Ոչ ով, որ փորձութեան մէջ է, չ'ստէ թէ Աստուածանից եմ փորձվում. որովհետև Աստուած չար բաներով չէ փորձում. ինքն էլ ոչ մէկին չէ փորձում:

Ուրեմն չ'համարձակէ մարդս Աստուծոյն մեղադրել, ինչպէս շատերը անում են, ասելով, օրինակի համար, թէ ես բարկացող բռնաւորութեան տէր եմ, ես մեղաւոր չեմ որ բարկացայ. կամ թէ, ուրիշի սեփականութիւնը վերցրի, որովհետև հանգամանքները ստիպեցին ինձ.—Սա ուրիշ խօսքերով նշանակում է թէ՛ Աստուած է մեղաւոր, որովհետև նա է տուել ինձ այդպիսի բնաւորութուն, կամ թէ, նա է բերել այն հանգամանքները, որ պիտի գողանայի: —

Ո՞վ է տուել Աստուծոյն սորան նման պատասխան.

Ազամը դրախտումը ասելով թէ՛ այն կինը, որ ինձ տուիր, նա տուաւ ինձ այն ծառիցը և ես կերայ:—

Ապա ո՞ւմնից են դուրս գալիս այս փորձութիւնները.

Սատանայից, աշխարհից և մարմնից:

Ի՞նչ է սատանայի նպատակը.

Որ մեզ վայր դցէ:

Նա էլ ո՞ւմ մօտեցաւ նոյն նպատակով.

Մինչև անդամ մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

Նա ինչպէս է մօտենում մեզ.

Ինքը հոգի լինելով մօտենում է մեր հոգոյն աներևոյթ կերպով և զանազան խոստմունքներ փսփսալով, հրապուրում է մարդոյն զէպի մեղք:

Ա. Պետրոս. 5 զլ. 8 հ.—Արթուն եղէք, հսկում արէք. որովհետև ձեր ոտիս թշնամին՝ սատանան՝ զուող առիւծի պէս ման է գալիս և որոնում է թէ որին կուլ տայ.—

Մեր երկրորդ թշնամին ո՞վ է.

Աշխարհը:

Ի՞նչ է աշխարհք սուրբ գրքի մտքով.

Մարդկանց բոլոր ամբարշտութիւնը և անհաւատութիւնը միասին:

Ինչո՞վ է փորձում մեզ աշխարհքը.

Խոստմունքներով և սպառնալիքներով:

Ո՞ւմ միջոցով է անում նա այս.

Մարդկանց միջոցով:

Առակաց. 1 զլ. 10 հ.—Որդեակս, եթէ քեզ հրապուրեն մեղաւորները, դու հաճութիւն չ'տաս:—

Ո՞վ է սատանայի և աշխարհքի օգնականը.

Մեր մարմինը. որովհետև ինչ որ նորանք են ուզում, ինքն էլ է ուզում: Մարմնոյ մէջ բնակուած ցանկութիւնը յղանում է սատանայից կամ աշխարհքից և ծնվում է մեղք:

Յակոբոս 1 զլ. 14 և 15 հ.—Բայց ամեն մէկը փորձվում է բուն իր ցանկութիւնիցը հրապուրուած և խաբուած: Եւ այնուհետև որ ցանկութիւնը յղացած է՝ ծրնվում է մեղք. և մեղքն էլ երբոր կատարվում է՝ մահ կ'ծնէ:

Բայց Աստուած ինչո՞ւ համար է թուլ տալիս որ փորձութիւններ մօտենան մեզ.

Որպէս զի քննուենք, մաքրուենք, և զօրանանք հաւատքի մէջ:

Ուրեմն ի՞նչ տեսակ են քրիստոնեաներին հանդիպող փորձութիւնները.

Որ կարող ենք նորանց յաղթել:

Ա. Կորնթաց. 10 գլ. 13 հ.—Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պատահել բացի մարդկային փորձութիւնից. բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողութիւնիցը վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքքըն էլ կ'ստարաստէ, որ կարողանաք համբերել:

Ի՞նչ զէնքերով պիտի կռուենք փորձութեան մէջ:

Հոգևոր զէնքերով:

Եփեսաց. 6 գլ. 13 մինչև 18 հ.—Սորա համար Աստուծոյ սպառազինութիւնն առէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարութեան օրումը, և ամենը կատարելով հաստատ կանգնել. արդ հաստատ կանգնեցէք ձեր մէջքերը ճշմարտութեամբ դօտևորուած, և արդարութեան զրահը հագած, և ձեր ոտները կօշիկ հագած խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնով: Եւ ամենի վերայ հաւատքի վահանն առէք. որով կարող լինիք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել: Եւ փրկութեան սաղաւարտն առէք, և Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է:—

ԵՕԹՆԵՐՈՐԳ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ:

Այլ մեզ չարիցը ազատիր:

Սա ի՞նչ է նշանակում.

Այս աղօթքովս խնդրում ենք բովանդակապէս, որ երկնաւոր Հայրը ազատէ մեզ ամեն տեսակ մարմնաւոր և հոգևոր, կայքի և պատուի վնասից և վերջումը՝ երբ կ'հասնէ մեր մահուան ժամը, պարզէ մեզ երջանիկ վախճան և շնորհքով ու մարդասիրութեամբ այս ցաւերի հովտից ընդունէ մեզ իրան մօտ՝ երկինք:—

Ի՞նչ չարիքից ենք ազատութիւն խնդրում.

Որոնք մեր մարմին, հոգոյն, կայրին և պատուին են հանդիպում, որպէս են՝ հիւանդութիւններ, տրտմութիւն և յուսահատութիւն, աղքատութիւն և խայտառակութիւն:

Մի՞թէ պիտի խնդրենք որ Աստուած մեզ ամեն չարից բոլորովին ազատէ.

Ոչ՝ որովհետև մենք պէտք է մեր խաչը Տիրոջ յետևից կրենք, միայն կարող ենք խնդ-

զրել որ նա մեզ օգնէ մեր խաչը շատ ծանրանալուց:

Գործք Առաքելոց. 14 գլ. 21 հ.— Աշակերտների սրտերը հաստատեցին, և յորդորեցին որ հաստատ կենան հաւատքի մէջ. և թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնը:

Սաղմոս. 68 գլ. 19 հ.— Օրհնեալ է Տէրը օրէ ցօր. եթէ բնու դնելու լինին մեզ վերայ, Աստուած է մեր փրկութիւնը:

Վերջապէս ինչ պէտք է խնդրենք Աստուածանից.

Երջանիկ վախճան:

Ո՛ւմ կ'տայ Աստուած այս.

Նորան, որը արդէն այստեղ Քրիստոսում իրան համար փրկիչ էր գտել:

Ղուկաս. 2 գլ. 29 և 30 հ.— Հիմա արձակում ես քո ծառային, ով Տէր, քո խօսքի պէս խաղաղութիւնով. որովհետեւ իմ աչքերը տեսան քո փրկութիւնը, որ պատրաստեցիր ամեն ժողովուրդների առաջին:—

ՎԵՐՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ:

Որովհետեւ Քո է արքայութիւնը, և զօրութիւնը, և փառքը յաւիտեանս. Ամէն:

Սա ի՞նչ է նշանակում.

Որ Աստուած ամենակարող լինելով, կարող է մեր աղօթքները լսել և կատարել:


Ի՞նչ է նշանակում Ամէն բառը.

Այո, այսպէս թող լինի:

Աղօթք արա՛ ուրիշների համար էլ:—

Մէկ հաւատացեալ պատմում է հետեւեալը: 25 տարի սորանից առաջ՝ իբրև երիտասարդ՝ գնացի մէկ անգամ մեր ծերունի քարոզչի մօտ, մօրս հրամանով նորան բան ասելու: Ինչ հետ խօսելու ժամանակ, քարոզչին կանչեցին և նա սենեակից հեռացաւ: Պարապութիւնից սկսեցի նորա սենեակը դիտել: Յանկարծ աչքովս ընկաւ պատի վերայ մի գրատախտակ, բոլորը անուններով գրուած, այդ անուններից ոմանց վերայ գիծ էր քաշուած: Կարդալիս իմ անունս էլ նկատեցի:—Այն ժամանակ բոլորը հասկացայ.

մեր քարոզիչը ճշմարիտ աղօթք անող մարդ էր, և նորա երեսից փալլում էր յաւիտենականութիւնը: Յետոյ իմացայ՝ թէ նա իր գրատախտակի վերայ գրում էր այն մարդկանց անունները, որոնց համար առանձին կարիք էր զգում աղօթելու և նորանց դարձի գալու համար խնդրելու:—Սենեակում անց ու դարձ անելու ժամանակ նորա նայուածքը ընկնում էր գրուած անունների վերայ և նա եռանդուն խօսում էր Տիրոջ հետ այն մարդկանց համար:—Ո՛հ, ինչպէս շարժուած էի այն ըրպէլում, իմանալով՝ թէ Աստուծոյ այդ ծերունի հաւատարիմ ծառան իմ հոգուս համար էլ պատերազմում էր: Այո՛, պիտի ասեմ՝ թէ այդ միտքը իմ կենաց բոլոր օրերում ինձ համար պահապան հրեշտակ է եղել և իմ առջևից գնացել:—



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

—

Ջնորհաց էլ ի՞նչ միջոցներ ունինք բացի Աստուծոյ խօսքից.

Սուրբ խորհուրդները:

Ի՞նչ է սուրբ խորհուրդը.

Խորհուրդը մի սուրբ արարողութիւն է:

Ո՞վ ունէր իրաւունք այդ սուրբ արարողութիւնները սահմանելու.

Միայն Յիսուս Քրիստոսը:

Ո՞ւմ հրամայեց նա այդ խորհուրդները կատարել.

Եկեղեցոյն, — ասելով թէ՛ այս արէք:

Ի՞նչ է հաղորդում Քրիստոսը այդ խորհուրդների միջոցով.

Իւր շնորհը:

Ո՞րն է այդ.

Մեղքերի թողութիւնը:

Ուրեմն ինչ յատկութիւններ պէտք է ունենայ սուրբ եկեղեցական արարողութիւնը խորհուրդ լինելու համար.

Նա պէտք է տեսանելի նշան ունենայ, Քրիստոսից սահմանուած լինի և նորա շնորհը, այս ինքն, մեղքերի թողութիւն միջնորդէ:

Միթէ միայն խորհուրդներով ենք ստանում մեղքերի թողութիւն.

Ոչ՝ Աստուծոյ աւետարանին հաւատարմով էլ:

Ուրեմն ինչ զանազանութիւն կայ Աստուծոյ խօսքի և խորհուրդների շնորհաց մէջ.

Խորհուրդ Աստուծոյ շնորհաց մի տեսանելի գրաւական է, մի կնիք է մէզ հաւատացնելու համար:

Որո՞նք են խորհուրդների տեսանելի նշանները.

Մկրտութեան մէջ ջուրն է այդ, իբրև նշան որ մկրտողի վերայ Սուրբ Հոգին թափուած է նորա մեղքերը սրբելու համար: — Իսկ հաղորդութեան մէջ հացը ու գինին,

իբրև նշան, որ մենք Քրիստոսին մասնակից ենք, ուստի և նորա մահուան աշխատանքից էլ մաս ու բաժին ունինք:

Ինչ է պահանջվում մեզանից, որպէս զի Աստուծոյ անտեսանելի շնորհը ստանանք.

Հաւատ:

Ել ինչ զանազանութիւն կայ Աստուծոյ խօսքի և խորհուրդների շնորհաց մէջ.

Աստուծոյ խօսքը խօսում է ընդհանուր, աննի հետ, իսկ խորհուրդով Աստուած խօսում է ամեն մէկ քրիստոնեայի հետ առանձնապէս:

Ի՞նչքան խորհուրդներ սահմանեց Քրիստոս.

Երկուսը, այս ինքն, մկրտութիւնը և հաղորդութիւնը:

Ի՞նչքան խորհուրդներ են ընդունում ուրիշ եկեղեցիները.

Կաթոլիկ, ուղղափառ և Լուսաւորչական եկեղեցիները ընդունում են 7 խորհուրդներ:

Սուրբ Գիրքն էլ ինչքան խորհուրդների համար է վկայում.

Միայն երկուսի համար:

Ա. Կորնթաց 10 գլ. 1 մինչ. 4 հ.—Ձեմ կամենում, եղբայրք, որ չ'գիտենաք՝ թէ մեր հայրերն ամենն էլ ամպլի տակն էին. և ամենը ծովի միջովն անցան: Եւ ամենը Մովսէսով մկրտուեցան ամպումը և ծովումը: Եւ ամենն էլ նոյն հոգևոր կերակուրը կերան: Եւ ամենն էլ նոյն հոգևոր խմելիքը խմեցին. որովհետև այն հոգևոր վէճիցն էին խմում՝ որ գնում էր նորանց հետ, և այն վէճն էր Քրիստոսը:

Կան արդեօք հին ուխտի մէջ խորհուրդների նախապատկերները.

Կան՝ թլփատութիւնը և զատիկը:

Ո՞ր խորհուրդով է կատարվում թլփատութեան նշանակութիւնը նոր ուխտի մէջ.

Մկրտութիւնով:

Կողոսաց. 2 գլ. 11 և 12 հ.—Որով դուք թլփատուեցաք անձեռագործ թլփատութիւ-

նով, մարմնական մեղքերի մարմինը մերկանալովը Քրիստոսի թլփատութիւնովը. թաղուելով՝ Նորա հետ մկրտութիւնումը, որով յարութիւն էլ առաք Նորա հետ Աստուծոյ ազդեցութեան հաւատքովը, որ յարութիւն տուաւ նորան մեռելներից:—

Ո՞ր խորհուրդով է կատարվում նոր ուխտի մէջ հին զատիկը.

Սուրբ հաղորդութեան խորհուրդովը:

Ա. Կորնթաց. 5 գլ. 7 հ.—Որովհետև մեր զատիկը մորթուեցաւ մեզ համար՝ Քրիստոսը:

Յովհաննէս. 1 գլ. 29 հ.—Հետևեալ օրը Յովհաննէսը տեսնում է Յիսուսին իրան մօտ դալիս, և ասում է. Ահա Աստուծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը:—

2ՈՐՐՈՐԳ ԳԼՅԱԽՈՐ ՄԱՍՆ:

Ինչի՞ մասին է խօսում չորրորդ մասը.

Սուրբ մկրտութեան խորհուրդի մասին:

Ի՞նչ է մկրտութիւնը.

Մկրտութիւնը միայն լոկ ջուր չէ, այլ նա ջուր է, Աստուծոյ պատուէրով սահմանադրուած և Աստուծոյ խօսքի հետ կապած:— Ուրեմն նա այն սուրբ արարողութիւնն է, որով Երբորդութիւն Աստուածը ինքն ազդելով, մեզ նոր ուխտի պարզեաներ է հաղորդում:

Ի՞նչ է մկրտութեան տեսանելի նշանը-
Ջուրը:

Ինչպէս է կատարվում մկրտութիւնը.

Մկրտուողը ընկղմվում է ջրի մէջ, կամ ջուրը ածվում է նորա վրայ:—

Բաւական է այդ.

Ոչ՝ հասարակ ջուրը չէ կարող հոգոյն օգուտ տալ:

Ուրեմն էլ ի՞նչ պիտի լինի ջրի հետ միասին.

Քրիստոսի հրամանը և նորա խօսքը:

Ո՞րն է այդ հրամանը.

«Մկրտեցէք նորանց յԱնուն Հօր և Որդոյ

և Հոգոյն Սրբոյ»:

Ո՞ւմ է հրամայում Քրիստոսը այդ.

Առաջ առաքեալներին, յետոյ եկեղեցոյն էլ:

Ել ի՞նչ պիտի կապուած լինի ջրի հետ.

Քրիստոսի խօսքը:

Ի՞նչ նշանակութիւն ունին Քրիստոսի խօսքերը.

Նրանք հոգի են և կեանք:

Յովհաննէս. 6 զլ. 64 հ. Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չէ տալիս. այն բանն որ ես ձեզ հետ խօսեցի, հոգի է և կեանք է:

Եբրայեց. 4 զլ. 12 հ.— Որովհետև Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրաւոր:

Ուրեմն ի՞նչ է տալիս Աստուծոյ խօսքը ջրին.

Հոգի և կեանք:

Ո՞րն են այն խօսքերը մկրտութեան մէջ.

«Մկրտում են քեզ յԱնուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ»:

Ի՞նչ է Աստուծոյ անունն.

Նորա յայտնուած էութիւնը:

Եւ ի՞նչ է նշանակում մկրտել Նորա անունովը.

Մէկին ընկղմել Աստուծոյ էութեան մէջ:

Ի՞նչ խոստմունք է տալիս Աստուած մըկրտուողին.

Նորա Հայր լինել, նորա համար մարմնաւոր և հոգևոր կողմանէ հոգալ: Նորա վերկիչ լինել, մեղքերից մաքրել և արդարացնել: Նորա առաջնորդ, մխիթարիչ լինել, նորան պատրաստել և պահել յաւիտենական կեանքի համար:

Իսկ մկրտուողը կամ նորա կնքաւորները Աստուծոյն ի՞նչ են խոստանում.

Մնալ իբրև Աստուծոյ սեփականութիւն:

Ուրեմն մկրտութիւնով ի՞նչ է կապվում Աստուծոյ և մարդոյ մէջ.

Մի կապակցութիւն, կամ թէ մկրտութեան ուխտը:

Գու երբ ես մկրտուել.

Երեխայութեան ժամանակ:

Արդեօք եկեղեցին իրաւունք ունի անչափահաս երեխաներ մկրտելու.

Կատարեալ իրաւունք ունի:—

Ո՞ր քրիստոնէաներն են մերժում երեխաների մկրտութիւնը.

Մկրտչականները [Բապտիստները]:

Ի՞նչ գաղափար ունին նորանք մկրտութեան մասին.

Նորանք ասում են թէ՛ անչափահաս երեխան չէ կարող հաւատալ, այս պատճառով ընդունակ էլ չէ Աստուծոյ շնորհը ստանալու:

Քննի՛ր այս նախադասութիւնը.

Ճշմարիտ է այն, որ երեխաները չեն կարող հաւատալ չափահասների պէս. սակայն հաւատալ բառը բուն մտքով ի՞նչ է նշանակում. չհակառակել որ Աստուած մարդոյ սրտի մէջ իր շնորհաց գործը կատարէ:— Բայց չէ որ այս հակառակութիւնը չափա-

հասնելի մէջ աւելի ենք տեսնում քան թէ երեսխանների մէջ, որոնք նման են ծաղիկների որ առանց զգալու այն կողմն են թեքվում, որտեղ արևի ճառագայտներն են երևում:—Այո՛ սա ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ անհաւատութեան նշան, — մտածել, որ Աստուած չէ կարող մկրտութեան շնորհը երեսխաններին էլ տալ:

Ո՞րտեղից ենք իմանում որ երեսխաններն էլ ընդունակ են Աստուծոյ շնորհաց և օրհնութեան համար:

Սուրբ գրքիցը:

Մարկոս. 10 դ. 13 և այլն հ.—Եւ նորա մօտ երեսխաներ էին բերում՝ որ դպի նորանց. բայց աշակերտները սաստում էին բերողներին: Իսկ երբոր Յիսուսը տեսաւ, բարկացաւ, և ասեց նորանց. թոյլ տուէք երեսխաներին ինձ մօտ գան, և մի արգելէք դորանց. որ այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը: Ճշմարիտ ասում եմ ձեզ, ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'նդունի ինչպէս երեսխայ, նա չի մտնիլ նորա մէջ: Եւ նորանց առաւ զիրկը, ձեռքը դրաւ նորանց վերայ, և օրհնեց նորանց:—

Էլ ի՞նչ սխալ կայ վերոլիշեալ վարդապետութեան մէջ.

Նա ուղիղ չէ ըմբռնում մկրտութեան հրամանը, ասելով իբր թէ Յիսուսը ասել էր առաջ աշակերտեցէք և յետոյ մկրտեցէք, և ուզում են, որ մարդս առաջ սովորէ, յետոյ մկրտուէ. բայց Յիսուսն ասաց թէ՛ գնացէք և աշակերտեցէք, և ինքը բացազրոււմ է, ինչպէս պիտի աշակերտեցնեն, այս ինքն, — մկրտելով և սովորեցնելով:

Վերջապէս էլ ի՞նչ պատճառ են բերում մկրտչականները երեսխանների մկրտութեան դէմ:

Նորա ասում են թէ՛ եթէ մկրտութիւնը հարկաւոր է երջանկութեան համար, այն ժամանակ Քրիստոսն էլ այն իրա մօտ բերուած երեսխաններին կ'մկրտէր, — բայց ինքը չ'արաւ այդ, ուստի մննք էլ իրաւունք չ'ունինք անելու:

Ի՞նչ պատասխան ունիս դորա դէմ:

Այն, որ հիմայ երեսխան մկրտութիւնով է ստանում, այն երեսխանները Յիսուսի զրկելով և օրհնելով ստացան:—Եթէ Տէրը հիմա

էլ տեսանելի կերպով մեր մէջ լինէր, մը-
կրտութիւնը իհարկէ հարկաւոր չէր լինիլ
առ հասարակ ոչ մի խորհուրդ հարկաւոր
չէր: Սորա համար էլ մկրտութիւնը միայն
Քրիստոսի բարձրանալուց սկսած է անհրա-
ժէշտ:

Գու ինչ պատճառներ ունիս երեխանե-
րի մկրտութեան համար.

Գաւիթը ասում է Սաղմոսաց 51 զլ. 5 հ.
«Ահա ես անօրէնութիւնով ծնուայ, և մեղքով
յղացաւ ինձ իմ մայրը»: Եւ Յիսուսը ասում
է նիկողէմոսին Յովհաննու 3 զլ. 6 հ. «Մար-
մնից ծնուածը մարմին է... պէտք է ձեզ
վերստին ծնուել»:—Այս խօսքերը անշուշտ
վերաբերվում են երեխաներին էլ:

Ո՞ւմ է խոստանում Յիսուս Աստուծոյ
արքայութիւնը.

Երեխաներին:

Եւ ինչ դուռ կայ Աստուծոյ արքայու-
թիւնը մտնելու համար.

Միմիայն մկրտութիւնը:

Յովհաննէս. 3 զլ. 5 հ.—Յիսուսը պատասխանեց.

ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, եթէ
մէկը ջրից և հոգուց չ'ծնուի, նա կարող
չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել:

Մատթէոսի աւետարանից երևում է, որ
երեխաներին էլ պիտի մկրտենք, որովհետեւ
Տէրը ասում է 28 զլ. 19 հ. «աշակերտեցէք
բոլոր ազգերը», և այդ ազգեր բառը ամփո-
փում է երեխաներին էլ: Յետոյ էլ գրուած
է Գործք Առաքելոց 16 զլ. 15 հ: որ Լիզի-
ան և իր տունը մկրտուեցաւ:—Պօղոս առա-
քեալն էլ ասում է Ա. Կորնթացոց 1 զլ. 16
հ. «Ստեփանի տունն էլ մկրտեցի»:—

Ի՞նչ պարտաւորութիւն ունին ծնողքը
դէպի մկրտութիւնը.

Երեխաներին շուտով մկրտել տալ:

Իսկ ինչ պէտք է անուէ, երբ երեխան
հիւանդ է և մկրտողին սպասելու ժա-
մանակ չ'կայ.

Չ'պէտք էլ է սպասեն, որովհետեւ նեղու-
թեան ժամանակում ամեն չափահաս քրիս-
տոնեան մկրտելու իրաւունք ունի: Թող հա-
ւատամք ասէ, հայր Մերը ազօթէ, ջուրը

երեք անգամ ածէ և ասէ թէ՛ մկրտում եմ
քեզ յԱնուն Հօր և Որդոյ և Սուրբ Հոգոյ:—

Պարտական է երեխան Աստուծոյ առ-
ջև, երբ նա մեռնում է առանց մկր-
տութեան.

Իհարկէ ո՞չ:— Հաւատում ենք և յուսամ առ
Աստուած, որ չ'մկրտուած երեխան էլ փրկ-
կուէ. որովհետև ոչ թէ խորհուրդի բացա-
կայութիւնը, այլ նորան անարգելն է դա-
տապարտում մարդոյս:

Իսկ անտարբեր և թեթեամիտ ծնողնե-
րին ի՞նչ կ'լինի, երբ նորանց երեխան
առանց մկրտութեան մեռնէ.

Նորա կ'ստանան Աստուածանից դատաս-
տան ու պատիժ:

Մկրտութեան ժամանակ էլ ո՞ւմ վերայ
են ընկնում պարտաւորութիւնները.

Մկրտութեան վկաների կամ թէ կնքաւոր-
ների վերայ:

Ի՞նչ են սրանց պարտաւորութիւնները.

Մարմնաւոր և հոգեւոր կողմանէ երեխայի

համար հոգալ, նորա համար աղօթել և երբ
ծնողքը կ'մեռնեն, նորանց տեղ կ'անդնել:

Ի՞նչ տեսակ մարդկանց պիտի ընտրենք
իբրև կնքաւորներ մեր զաւակների հա-
մար.

Հաւատարիմ, ազնիւ և հաւատացեալ քրիս-
տոնեաներ:

Ի՞նչ պարգևներ է բերում, կամ ի՞նչ օ-
գուտ ունի մկրտութիւնը.

Նա ներգործում է մեղաց թողութիւն, ա-
զատում է մահից և սատանայից և շնորհում
է յաւիտենական երանութիւն ամենքին որ
հաւատում են այնպէս, ինչպէս Աստուծոյ
խօսքը և խոստմունքը ասում են:

Որո՞նք են Աստուծոյ այն խօսքը և խոստ-
մունքը.

Մեր Տէր՝ Յիսուս Քրիստոսը՝ Մարկոսի վեր-
ջումն ասում է թէ՛ «Ով որ կ'հաւատայ և
կ'մկրտուի, նա կ'փրկուի և ով որ չ'հաւա-
տայ, նա կ'դատապարտուի»:

Ուրեմն ասած կառճառօտ մկրտութեան
պարգևները.

Փրկութիւն, այսինքն մեղքերի թողութիւն, մահից և սատանայից ազատութիւն և յաւիտենական երանութիւն:

Ա. Կորնթաց. 6 գլ. 11 հ.— Եւ մի քանիներդ այսպէսներ էիք, բայց լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց արդարացաք Տէր Յիսուսի անուանովը և մեր Աստուծոյ Հոգովը:

Կողոսաց. 1 գլ. 12 մինչ. 14 հ.— Եւ դոհութիւն տաք Հօրը որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուրբերի վիճակին լոյսումը. որ փրկեց մեզ խաւարի իշխանութիւնիցը, և փոխադրեց մեզ իր սիրելի Որդու արքայութեան մէջ, որի ձեռովն ունինք փրկութիւն նորա արիւնսովը՝ մեղքերի թողութիւնը:

Այդ բոլոր խոստմունքները ինչ պայմանով է կտտարում Աստուած.

Մեր հաւատոյ պայմանովը,— և հաւատը այն ձեռն է, որով մենք ընդունում ենք այն պարզեանքը:

Փրանսիացոց Լուդվիգ Թագաւորը ասաց. իմ գլխիս վերայ ածած մկրտութեան ջուրը ինձ համար աւելի թանկագին է քան թէ իմ թագս, որը գլխիս վրայ է:

Ինչպէս կարող է ջուրը այսպիսի մեծ բաներ անել:

Արդարեւ ջուրը չէ անողը, այլ Աստուծոյ խօսքը, որ ջրի հետ և ջրի մէջն է, և հաւատը՝ թէ ջրի մէջ կայ Աստուծոյ խօսքը: Վասնզի առանց Աստուծոյ խօսքին ջուրը լոկ ջուր է և մկրտութիւն չէ, բայց Աստուծոյ խօսքովն մկրտութիւն է. այսինքն մի շնորհառատ ջուր կեանքի և Հոգով Սրբով նոր ծննդեան աւագանը, ինչպէս Պօղոս առաքեալը Տիտոսի թղթի երրորդ գլխումն ասում է թէ՛ «Աստուած մեզ փրկեց միւսանգամ ծնուելու աւագանովը և Սուրբ Հոգու նորոգութիւնովը, որ առատութիւնով թափեց մեզ վերայ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ձեռովը, որ նորա շնորհքովն արդարացած ժառանգ լինենք յաւիտենական կեանքի յոյսովը»:

Ուրեմն մկրտութեան ջուրը ինչից է ստանում իւր հրաշալի զօրութիւնը.

Միմիայն Աստուծոյ խօսքիցը:

Ի՞նչ օրինակներ գիտես, ըբբև ասացոյց որ Աստուած ջրին հրաշալի զօրութիւն է տալիս.

Նէեման զօրագլխի պատմութիւնը. եթէ Աստուծոյ խօսքը չ'լինէր, Նէեմանը կարող էր 100 անգամ լողանալ Յորդանանի մէջ, բայց և այնպէս օգուտ չէր ստանալ:

Աստ մի ուրիշ օրինակ էլ.

Այն 'ի ծնէ կոյր մարդու պատմութիւնը, որ գրուած է Յովհաննու աւետամանի 9-րդ գլխում:

Սելոամայ աւագանի ջուրը յորտեղից ըստացաւ այն հրաշալի զօրութիւնը.

Յիսուս Քրիստոսի խօսքիցը:

Նմանապէս էլ մկրտութեան ջուրը Աստուծոյ խօսքով հանդերձ զօրութիւն է ստանում և դառնում է մկրտութիւն,—որը բերում է մեզ այն վերոյիշեալ թանկագին պարզկները:

Ուրեմն ինչ հրաշք է կատարվում մկրտողի համար.

Նա նորից մէկ էլ է ծնվում, որ մարդու բանականութեան համար մեծ և անհասկանալի հրաշք է:

Յովհաննէս, 3 գլ. 7 և այլն 4.—Մի զարմանար որ ասեցի քեզ թէ պէտք է ձեզ վերս-

տին ծնուիր: Քամին որտեղ ուզում է՝ փչում և նորա ձայնը լսում ես. բայց չ'գիտես թէ ո՞ր տեղից է գալիս և ո՞ր տեղ է գնում, այսպէս է ամեն Հոգուցը ծնուածը:

Ի՞նչ է պահանջվում մկրտողի կողմից.

Հաւատ, որով նա ապաւինում է այն խօսքին, որը ջրի հետ կապուած է:

Ի՞նչ սկսեց մեզանում Սուրբ Հոգին նոր ծննդեամբ.

Նոր կեանք:

Այդ նոր կեանքին ի՞նչ է պահասում դեռ.

Կատարեալութիւն. նա պիտի աճի և մեծանայ կեանքի ընթացքում ամեն օր պէտք է նոր մարդը մեզանում նորոգուի:

Քո մկրտութեան միջոցով ի՞նչ բարձր աստիճան ես ձեռք բերում.

Աստուծոյ որդեգրութիւնը:

Պատմում են որ մէկ անգամ եգիպտացոց թագուհի՝ Կլէօպատրան Անտօնիոսին հրաւիրեց ճաշի. բայց նորա համար բացի մի

քացախով լցուած բաժակից ոչինչ բերել չ'տուաւ, որի մէջ նա արդէն լուծել էր տը- ուել մի մարգարիտ երկու ու կէս տակառ ոսկու արժողութեամբ:

Ի՞նչ է նշանակում այսպիսի ջրով մկր- տելը.

Սա նշանակում է, որ հին մարդը մեղանում ամենօրեայ զղջմամբ և ասպաշխարութեամբ պիտի ձնչուի և մեռցնուի իր ամեն մեղքե- րով և շար ցանկութիւններով, և կրկին ամեն օրը վեր կենայ և յարութիւն առնէ նոր մարդը, որ արդարութեամբ և մաքրութեամբ Աստուծոյ առջև յաւիտեան ասլըէ:

Սա սրտեղ է գրուած.

Պօղոս առաքեալը Հռովմայեցոց թղթի վե- ցերորդ գլխում ասում է թէ՛ «Մենք որ Յի- սուս Քրիստոսով մկրտուեցանք՝ նորա մահ- ուան մկրտուեցանք: Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մէջ. որ ինչպէս Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ կեան- քի նորոգութեան մէջ ման դանք:

Ուրեմն ինչ է նշանակում մկրտողին ջրի մէջ ընկածել և ջրից հանել.

Հին մարդու մահը,—և նոր մարդու ծնուն- դը:

Գաղատաց. 5 գլ. 19 մինչև 22 հ.—Եւ յայտնի են մարմնի գործերը, որ են՝ շնու- թիւն, պոռնիկութիւն, սղծութիւն, դի- ճութիւն, կռապաշտութիւն, կախար- գութիւն, թշնամութիւններ, կուի- ներ, նախանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ, երկպառակու- թիւններ, բաժանմունքներ, չար նայ- ուածներ, սպանութիւններ, արբեցու- թիւններ, անառակութիւններ և ինչ որ սորանց նմամ են. որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպէս էլ առաջուց ասում էի, թէ այսպիսի բաներ գոր- ծողներն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ: Բայց Հոգու պոռուցն է սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բա- րութիւն, հաւատք, հեղութիւն, ժուժ- կալութիւն:—

Հին Ա.դամը մկրտութիւնով մեռցրած է արդեօք միտնդամայն.

Ո՛չ՝ ցաւալի է որ նա շատ դիմացկուն է:

Ապա ինչ պիտի անուի:

Նա ամեն օր պէտք է մեռցնուի:

Ի՞նչ միջոցներով:

Ամենօրեայ զղջմամբ և ասպաշխարութեամբ:

Մինչև երբ պէտք է այս կռիւը շարունակուի:

Մինչև մեր կեանքի վերջը:

Գաղատաց. 5 զլ. 24 հ.—Նորանք որ Քրիստոսինն են, իրանց մարմինը խաչ հանեցին կիրքերովը և ցանկութեաններովը միասին:—

Նփեսաց. 4, 23 և 24 հ.—Նւ ձեզ մտքի հոգովը նորոգուէք, և նոր մարդին հագնէք՝ որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է՝ ճշմարտութեան արդարութիւնովը և սրբութիւնովը:

Քրիստոսի խօսքերում էլ ինչ հրաման կայ քրիստոնեաների համար մկրտութեան մասին:

Միասիօնէրական հրամանը:

Ի՞նչ է միասիօնէրական գործը:

Ուղարկել հաւատոյ պատկամաւորներին հեթանոսների, հրէաների և մահմէդականների մօտ, նորանց խաչեալ Քրիստոսին քարոզելու և դէպի կենդանի Աստուածը դարձի բերելու համար:

Ինչքան միասիօնէրներ են գործում այժմ ընթանոսների և հրէաների մէջ:

8000 հոգի:

Ո՞վ է ուղարկում նորանց:

Նորանք ուսում առնելուց և պատրաստուելուց յետոյ ուղարկվում են միասիօնէրական ընկերութիւններից:

Քանի՞ աւետարանական միասիօնէրական ընկերութիւններ կան:

280:

Ի՞նչ ենք պարտաւոր միասիօնէրական գործի համար անելու, եթէ ինքներս չենք կարող միասիօնէրներ դառնալ:

Մենք պէտք է հեթանոսների, հրէաների և մահմէդականների համար աղօթք անենք և

միասիօնէրական գործի համար մեր նուէրները տանք:


Ուղարկում են արդեօք բոլոր եկեղեցիները միասիօնէրներ.

Ոչ՝ կան եկեղեցիներ, որոնք այս գործի համար ոչինչ չեն անում, օրինակի համար, Եթօպացոց, Նեստորիական և Լուսաւորչական եկեղեցիները չ'նայելով առաքեալի խօսքին թէ՛ հաւատում են, գորա համար էլ խօսում են:—

Ի՞նչ նշան է այդ այն եկեղեցոյ համար, որը միասիօներութիւն չէ անում.

Սա թոյլութեան և մահաբեր հիւանդութեան մի նշան է:

Իսկ մենք, փառք Աստուծոյն, ուրախ սըրտով կարող ենք ասել թէ՛ Տէրը մեր աւետարանական եկեղեցոյ միասիօնէրական գործը ուրիշ եկեղեցիներից աւել է օրհնում:— Տէրը տայ որ չ'թոյլանանք, այլ Նորա գորութիւնով առաջ գնանք:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼԽԱՒՈՐ ՄԸՍԸ:

Ինչի՞ մասին է խօսվում այդ մասումը.

Սեղանի խորհուրդի մասին:

Ել ի՞նչ անուններ ունի այս խորհուրդը.

Հաղորդութիւն, սուրբ ընթրիք, ճաշակուել, սրբութիւն առնել, Աստուծոյ սեղան:

Ի՞նչ է սեղանի խորհուրդը.

Դա է մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնն հացի և գինու տեսակով, որ նոյն ինքն Քրիստոս մեզ՝ քրիստոնեաներիս ուտելու և ըմպելու համար կարգել է:

Սա սրտեղ է գրուած.

Այսպէս են գրում աւետարանիչները Մատթէոս, Մարկոս, Դուկաս և Պօղոս առաքեալը, «Մեր Տէր Յիսուս Քրիստոսը այն ղիշերըն, երբոր մատնվում էր, վեր առաւ հացը, գոհացաւ և կտրեց, տուաւ իր աշակերտներին և ասաց. առէք և կերէք, սա է իմ

մարմինը, որ տրվում է շատերի համար. այս արէք իմ յիշատակիս համար: Նմանապէս վերցրեց բաժակը և սաաց. առէք և խմեցէք զորանից ամենիդ, այս բաժակս նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզ և շատերի համար թափվում է իբրև թողութիւն մեղաց. այսպէս արէք երբոր կ'իմէք այդ բաժակը ինձ յիշելու համար:

Ո՞ր օրը կարգեց Յիսուս այս խորհուրդը:

2 օրէք շաբթի օրը:

Ի՞նչ նպատակով ժողովեց Նա իր աշակերտներին այն օրը:

Ջատիկը տօնելու համար:

Ի՞նչ կարգով էր տօնվում զատիկը.

Տան տէրը ժողովում էր տան բոլոր անդամներին, վերցնում էր բաժակը և զոհանում էր զինու և սուրբ օրուայ համար: Ինքը խրմելուց յետոյ տալիս էր բաժակը ամենիին: —Մի ամանի մէջ բերվում էր թթու խաշիլ և մի քանի տեսակ գաւն կանանչ, որը ուտվում էր բոլոր նատոյներից զոհութիւ-

նով, իբրև յիշատակ այն գաւն տառապանքների, որ հայրք եզիպտոսում կրել էին: Նրանից յետոյ բերվում էր բազարջ և զատկի գաւն:—Տան հայրը զոհանում էր, և բազարջը խաշիլի մէջ թաթախելուց յետոյ, ասում էր. սա նեղութեան հայն է, որ մեր հայրք եզիպտոսում ուտում էին. և սեղանակիցները նոյն էին անում:—Յետոյ առաջ էր բերվում երկրորդ բաժակը և զատկի գաւը ուտվում էր: Ուտելիս հայրը պատմում էր հարանց պատմութիւնը, իսկ ընտանիքը երգում էր սաղմոսաց 113 և 114 գլ.:—Երրորդ բաժակը խմելուց յետոյ երգում էին սաղմոսաց 115 մինչև 118 գլ.:—

Ի՞նչն նախապատկերն էր զատկի գաւը.

Յիսուս Քրիստոսի:

Ի՞նչ են այս խորհուրդի տեսանելի նըշանները.

Հաց ու զինի:

Ի՞նչ արաւ Յիսուս հացի և գինու վրայ.

Նա առաջ զոհացաւ:

Ի՞նչ խօսքեր ասաց Նա բաժանելու ժամանակ.

«Սա է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովըս, որ ձեզ համար թափվում է իբրև թողութիւն մեղաց»:

Ի՞նչ են ցոյց տալիս այս խօսքերը.

Խորհուրդի անտեսանելի շնորհաց պարգևները:

Ո՞րն են սրանք.

Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Այս խօսքերը ասելիս կանգնած ենք Աստուծոյ յայտնապէս մեծ խորհուրդի առջև:— Հէնց նոյն խօսքերը քրիստոնէութեան մէջ շատ վիճաբանութիւնների պատճառ եղան: Իհարկէ այս խօսքերի վերայ վիճաբանելը մի շատ ցաւալի բան է, բայց սրանից երևում է, ինչքան նշանաւոր են այս խօսքերը քրիստոնէական եկեղեցոյ համար: Փորձենք միամտութեամբ ըմբռնել նորանց:

Ի՞նչ է Քրիստոսի մարմինն ու արիւնը.

Սա կենդանի Քրիստոս ինքն է:

Ի՞նչ արաւ Նա իր մարմնոյ և արեան հետ.

Խաչափայտի վերայ մեզ համար տուաւ և թափեց:

Բայց ի՞նչ եղաւ Նորա մարմինը յարութեան ժամանակ.

Նորա մարմինը կերպարանափոխուեց:

Հիմա ի՞նչ է անում Նա իր կերպարանափոխուած մարմնովը:

Համբարձուելուց յետոյ նստած է Հայր Աստուծոյ աջ կողմում:

Ի՞նչ է անում Նա իւր խօսքի զօրութիւնով իւր կերպարանափոխուած մարմնոյ և արեան հետ սուրբ հաղորդութեան ժամանակ.

Հացի և գինու տեսակով Նա տալիս է մեզ իւր մարմինը ուտելու և արիւնը խմելու համար:

Ա. Կորնթաց. 10 զլ. 16 հ.— Այն օրհնութեան բաժակը, որ օրհնում ենք, չէ՞ որ

հաղորդութիւն է Քրիստոսի արիւնի. այն հացը, որ կտրոււմ ենք, չէ որ հաղորդութիւն է Քրիստոսի մարմնին:

Ի՞նչ է նշանակում հաղորդութիւն բարւ.

Միաւորութիւն, կապ:

Ուրեմն ինչի՞ հետ ունին հաղորդութիւն օրհնութեան բաժակը և հացը.

Աւարեալու խօսքովը, Քրիստոսի արեան և մարմնոյ հետ:

Ի՞նչ են ստանում ուրեմն հաղորդողները.

Հաց և զինի, բայց մի և նոյն ժամանակ Տիրոջ մարմինը և արիւնը:

Սա ի՞նչպէս է լինում.

Սա մեղ համար անհասանելի է:

Ապա ինչո՞ւ համար ենք հաստատ և ամուր հաւատում.

Այն խօսքի հիման վրայ, որը Քրիստոս ասած թէ՛ սա է մարմինս, սա է արիւնս:

Բայց մի՞թէ կարող է նա այս անել.

Իհարկէ, սրովհետև նորան տրուած է ամեն իշխանութիւնը երկնքումն և երկրիս վերայ:

Ինչպէս են դաւանում սորա մասին բարեկարգուած եկեղեցին և աղանդներէ մեծ մասը.

Սորանք ասում են թէ՛ Քրիստոսի մարմինը ու արիւնը հիմա երկնքումն են, ուստի և չեն կարող հաղորդութեան մէջ լինել:

Ուրեմն ինչո՞վ են դատում նորանք.

Իրանց մարդկային բանականութեամբ:

Ուղի՞ղ է այդ ճանապարհը.

Ոչ՛ Աստուծոյ խօսքին դէմ է:

Բ. Կորնթաց. 10 զ. 5 հ.—Եւ դերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին հնազանդեցնելու համար:

Ո՞ր եկեղեցին է ընկնում մի ուրիշ սըլ խալմունքի մէջ.

Կաթոլիկ եկեղեցին ասելով թէ՛ ինչպէս Յիսուս Կանայում հարսանիքի ժամանակ

չուրը գինի գոյափոխեց, այնպէս էլ հաղորդութեան մէջ հացը և գինին մարմինը և արիւնն են գոյափոխվում, հացից ու գինուց մի հետք էլ չէ մնում:

Ինչո՞ւ Համար կարգեց Յիսուս սուրբ հաղորդութիւնը.

Ուտելու և ըմպելու համար:

Եւ ի՞նչ պէտք է անէ հաղորդուողը Քրիստոսի հրամանի համեմատ.

Իւր Տիրոջը, մանաւանդ նորա դառն շարանըրը, մեծ սէրը և իւր անչափ մեղքերը յիշէ:

Ի՞նչ է պահանջվում մեզանից հաղորդուելուց առաջ.

Ինքնաքննութիւն:

Ա. Կորնթաց. 11 գլ. 28 հ.—Ուրեմն թող մարդը փորձէ իր անձը, և ապա այն հացիցն ուտէ՝ և այն բաժակիցը խմէ:

Ո՞վ չունի իրաւունք Տիրոջ սեղանին մօտենալու.

Այն անձերը, որոնք իրանց չեն կարող քննել, ինչպէս թէ՛ երեխաները, ապուշներ և խելագարներ, բայց մանաւանդ յայտնի կամակոր մեղաւորներ:

Ի՞նչ օգուտ ունի այդպիսի ուտելն և ընպելը.

Այդ օգուտը ցոյց է տալիս մեզ այս խօսքը, «Ձեզ և շատերի համար տրվում է և թափվում է իբրև թողութիւն մեզաց»։ այս ինքըն մեզ տրվում է սուրբ ընթրիքի խորհուրդի մէջ մեզաց թողութիւն, կեանք և երանութիւն վասնզի ուր մեզաց թողութիւն կայ, այնտեղ կեանք և երանութիւն էլ կայ:

Ո՞ւմ ենք ընդունում հաղորդութեան մէջ.

Քրիստոսին, այս ինքն նորա հետ ճշմարտապէս միաւորվում ենք.

Յովհաննէս. 15 գլ. 5 հ.—Ես որթն եմ՝ դուք ճիւղերը. ես որ ինձանում մնում է, և ես նորանում, ես շատ պտուղ է բերում. որովհետև առանց ինձ չէք կարող ոչինչ անել:

Ի՞նչ է ստանում անհաւատ և անարժան հաղորդուողը.

Նա էլ ընդունում է Քրիստոսի մարմինը ու արիւնը միայն թէ իր դատապարտութեան համար:

Ի՞նչ ենք ստանում Քրիստոսի հետ միասին.

Իհարկէ թողութիւն մեղաց և նորա մէջ կեանք և երանութիւն:

Այս ստացուած պարգևները ինչից պիտի երևան.

Սուրբ ընթացքից:

Յովհաննէս. 5 գլ. 14 հ.—Ահա առողջացար, այլ ևս չ'մեղանչես, որ էլ աւելի չար բան չ'լինի քեզ:

Քրիստոսի մարմնոյ հետ միաւորուած լինելով ինչ գրաւ ունինք մեր մահկանացու մարմնոյ համար.

Յարութեան և յաւիտենական կեանքի գրաւը:

Յովհաննէս 6 գլ. 51, 52, 54, 55 հ.—Ես եմ կենդանի հացն, որ երկնքիցն է իջել: Եթէ մէկն այս հացիցն ուտէ, յաւիտեան կ'ապրի. և այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ

մարմինն է, որ ես նորան աշխարհքի կեանքի համար կ'տամ.....: Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, եթէ մարդի Որդու մարմինը չ'ուտէք և նորա արիւնը չ'խմէք, կեանք չ'ունիք ձեր անձերումը:—Իմ մարմինը ուտողը և իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի. և ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան:—

Մանաւանդ երբ է մխիթարում և հաստատում մարդոջն սուրբ հաղորդութիւնը.

Մահուան ժամում, յաւիտենական կեանքի նախաճաշակ տալով:

Ի՞նչպէս կարող է մարմնապէս ուտելն և ըմպելն այսպէս մեծ բաներ անել.

Իհարկէ ուտելն ու ըմպելն չէ անողը, այլ այն խօսքերը, որոնք զրուած են. «Ձեզ և շատերի համար տրվում է և ձեզ համար թափվում է իբրև թողութիւն մեղաց»: Այս խօսքերը, մարմնաւոր ուտելու և խմելու հետ ընթրեաց խորհուրդի զլիաւոր մասն են, և ով որ այս խօսքերին հաւատում է, նա ունի, ինչ որ զորանք ուզում են ասել, այսինքն՝ մեղքերի թողութիւն:

Ուրեմն ինչից է կախուած հաղորդութեան հրաշալի ներգործութիւնը.

Այն խօսքերիցը, որ Քրիստոս ասել է թէ՛ ձեզ համար է տրուած և թափուած:

Այո՛ սիրելիս, այս ամենակարող խօսքերը ամբողջ աւետարանի բովանդակութիւնն են և նորանց հաւատացողը ունի Քրիստոսի մահուան պտուղը:

Ինչի՞ հետ է համեմատում Քրիստոս իւր խաչելութիւնը.

Պղինձի օձի հետ, որի մասին պատմվում է թուոց գրքի մէջ 12 գլխում:

Արդեօք կարող էր մի նայուածք բժշկել հիւանդին.

Ոչ՝ բժշկողը Աստուծոյ խօսքն էր. որովհետեւ եթէ Մովսէսը առանց Աստուծոյ հրամանի 1000 օձեր շինած լինէր, մի մարդ էլ չէր բժշկուիլ նորանց նայելով:

Ո՞վ է ընդունում այս խորհուրդը արժանապէս:

Պահեցողութիւնը և մարմնաւոր կերպով իր

անձն պատրաստելը իհարկէ մի նուրբ արտաքին կարգ է, բայց ճշմարտապէս արժանին և բարեւոք պատրաստուածը նա է, որ հաւատում է այս խօսքերին թէ՛ «ձեզ համար տրվում է և ձեզ համար թափվում է իբրև թողութիւն մեզաց»:—Բայց ով որ այս խօսքերին չէ հաւատում կամ երկմտում է, նա անարժան է և անպատշաատ, որովհետև այս խօսքը «ձեզ համար» պահանջում է, միայն կատարելապէս հաւատացեալ սիրտ:

Ի՞նչ են անում շատերը հաղորդութեանց առաջ.

Չատերը ծոծ են պահում:

Օրէնք է սա.

Հին ուխտի մէջ օրէնք էր, իսկ նոր ուխտի մէջ չ'պէտք է օրէնք լինի:—

Կողոսաց. 2 գլ. 16 հ.—Արդ թող մէկը չ'դատէ ձեզ ուտելու կամ խմելու համար:

Ուրեմն ինչպէս պէտք է անէ մի աւետարանական քրիստոնեայ.

Իւր ազատ որոշման համեմատ:

Էլ ի՞նչ արտաքին կերպով կարող է մարդըս պատրաստուել հաղորդութեան համար.

Հագուստի կողմանէ, որը պիտի վայելուչ և համեստ լինի. շքեղութիւն, զարդարանք, ոսկիներ և ուրիշ դատարկ բաներ անվայել են.

Ո՞վ է ներքին պատրաստուած.

Նա որ հաւատում է այդ խօսքերին թէ՛ ձեզ համար տրուած և թափուած է իբրև թողութիւն մեզաց:

Ինչի՞ն չէ նայում Տէրը.

Հաւատքի մեծութեան. նա ուզում է միայն նորա անկեղծութիւնը և պարզութիւնը:

Սեղանին մօտեցողը ի՞նչ պէտք է սրտանց փափագէ.

Իւր մեղքերին թողութիւն:

Ո՞վ կ'փափագէ թողութիւն.

Նա, որ իր մեղքերը լաւ և սրտի խորքից ճանաչում է:

Ինչո՞վ կարող է մարդս իր մեղքերը լաւ ճանաչել.

Ատուծոյ սուրբ օրէնքով:

Ի՞նչ կ'զգայ սրտում իր մեղքերը ճանաչած մարդը.

Ձղջում և տրամութիւն:

Սլապիսի մարդ թող վստահութեանը մօտենայ Տիրոջ սեղանին,—սա է արժանաւորութիւնը և պատրաստ լինելը:

Բայց ի՞նչ է այս արժանաւորութեան նշանը.

Հաստատ որոշումն մեղքից հրաժարուել, նորա դէմ պատերազմել:

Էլ ի՞նչ է պահանջում մեզանից Տէրը մեր հաղորդուելուց առաջ.


Որ ամեն մարդկանց հետ հաշտուած լինենք:

Մատթէոս. 5 գլ. 23 և 24 հ.— Սրբ' եթէ սեղանի վերայ մատուցանես քո ընծան, և այնտեղ յիշես, թէ քո եղբայրը քեզ դէմ մէկ բան ունի, թող այնտեղ քո ընծան սեղանի առաջին. և զնա ա-

ուջ հաշտուիր քո եղբօր հետ, և յետոյ
եկ ընծադ մատուցրու:

Մարդս տարին ինչքան անգամ պէտք է
հազորդուէ:

Սա կարիքից է կախուած: Բարեկարգութեան
դարում հաւատացեալները հազորդվում էին
տարին 3 կամ 4 անգամ:



Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն:

Ի՞նչ ես սովորել այս քրիստոնէականից:

Որ շնորհաց բոլոր պարզկները, ամբողջ
երկինքը նորանց է պատկանում, որոնք հա-
ւատում են:

Սորանից ի՞նչ է բղիւում:

Որ մենք պիտի արդէն հիմա Քրիստոսին
նուիրուենք ժամանակաւոր և յաւիտեան:

Ո՞ր վարդապետութիւնն էք տեսնում
Աստուծոյ խօսքի հետ համապատաս-
խան:

Մեր սիրելի աւետարանական—Լութերա-
կան եկեղեցոյ վարդապետութիւնը:

Այս բանը իմացողին Աստուած ի՞նչ է
ասում:

«Հաւատարիմ եղիր մինչև ի մահ, և կեան-
քի պսակը կ'տամ քեզ»: (Յովհաննու յայտ-
նութիւն 2 գլ. 10 հ.):—

Եւ որտեղ կ'հասնեն վերջապէս նորանք,
որոնք Քրիստոսին հաւատարիմ են.

Երկնային Երուսաղէմ:

Աստուած տայ, որ մեզանից ոչ մէկն էլ
չ'պակասէ այնտեղ:—Ամեն:—

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Մ Ն

Ի՞նչ պէտք է անէ մարդս, երբ նա հա-
ղորդուելուց առաջ իրան քննելով տես-
նում է որ իւր հաւատքը տկար է.

Պէտք է չ'յուսահատուի, այլ Տիրոջ սեղա-
նին մօտենայ. որովհետեւ ոչ թէ տկար հա-
ւատը այլ անհաւատութիւնն է մարդու ա-
նարժան դարձնում, իսկ տկար հաւատ
ունեցողը հաղորդութեան միջոցով մինչև
անգամ զօրանում էլ է:

Ղուկաս. 5 զլ. 31 և 32 հ.—Առողջները կարօտ
չեն բժշկի, այլ հիւանդները: Եւ չեմ ե-
կել աշգարներին կանչելու, այլ մեղա-
ւորներին՝ ապաշխարութեան:

Մատթէոս 11 զլ. 28 հ.— Ինձ մօտ եկէք, ամեն
վաստակածներ և բեռնաւորուածներ, և
ես հանգիստ կ'տամ ձեզ:

Ինչով է օգնում մեզ եկեղեցին ուղիղ
պատրաստուելու համար.

Խոստովանութիւնով:

Ի՞նչ է խոստովանութիւնը.

Լութերը ասում է թէ՛ խոստովանութիւնը
երկու մասից է բաղկացած. առաջինը՝ որ
մենք մեր մեղքերը դաւանենք և երկրորդը՝
որ քարոզչի բերանով մեզ Աստուածանից
թողութիւն է յայտնվում: Ուրեմն առաջինը
մեր զործն է, իսկ միւսը Աստուծոյ:—

Ի՞նչ օրինակներ կ'ստես.

Նաթանն ասաց Դաւթին. Դու ես այն մար-
դը: Եւ Դաւիթն ասաց Նաթանին. մեղան-
չեցի Տիրոջ դէմ: Եւ Նաթանն ասաց Դաւ-
թին. Տէրն էլ ներեց քո մեղքը:— Եւ նոր
կտակարանում տեսնում ենք, որ աւագակ-
ներից մեկը ասում է. մենք իրաւունքով
ենք պատժոււմ, վասնզի մեր արած զործ-
քերին արժանի հատուցումն ենք ստանում.
և ասաց Յիսուսին. Տէր, ինձ յիշիր, երբոր
գաս քո թագաւորութիւնովը: Եւ Յիսուսը
ասաց նորան. ճշմարիտն ասում եմ քեզ,
դու այսօր ինձ հետ զրախտումը կ'լինիս:

Ուրեմն սա ի՞նչպիսի պաշտօն է եկեղե-
ցոյ մէջ.

Դա մի առանձին եկեղեցական իշխանութիւն է, որ Քրիստոս տուել է իւր եկեղեցոյն երկրիս վերայ, ապաշխարած մեղաւորների մեղքը թողնել, իսկ անապաշխարներին թողութիւն չ'տալ, մինչև կ'ապաշխարեն:

Սա սրտեղ է գրուած,

Այդպէս է գրում Յովհաննէս աւետարանիչը 20-րդ գլխումն. «Տէր Յիսուսը փչեց իւր աշակերտների վերայ և ասաց նորանց. «Աւէք Սուրբ Հոգին: Որոնց մեղքը որ թողէք՝ թողուած կ'լինի նորանց. որոնցը որ պահէք պահուած կ'լինի»: —

Ի՞նչ էս հաւատում լսելով այս խօսքերը: Ես հաւատում եմ, ինչպէս որ Քրիստոսի կոչուած սպասաւորները նորա աստուածային հրամանով մեզ հետ վարվում են, մանաւանդ, երբոր նորանք յայտնի և անապաշխար մեղաւորներին քրիստոնէական հաղորդութիւնից արտաջսում են և այն մարդկանց, որոնք իւրեանց մեղքը կամենում են զղջալ և իւրեանց անձը ուղղել, — դարձեալ արձակում են, — թէ այս բոլորը

հաստատ և ճշմարիտ է նոյնպէս և երկնքումն, որպէս թէ մեր մարդասէր Տէր Յիսուսը ինքն է վարվում մեզ հետ:

Ո՞ր մեղքերը պէտք է խոստովանենք.

Մեր անձը Աստուծոյ առջև ամեն կողմանէ պարտական պիտի համարենք և սյն բաների մէջ էլ, որ մենք չենք ճանաչում, ինչպէս որ մենք Հայրմերումն աղօթում ենք. իսկ քարոզչի առջև այն մեղքերը միայն, որը զիտենք և զգում ենք մեր սրտի մէջ:

Որո՞նք են դոքա.

Նայիր քո կեանքի՛ գրութեան, յիշելով տասը պատուիրանքներ թէ դու հայր ես, մայր, ուստր կամ դուստր, տէր կամ տիկին, ծառայ կամ աղախին. արդե՞ք եղել էս դու անհաւատարիմ, անհնազանդ, ծոյլ, բարկացոտ, անպարկեշտ, ատեցող. արդե՞ք դու մէկին վշտացրել ես, զանցառութիւն ես արել, անհող ես եղել կամ վնաս ես տուել:

Մթթէ լաւ բանն է քարոզչի առջև մասնաւոր խոստովանութիւն անել.

Անշուշտ լաւ բան է, եթէ անկեղծ կեր-

պով և վստահութեամբ է անվում: Միայն թէ ստիպողական պարտաւորութիւն չ'պէտք է դառնայ, ինչպէս ուրիշ գաւանութիւնների մէջ է ընդունուած:

Յակորոս 5 գլ. 16 հ.—Իբար խոստովանեցէք ձեր յանցանքները և իբար վերայ ազօթք աւերէք, որ բժշկուիք:

Ո՞վ չ'պէտք է ստանայ մեղքերի թողութիւն.

Անհաւատները և անապաշխարները:

Կայսեր Թէոդոսիոս Մեծը (395 թ.) ապստամբութեան ժամանակ հրամայեց Թեսաղոնիկ քաղաքում կոտորել 7000 բնակիչ:—Նա վերագառնալիս Միլան քաղաքում փափագեց հաղորդուել, բայց Ամբրոսիոս եպիսկոպոսը մերժեց նորան: Կայսերը Դաւիթ թագաւորի օրինակը բերաւ, իսկ Ամբրոսիոսը առաց. նորա մեղքին հետեցիր, նորա ապաշխարութեան էլ գնայ հետեւիր: Եւ կայսերը արաւ այդ. հանեց կայսերական հագուստը, 8 ամիս չէր եիւնում ժողովքներում և վերջապէս չնւնապէս ամբողջ ժողովուրդի առջև խոստովանեց իր մեղքը ու ապաշ-

խարեց չոգելով և աղօթելով. ո՞վ Աստուած, իմ անձս փոշու մէջ է ընկած, ո՞չ տուր ինձ կեանք քո խոստման համեմատ:—

Տ Ա Ս Ր Կ Ա Ր Գ և Կ Ա Ն Ո Ն:

Եպիսկոպոսներին, հոգևորականներին և քարոզիչներին:

Ա. Տիմոթէոս. 3 գլ. 2 մինչ. 5 հ.—Եպիսկոպոսին պէտք է անարատ լինել, մէկ կընկան մարդ, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, սովորեցնելու յարմար. ոչ զինեմով, ոչ զարկող, այլ հանդարտ, կուլ չ'անող, ոչ արծաթասէր. իր տանը բարի վերակացու լինող, որ որդիներ ունենայ հնազանդութեան մէջ ամեն պարկեշտութիւնով. (բայց եթէ մէկը իր տանը վերակացու լինել չ'գիտենայ, ինչպէս նա Աստուծոյ եկեղեցուն խնամք կ'տանի) ոչ նորահաւատ:

Տիտոս. 1 գլ. 9 հ.—Հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որ կարող լինի ողջամիտ վարդապետութիւնով յորդորել էլ, և հակառակողներին յանդիմանել էլ:

Ի՞նչ են պարտական լսողները իրանց ուսուցիչներին և հովիւներին:

Ղուկաս. 10 զլ. 7 հ.—Նորանց ունեցածիցը կերէք և խմեցէք. որովհետեւ մշակն իր վարձին արժանի է:

Ա. Կորնթաց. 9 զլ. 14 հ.—Այնպէս որ էլ Տէրը հրաման տուաւ աւետարանը քարոզողներին աւետարանիցն ապրել:

Պաղատաց. 6 զլ. 6 և 7 հ.—Յօսքին աշակերտողը թող վարդապետին մասնակից անէ ամեն բարի բաներով, մի խաբուիք, Աստուած չի ծաղրուել:

Ա. Տիմոթէոս. 5 զլ. 17 և 18 հ.—Լաւ վերակացութիւն անող երէցները թող երկուպատիկ պատուի, արժանի լինեն. մանաւանդ նորանք որ խօսքով և վարդապետութիւնով են աշխատում: Որովհետեւ գիրքն ասում է թէ կալի մէջ աշխատող եզի դունչը չ'կապես. թէ մշակը արժանի է իր վարձքին:—

Ա. Թէսսաղոնիկ. 5 զլ. 12 և 13 հ.—Եւ աղաչում ենք ձեզ, եղբարք, որ ճանաչէք ձեր միջումը աշխատողներին և ձեր վերակացուներին Տէրումը, և ձեր խրատողներին էլ: Եւ նորանց առաւելապէս պատուեցէք սէրով իրանց գործի պատճառով:

Քրրայեց. 13 զլ. 17 հ.—Ականջ դրէք ձեր առաջնորդներին, և հնազանդէցէք. որ նորանք հսկում են ձեր հողիների համար որպէս թէ հաշիւ պիտի տան որ ուրախութիւնով անեն այն և ոչ թէ հառաչելով—որ դա ձեզ օգուտ չէ:—

Աշխարհական իշխանութեան համար:

Հուովմայեց. 13 զլ. 1, 2 և 4 հ.—Ամեն անձը թող հնազանդէ բարձր իշխանութիւններին. որովհետեւ չ'կայ իշխանութիւն որ չէ Աստուածանից. և ներկայ իշխանութիւններն Աստուածանից են կարգուած: Ուրեմն իշխանութեանը հակառակողը Աստուծոյ հրամանին է հակառակում. և հակառակողներն իրանց անձերին դատաստան կ'ընդունեն....: Որովհետեւ զուր տեղը սուրբ չէ կրում որովհետեւ նա սպասուոր է Աստուծոյ՝ վրէժխնդիր բարկութիւն բերելու չարը գործողի համար.

Չպատակների համար:

Մատթէոս. 22 զլ. 21 հ.—Ուրեմն կայսրինը կայսրին տուէք և Աստուծոյնը՝ Աստուծուն:—

Հուովմայեց. 13 զլ. 5 մինչ. 7 հ.—Վասնորոյ պէտք է հնազանդ լինել՝ ոչ միայն բարկութեան համար, այլ խղճմտանքի հա-

մար էլ: Սորա համար հարկ էլ էք վճարում. որովհետև նորանք սպասաւորներ են Աստուծոյ որ իսկ այս բանին հող են տանում: Ուրեմն ամենին վճարեցէք եղած պարտքը. ում որ հարկ պարտ էք՝ հարկը, ում որ մաքս՝ մաքսը, ում որ վախ՝ վախը, պատիւ՝ պատիւը:—

Ա. Տիմոթէոս. 2 դլ. 1 մինչ. 3 հ.—Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղօթք անել, ինչդրուածք, աղաչանք, դոհուածիւն ամեն մարդկանց համար, թաղաւորները և ամեն իշխանաւորները համար. որ խաղաղ և հանգարտ կեանք վարենք, բոլոր աստուածապաշտութիւնով և սրբութիւնով: Որովհետև սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստուծոյ առաջին:—

Տիտոս. 3 դլ. 1 հ.—Նորանց միտքը բեր, որ իշխանութիւններին և պետութիւններին հրեազանդեն, հպատակեն:—

Ա. Պետրոս 2 դլ. 13 և 14 հ.—Արդ հնազանդեցէք ամեն մարդկային կարգի՝ Տիրոջ համար. թէ թաղաւորի ինչպէս թէ մի վերնագոյնի. թէ կուսակալների ինչպէս նորանից ուղարկուածները՝ չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար:

Ամուսնացած տղամարդկանց համար:

Ա. Պետրոս. 3 դլ. 7 հ.—Մարդիկ, իմաստութիւնով ընտելուեցէք կանանց հետ. ինչպէս տկար անօթի՝ կանանց պատիւ տարով, իբրև կեանքի շնորհքի ժառանգակիցներ. որ ձեր աղօթքը չ'խափանուի:—

Կորնթաց. 3 դլ. 19 հ.—Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, և դառն մի լինիք նորանց դէմ:—

Պսակուած կանանց համար:

Եփեսաց. 5 դլ. 22 հ.—Կանայք, հնազանդեցէք ձեր մարդկանցը ինչպէս Տիրոջը:

Ա. Պետրոս. 3 դլ. 6 հ.—Ինչպէս Սառան հնազանդ էր Աբրահամին, նորան տէր կոչելով, որի որդիներ էք եղել դուք, որ բարեգործ լինէք և ոչ մի երկիւղից չ'վախենաք:—

Ծնողաց համար:

Եփեսաց. 6 դլ. 4 հ.—Եւ, հայրեր, մի բարկացնէք ձեր որդկանցը. այլ մեծացրէք նորանց իրատով և Տիրոջ ուսմունքով:

Որդոց համար:

Եփեսաց. 6 դլ. 1, 2. 3 հ.—Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին Տէրով. որ այն է

արժանը: Պատուիր քո հօրը և մօրը, սա է առաջին պատուիրանքը խոստմունքով, որ քեզ լաւ լինի, և երկար ապրես երկրի վերայ:—

Ծառաների, աղախինների, բանուորների և մշակների համար:

Եփեսաց. 6 զլ. 5, 6, 7 և 8 հ.—Ծառաներ, հրնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին, վախով և դողալով ձեր սրտի միամտութեամբ ինչպէս Քրիստոսին. ոչ թէ աչքի առաջին ծառայելով մարդկանց հաճոյ լինողների պէս, այլ ինչպէս Քրիստոսի ծառաներ, որ Աստուծոյ կամքըն են անում սրտանց, յօժարութեամբ ծառայելով Տիրոջը և ոչ թէ մարդկանց, դիտենալով որ ամեն մէկն ինչ բարի որ անէ, նոյնը կ'ընդունի Տէրիցը. թէ ծառայ լինի և թէ ազատ:—

Տանտէրերի և տանտիկիներին համար:

Եփեսաց. 6 զլ. 9 հ.—Եւ դուք, տէրեր, նոյնն արէք նորանց՝ թողելով սպառնալիքը. դիտացէք որ հէնց ձեզ ինքներիդ էլ Տէր կայ երկնքումը, և նորա առաջին երեսպաշտութիւն չ'կայ.

Երիտասարդների համար:

Ա. Պետրոսի. 5 զլ. 5, 6 հ.—Այսպէս էլ դուք,

երիտասարդներ, հնազանդեցէք ծերերին, ամենդ իրար հնազանդելով խոնարհութիւնը հագէք, որ Աստուած ամբարտաւաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս: Խոնարհեցէք Աստուծոյ հօր ձեռի տակ, որ ձեզ բարձրացնէ ժամանակով:—

Այրի կանանց համար:

Ա. Տիմոթէոս. 5 զլ. 5, 6 հ.—Իսկ նա որ ճշմարիտ որբեայրի է և մինակ մնացած, նա յոյսը Աստուծոյ վերայ է դնում, և զիշեր և ցերեկ աղօթքին և աղաչանքին հետևում: Բայց փափկասէր որբեայրին կենդանոյն մեռած է:

Առ հասարակ ամենքի համար:

Հռովմայեց. 13 զլ. 9 հ.—Քո ընկերը սիրիւ քո անձի պէս: Սէրն իր ընկերին չար չի անիլ: ուրեմն օրէնքի լրումը սէրն է:

Ա. Տիմոթէոս. 2 զլ. 1 հ.—Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղօթք անել, ամեն մարդկանց համար.—

Օգնիր ինձ քոնը լինիլ,
 Աստուած հաւատարիմ.
 Մի թող ինձ քեզնից զատուիլ.
 Խօսքիդ մէջ թող վարժուիմ.
 Տէր, մի թող ինձ տատանուիլ.
 Արա՛ ինձ հաստատուն,
 Եւ վարժեցրո՛ւ ինձ գովել
 Յաւիտեան քո անուն:



504

Carroll
599.5

W.D.

ref

4810

2013



«Ազգային գրադարան»



NL0031876

4651